



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գրքի վերջին
հայտնված տարբերակ
1903 թ.




28 APR 2018

ՔԱԶԲԵՐՈՒՆԻ

495

ԱՐՁԱՆՈՒՄ

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Արտատուած
Ազգային հանդիսից



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Կ. Մարտիրոսեանցի | Тип. К. Мартиросянца
1903

29 JUN 2013

Доволено Цензурою. Тифлисъ, 13 Январь 1903 г.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք .



ատ տարիների ընթացքում, պետական ճառագութեամբ կապուած, ես միջոց և պարտաւորութիւն եմ ունեցել ճանապարհորդել Երևան, Զարուր, Դարալաղեազ, Հին Նախիջևան, Հին Ջուղայ, Ագուլիս, Ալէքսանդրապոլ, Ղարս, Ներքին և Վերին Բասէն, Չիրակայ գիւղերը և Ղազախ գաւառը, նոյնպէս Չամախի իւր գաւառով հանդերձ:

Անսահման ցանկութիւններիցս մինն է եղել կարելոյն չափ ընդարձակ զննողութեան և ուսումնասիրութեան առնել ազգային սովորութիւնները, աւանդութիւնները, երգերը այդ հայաշատ գաւառներում:

Համաձայն ցանկութեանս ես գրի եմ առել այն բազմազան և բազմատեսակ նիւթերը հայ ազգի կեանքից, որոնց մի խոշոր քանակութիւն մինչև այսօր անմշակ և անտիպ մնալով, միւս մասը կարողացել եմ լրագրութեան միջոցով մատուցանել հայ հասարակութեան ընթերցող բաժնին: Վերջին կանգին եմ պատկանում իմ «Ճանապարհորդական Նկատողութիւնք» ստուար աշխատասիրութիւնը և այլ շատերը:

Այժմ ևս պատրաստելով սոյն հաւաքածուն ազգային ներքին կեանքից, տալիս եմ տպագրութեան, չաչտնելով սակայն ընթերցողներին, որ ժողովուած նիւթիցս այս կամ այն երգը, առածը, ասուածը և այլն կարող են կցկտուր տպագրուած լինել, բայց դա ինձ չէ կարող արգելք լինել նորից տպագրելու, քանի որ ես լիակատար իրաւունք ունեմ օգտուելու շատ տարիների ընթացքում գաղած նիւթերից:

Նկարագրած սովորութիւններից, որոնք ունին ազգային հասարակաց կեանքի մէջ պատմական խորութիւն, շատերը աննկատելի կերպով արդէն մոռացուել են. ոմանք սակաւ առ սակաւ մոռացուում են կեանքի նոր հոսանքի ազդեցութեան տակ, ուրեմն մոռացուածը կարող է պահել միայն գրականութիւնը:

Տ Օ Ն Ե Ր

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԳԵԱՆ ՏՕՆԸ



այսց կեանքում Քրիստոսի ծնունդն և մկրտութիւնն ունին ամենաարբազան նշանակութիւն: Այդ տէրուական տօնը կատարում է ամենայն ջերմեւանդութեամբ, և նորան մասնակցում են անխտիր և՛ մեծը և՛ փոքրը, և՛ զբողոքուող և՛ անգրագէտը, հովիւն ու քահանան և այլն:

Ո՞ւմ չէ յայտնի արգեօք, որ Յունվարի 5-ին, *Թաթարի մասն* երեկոյին, տիրացուները ժամաշապիկ հագած երկերկու, երեք երեք, երբեմն և քահանայք, քաղաքներում պտտում են ծանօթ և անծանօթ աները «Այսօր տօն է» երգում ու վարձատրում: Կար ժամանակ, որ Ղախախի գաւառում երկերկու տիրացուներ, ժամաշապիկ հագած, խուրջինը ձգած մի խոնարհ իշու վրայ, մի աւելի խոնարհ իշապան առաջ ձգած պտտում էին մի երկու շարաթով, զիւզից զիւզ, տնից տուն և «Այսօր տօն է» երգելով՝ ժողովում էին ալիւր, ցորեն, զարի և այլն:

Քրիստոսի ծննդեան աւթիւ հայ ժողովրդի բանաստեղծական սղին յօրինել է պանագան տեղերում ժողովրդական անպաճոյճ երգեր:

Ծննդեան երեկոյին պատանիները խումբ խումբ պտտում են զիւզի աները և այն կարգով, որ նոցանից ներս է մտնում տուն մինը կամ երկուսը, իսկ մնացեալ խումբը բարձրանում է տան տանիքը և փոքրիկ ծակից կախում թօկով կամ զօտիկներով *տոպրակ* (Ղաղախ, Աշտարակ և այլն) կամ *գուլպայ* (Չարուր) կամ *քթոց* (սալա) մէջը վառ ճրագ (Պարպեազազի խաչիկ զիւզում) և խմբից մինը երգում է հետևեալը.

Ըօսարակ եւ Երջակայ գիւղերում

Ալելուեա ալելուեա
Եւ ցնծացէք, ուրախացէք,
Մեր Մարիամի պասն բացէք,
Մարիամ զնաց լեռն ի ծնունդ,
Ծննդեցաւ, ազատուցաւ,
Հրէս եկաւ մի ձիաւոր,
Լախտը ձեռին բող ձիաւոր,
Աջու ձեռին աւետարան,
Չախու ձեռին սաղմոսարան,
Չինի, չինի, ձեր տղեքանց անունն ինչ ա.

Տան բնակիչներից մինը յայտնում է գերդաստանի ամենափոքրի անունը, սրկց յետոյ երգիկիցը նորից շարունակում է.

«Արուսեակին» ու «Արմաշիսին» բաղբը հանենք,
Աջու ձեռը ջէբը տանենք,
Գուշանի աչքը հանի,
Տասը շահին չարը տանի:

Կանայք գնում են տոպրակի, գուլպայի կամ քթոցի մէջ մրգեղէն, քարցրեղէն, փլաւ կամ այլ չոր կերակուր: Զուարճութեան համար երբեմն դնում են կատու:

Վաղարցապատում

Հրէս եկաւ մի ձիաւոր
Լախտը ձեռին բող ձիաւոր
Աջու ձեռին աւետարան,
Չախու ձեռին սաղմոսարան.
Չինի, չինի, ձեր տղեքանց անունն ինչ ա:
«Արշախիբը» նստի թաղտը,
Ձեռը տանի ջիբը.
Մի բուռն ոսկի հանի,
Չարը տանի, բարին բերի:

Ղ ա զ ա խ

Ալելուեա, ալելուեա
Աշէն, աշէն էս տնաշէն
Սեղան քաշեն էս տնաշէն,

Հրէս իրի մի ձիաւոր,
 Լախտը ձեռին բօզ ձիաւոր,
 Աջու ձեռին աւետարան,
 Չախու ձեռին սաղմոսարան,
 Ըստով գրեց, ընդով ջնջեց,
 Քոռն ու քաչալ սրղըցրեց:
 Սւազ մոնթին կաշաւքեցին.
 Իբա Մարիամ ուղարկեցին.
 Մարիամն իրի լալով, լալով,
 Լալ մի, լալ մի ճրճկեօհալով.
 Որ ոտ փոխէր արքն հաղէր,
 Փունջ մանիշակ ետնէն հաղէր.
 Հրէս իրի իրիցընին,
 Իրար իղուս գեանգիշ անին
 Կաթնաղբիւրը փըլքըցըրին.
 Օրհնել Աստուած կեարունքացաւ.
 Երգեան կիւթան մեգնուեցաւ,
 Ջուխտ օրօրոց օրօրուեցաւ,
 Տընըշէն, տընըշէն, ձեր փստըկի անունն ինչ ա:

«Գուրգէն» ու «Տիգրան»
 Նօրը տայ, մօրը տայ,
 Ծաղկեն ծլեն,
 Ձեռը ջիբը տանեն,
 Չալ աբասին հանեն.
 Չարը տանի մի թունդի գինի,
 Մի գլխալ եղ, երկու ձու,
 Երկու ձուկը մի ջամ ալիւր,
 Ով որ էսքան ասածս չ'տայ,
 Կազ գէլը մօրը տանի:

Ըարուրի Ուլնիւ-Նորաշէն գիւղում, որ դաղթած են Սալ-
 մաստի գաւառից, Ծննդեան երեկոյն երգում են հետեւեալ եր-
 կու երգերից փոփոխակի մինը կամ միւսը:

Ալը մարեմ, մարեմ, մարեմ.
 Ձեր տղաչի սօլը կարեմ,
 Փշատ տուէք փորս լարեմ,
 Չամիչ տուէք ատմըներս շարեմ,
 Ընդեօզ տուէք գլուխ կօւեմ.
 Աստուած ձեր խարսնը փեսան պախի:

Միւս երգը.

Կրնէկ Կրնէկ էն տարեցին, ալելիա,
 Ըինեցին կամարեցին, ալելուիա,
 Բարձր բոլորը բերեցին, ալելիա,
 Կրնէկ քեզի՝ սուր յէր մսուրք, ալելուիա,
 Որ Քրիստոս քեզ մէջ ճնուեցաւ, ալելիա.
 Կրնէկ քեզի՝ բրութ խանձարութ, ալելիա,
 Քրիստոս քեզ մէջ փաթաթեցին, ալելուիա,
 Կրնէկ քեզ Խորոմսիմայ, ալելուիա.
 Որ Քրիստոսին տատմեր էլար, ալելուիա,
 Քրիստոս քեզ մէջ մկրտեցին, ալելուիա.
 Կրնէկ քեզի սուրբ Օհանէս, ալելուիա,
 Որ Քրիստոսին քաւոր էլար, ալելուիա.
 Կրնէկ քեզի, սուրբ Յորդանան, ալելուիա,
 Աստուած ձեր խարսնը փեսան պախի
 Մեր փաչը տուէք:

Պարալազեազի խաչիկ գիւղում, որ բնիկ հայեր են.

Յնճացէք, ուրախացէք, ալելուիա,
 Մեր Մարիամի պասը բացէք, ալելուիա,
 Մարիամ գնաց դուս տաճարին, ալելուիա,
 Մէջքն տուեց խաչափայտին, ալելուիա,
 Հնչեց բերեց Յիսուս որդին, ալելուիա,
 Յրանիք (երանի) քէ, հոռոմսիմա, ալելուիա,
 Որ Քրիստոսին տատմէր ըլար, ալելուիա,
 Յրանիք քէ, բուրթ խանձերուն, ալելուիա,
 Քրիստոս միջին փաթաթին, ալելուիա,
 Յրանիք քէ, գետ Յորդանան, ալելուիա,
 Քրիստոս միջին մկրտին, ալելուիա,
 Յրանիք քէ, սուրբ Յոհաննէս, ալելուիա,
 Քրիստոսին քաւոր էլար, ալելուիա,
 Յրանիք քէ բարձր օրօրոց, ալելուիա,
 Քրիստոսին միջին օրօրին, ալելուիա
 Ասին չուրազ, առին սղոց, ալելուիա,
 Ինացին ճառնի խնկան, ալելուիա,
 Յուրազ տուին, ճառնի ճչաց, ալելուիա
 Սղոց քաշին, արիւն բխաց, ալելուիա.
 Ձեր տղի անունն ինչ ա.
 «Ռուբէն» ու «Պարոյր» ձութեր ձութացաւ, ալելուիա.
 Քանց բարդի ճառ, էրկենացաւ, ալելուիա.

Ճիւղքեր գցեց քաղքէ քաղաք, ալելուիա,
Ամէն ճղքին ջուղտմ ճրագ. ալելուիա,
Մեր փալը տուէք ինչ կամենաք:

Ղազախու «Սև քար» գիւղում լիշեալ երգի վերայ աւելացնում են հետևեալը.

Պէնպէնակ,
Ասծու հարակ ծտենակ,
Ընկերս ընկաւ ծովը.
Ծովը դառաւ ծիրանի,
Մաղէն իրի կըռքկտուց,
Հաւը թռցրուց,
Ջուխտը ո... պրցրուց:

Սուրբ Էջմիածնի շրջակայ գիւղորայքում ընդունում են, որ Յունուարի 5-ին, Ծննդեան նախընթաց երեկոյին գետերի, առուների և միևս հոսող ջրերը միաժամանակ կանգ են առնում մի վայրկեան տևողութեամբ: Եթէ կարողանաք իմանալ այդ վայրկեանը և հոսող ջրի մէջ դնէք մի իր, օրինակ սալոր և, հէնց այդ ջուրը կանգնելու վայրկենին ասէք. «Սափորը ոսկի դառնայ»՝ նա իսկոյն ոսկի կը դառնայ:

Ղիրակայ գիւղերում տղայքը փայտեայ կփերով, որ նորանցում կոչւում է «քիւլակ», «քուղայ», գետից ջուր են բերում տուն այն յուսով, որ ջուրն էլ, ամանն էլ ոսկի դառնան:

Դարալագեագցիք ընդունում են, որ այդ գիշերը կանգ են առնում ոչ միայն ջրերը, այլ և բոլոր առարկաները. քամի, օդ, ծառ, քար, խոտ և այլն: Սոքա ևս ընդունում են որ առարկաները ջրի մէջ ոսկի են դառնում, միայն ոչ թէ Ծննդեան, այլ Համբարձման երեկոյին, երբ երկու աստղ՝ Լէյլին և Մէջլումը երկնքումը իրար կըհամբուրեն: Քասենումը նոյնպէս ընդունում են ջրի կանգնումը, սակայն նորանց կարծիքով այս իրողութիւնը կատարւում է կաղանդի գիշերը՝ գեկտեբերի վերջին գիշերը:

Քասենում համոզուած են, որ եթէ մանուկը ծնուի Ծննդեան երեկոյին կամ Զատիկի խթման կամ թաթախման երեկոյին, որ սեռի և լինի նա, եթէ նորա ձեռի եղնկին քսեն

նոր մորթած սև հաւի արիւն՝ այդ մանուկը կըդառնայ եղունկով հմայող:

Վերջապէս Ծննդեան այդ անհանգիստ երեկոն անցնում է և հետևեալ օրը կատարւում է Քրիստոսի սուրբ մկրտութեան հանգէսը:

Ղազախում Զրօրհնեաց հանդիսում, երբ երգւում է «Առաքելոյ աղանոյ» և քահանան սուրբ մեռօնը կաթացնում է ջրի մէջ, ամեն սեռի ու հասակի բնակիչք իրարից առաջ կտրուկ անելով աշխատում են ամաններով ջուր վերցնել և տանելով տուն՝ ածում են մի փոքր խաշի՝ այսինքն թթուխմորի մէջ, մի փոքր ալիւրի մշտական ամանի մէջ, մի փոքր խմորի տաշտի մէջ և մնացածը շաղախում են մոխրի հետ և գնդակ շինելով պահում են, որ հարկաւոր ժամանակ նորանով սրբապօղծեն այն ամանները, որոնց պատահմամբ դիպել և նարամել է շունը կամ մուկը:

Ղիրակում և սուրբ Էջմիածնի շրջակայ գիւղերում Ծննդեան տնօրհնութեան ժամանակ, երբ քահանան ընթեռնում է աւետարանը, տան կանայք թթուխմորը իւր ամանով բերում դնում են նորա առաջ, որ վրան աւետարան կարդացուելով հացի առատութիւնը անպակաս լինի:

Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԸ.

Ղազախ, Ղիրակ, Վաղարշապատ, Դարալագեագ և այլ տեղեր Սուրբ Սարգսի պատի ուրբաթ երեկոյին պաղ ջրով փոխիւն են շաղախում և նորանով թաթախում: Փոխիւնը (Ղազախում փոխինձ), ինչպէս յայտնի է, լինում է բոված և երկանքով աղացած ցորենի ալիւրը: Այդ երեկոյին փոխիւնդի ալիւրը դնում են Աշտարակ՝ աստղերի տակը, Ղիրակում՝ դուռը բաց տան մէջ, իսկ այդ տեղերում՝ տան մէջ կամ եկեղեցում, որպէս զի գիշերը սուրբ Սարգիսը ձի հեծած դայ և փոխնդի վրայով անցնի: Անցնելու ժամանակ նորա ձիու մի ոտը դիպչում է փոխնդին և սորա վերայ թողնում է պայտի հետքը:

Սուրբ Սարգսի երեկոյին երիտասարդ տղայք և աղջկունք ուտում են աղի հաց և գիշերը ծարաւում են և երազում, ո՛ր տղան աղջկան, կամ աղջիկը տղային ջուր տայ խըմելու, նա էլ կը լինի նորա ապագայ ամուսինը:

Չտբաթ առաւօտ եփում են փոխնդից շփոթանման կերակուր—խաշիլ— և ուտում են: Մի քանի դաւառներում երիտասարդ տղայք կամ աղջկունք լաւաշի կտորի մէջ փաթթում են խաշիլը և դնում են տան երգիկը, կտուրը: Կաշաղակը կամ ագռաւը կտցում և փախցնում է խաշիլը և որ տան կողմը նա թռաւ, այն տան տղան կամ աղջիկը կըլինի նորա ամուսինը:

ՏԵՆՈՒՆԻՍՈՒԱՋԻ ՏՕՆԸ

Տեառնդաւաջ բառը աղաւաղուած կոչւում է Ղաղախում տօռոնջ տօռոնջ, Հին Ջուղայում՝ տառինջ տառինջ, Վաղարշապատում ղըրընդէգ, Դարալեագաղի բնիկների մէջ՝ դառդառանջ, գաղթականների մէջ՝ տերինտառաջ կամ տանտառէջ:

Հին Ջուղայում փշէ դէզը պարտաւոր են պատրաստելու եկեղեցու գաւթում նոյն տարում պակուած երիտասարդները: Հանդիսակատարութեան ժամանակ նոյն երիտասարդները վառմամբը ձեռքում շարքով կանգնում են դէզի առաջ: Երբ քահանան կարգը կատարելով իւր մոմով առաջինը վառում է դէզը, նորանից իսկոյն յետոյ վառում են և նորապսակները, այլ ևս ոչ ոք:

Երիտասարդները վառած մոմերով վերադառնում են տուն, ուր պատրաստած կան փոքրիկ դէզեր և այդ մոմերով վառում են նորանց. փոքրիկ դէզերը առանց բացառութեան պէտք է լինին իւրաքանչիւր տան տանիքի վերայ: Վառած դէզի վերայով լոր են տալի, այսինքն ցատկում են: Նորապսակ երիտասարդի բարեկամները բերում են այդ երեկոյին նորահարսի համար տեսակ տեսակ ուտելեղէն, որ կոչւում է խոնչաւ: Երեկոյեան արձակում են հրայաններ:

Ղաղախի դիւղերում դէզը վառւում է միմիայն եկեղեցու մօտ: Նորա վառելու արտօնութիւնը նոյնպէս տուած է նորա-

պսակ երիտասարդներին, որոնցից յետոյ սակայն՝ կարող է վառել ամեն ոք: Գէղի ծուխի թեքովը նշան է այս կամ այն կողմի բերրիութեան: Բոցը վերջանալուց յետոյ սկսում են ցատկել վրայով:

Ապա մի մի կիսայրած փայտ դիզից վերցնում տանում են իւրեանց տները և պահում են սպահով տեղ կամ դնում են հաւերի բներում, որպէս զի հաւերը շատ ձու ածեն ու շուտ թուխի գան: Մի կտոր էլ դնում են խաշի մէջ, որ հացը առատ լինի:

Ձիրակում և Բասէնում դէզի վառելու իրաւունքը նոյնպէս տուած է նորապսակներին: Այնտեղ քաւորակինը հարսի համար բերում է խոնչաւ և հարսին երգիկ է գուրս հանում:

Վաղարշապատ և շրջակայ դիւղերում նորահարս ունեցող տունը հրաւիրում է աղջկունք և հարսներ ղըրընդէգի տօնը կատարելու: Քաւորը բռնում է նորապսակ տղայի և սա իւր սովանու, նորահարսի, ձեռքը և երեքը միասին երեք անգամ պտտում են իւրեանց բոցավառ դէզի շուրջը և երեք անգամ վրայով ցատկում են:

Ապա հրաւիրուած աղջիկները և հարսները դեզ են քում՝ սկսանում են աչքի թերթեւունքները և պարահանդէս բանում: Տան նորահարսը պարտաւոր է ինքը աչքագեղը մատուցանել և մինչև անգամ ցանկացողին քսել:

Գէղի վրայով ցատկերը նորա համար է՝ որ ազատուին ամէն տեսակ չլաւից (սչ լաւ, չար բան): Մի քանի օրուայ ծննդից ազատուած կնոջը նոյնպէս թուցնում են դէզի վրայով՝ որ քառասունքից դուրս գայ և չլաւից ազատուի: Քաւորակինը խոնչաւ է բերում սանամօր համար և միայն նա ունի իրաւունք նորահարսին դուրս բերելու երգիկ՝ դէզի վերայ:

Դարալագեագի գաղթական ժողովրդի մէջ, օրինակ Ազատէկ, Մարտիրոս, Կորագիդ, Սէս դիւղերում, դէզ վառելու իրաւունքը քահանայից յետոյ յատկացրած է նոյնպէս նորապսակ երիտասարդներին, որոնք, Ջուղայեցուց նման, վերադառնում են տուն վառած մոմերով իւրեանց դէզերը վառելու:

Երբ քահանան կարդում է աւետարանի այն տեղը, ուր

Սիմէօն ծերունին ասում է Մարիամին «և ընդ քո իսկ անձն անցցէ սուր», իսկոյն իւրաքանչիւր մարդ ծածկաբար կտրում է դանակով մոմի կտորը և մօտը պահում, որ *օձը երբէք չըկծէ նորան*: Նոյն նպատակի համար ամենքը ևս՝ հարս, աղջիկ, կին, տղամարդ, երեխայ, դէզի կրակով այրում են իւրեանց շորի որևէ մասը: Իսկ խաչիկ գիւղում այրում են խոնջանի ծայրը:

Եթէ որևէ հիւանդ կայ տանը, նորան *երդիկով դուրս են բերում*՝ տան տանիքը՝ դէզի մօտ, որ լաւանայ: Գէզը վառելու միջոցին հրացաններ են արձակում, որոնց ձայնից շները վախենում են և մի կողմի վրայ են փախչում: Փախուստը դէպի որ կողմը կատարուի, այդ տարուայ հողային առատութիւնը այդ կողմից կարելի է սպասել: Նոյն նշանակութիւնն ունի և դէզի ծխի ուղղութիւնը քամու աղբեցութիւնից:

Քարեկամները նորահարսին դուրս են բերում երդիկ, պտտցնում են դէզի շուրջը և այրում են խոնջանի ծայրը: Վերջապէս խարոյկից մի կրակ են ձգում տան մէջ *անպատճառ երդիկից*, որով վառում են այդ երեկոյի մօմը, որպէս զի բախտը տան վերայ լինի:

ՄԵՏ ԳԱՍԸ.

Քասենում մեծ պասի առաջին օրը իւրաքանչիւր տան թխում են *եօթը* հատ ալանի բաղարձ ի նշան եօթը շաբաթի և այդ օրը խաշով հաց չեն ուտում: Երգիքից կախում են թելով մի սոխ, մէջը ցցած եօթը փետուրը. նա կոչւում է *ախելում*: Իւրաքանչիւր շաբաթի վերջը մի փետուրը հանում ձգում են: Փետուրների վերայ գրած մանրիկ քարերը շարժուելուց վայր ընկնելով վախեցնում են երեխանց, որ նոքա ճշտութեամբ պահեն պասը:

Ղաղախում նոյնպէս կախում են սոխը փետուրներ ցցած և անուանում են նորան *պապի պտը*, որից իւրաքանչիւր շաբաթ մի փետուր ձգում են: Այդ երկրում մեծ պասի առաջին օրը ընդունում է *կրակի* կիւրակի և ով չընդունի նո-

րան, նորա շորերը շուտ շուտ կ'այրուին. երկրորդ օրը *Ջրինն* է, չպահողին ջուրը կրտանի: Երրորդ օրը, մկանն է, մկները կուտեն թեյ, հաց, շոր և այլն: Այդ օրը, չորեքշաբթի, կանանցից ով չգնայ եկեղեցի և չլի *առաջին* անգամ ասած «Տէր ամենակալը», նա չի կարող *Ջահը* (ճախարակ) մանել: Չորրորդ օրը, հինգշաբթի, առաջին գործը պէտք է լինի ճախարակ մանել, որովհետև նորա մէջ միայն կարելի է գտնել *ըսրաքեա*, առատութիւն:

Աւելացնեմ այստեղ, որ Ղաղախում սովորութիւն է կանանց մէջ, որ ամբողջ տարի չորեքշաբթի և ուրբաթի երեկոյին դործ չպէտք է կատարել, ըստ որում չորեքշաբթի արածը *ըսրաքեա* չի ունենալ, իսկ ուրբաթն ունի վատ հետեւանք, կրակին դու կգնան շոր, կայք, երեխայ և այլն:

Ջիրակացիք և Ղարսեցիք մեծ պասի առաջին շաբաթի շաբաթ օրը անուանում են *Թալալօսի կիրակի*, ով չպահի, *կիթալլանայ*, սոխինքն նորանց կարծիքով կըցնդի:

Մեծ պասի 24-րդ օրը հինգշաբթի, իբրև մեծ պասի կէսը, կոչւում է *միջինը*. Գարալագեազի բնիկ հայերի մէջ սովորութիւն կայ, որ մեծ պասի 23-րդ օրը, չորեքշաբթի երեկոյին եկեղեցում շինում են *լիձք*, այն է լազանի մէջ ածում են ջուր և ձէթ ու եղեգնէ խաչի մէջ պատրոյիր լիձքում վառում են մինչ լոյս: Առաւօտեան լիձքի ջուրը մաս մաս բաժանում են դիւզի բոլոր տների վերայ, ուր այդ ջուրը խառնում են բաղարջ խմորի հետ:

Ղաղարշապատի գիւղերում, հին Ջուղայում, Գարալագեազի բնիկ և գաղթած հայերի մէջ այդ օրը թխում են մի մի հատ մեծ բաղարջ, որ Ղաղարշապատում անուանում է *միջունք*, Գարալագեազի բնիկների մէջ՝ *միջնաք սոջ*, իսկ գաղթածների մէջ՝ *կլօմ*:

Քաղարջի մէջ դնում են ուլունք կամ գրամ և բաժանում են տան բոլոր անդամների վերայ: Մի քանի տեղ բաժին են հանում նաև անասուններին, հողին և այլն: Ուլունքը կամ գրամը, որ խաչիկ գիւղում կոչւում է *դեօլվաթ*, ում բաժնի մէջ դուրս գայ, այն տարուայ առատութիւնը նորա գլխին է:

Ջուղայումը հաւատում են, որ բաղարջը կտրելու ժամանակ ուլունքը կամ գրամը ընկնի կտրող գանակի բերանը, որ նոյն է թէ գութանի խոիրը, այն ժամանակ նորանց ապրուստը պետք է սպասել հողից:

Չիրակցոց և Բասենցոց մէջ ևս գործադրում է բաղարջի մէջ *բաղդ* դնելու սովորութիւնը, սակայն նորանցում բաղարջը թխում են դէկտեմբերի վերջին օրը, իսկ բաժանում են Յուսուարի 4-ին, երեկոյին:

Հիճըը սովորական է նաև Արարատեան գաւառում և Բասենցոց մէջ, նորանում վաւում է 40 պատրոյկ, բայց ջուրը չեն բաժանում: Երիտասարդ աղջկունք և տղայք հաւաքում են այս կամ այն բարեկամի տունը, իւրաքանչիւրը նոցանից ժողովում է 40 մանրիկ քարեր ի վիշատակ 40 մանկանց և մի քարի վրայ 40 անգամ ծունր են կրկնում, ուրեմն 1600 ծունր, որպէս զի 40 մանկանց աղօթքը լինի նորանց վերայ: Ծունրի ժամանակ նոքա կրկնում են հետևեալը

Քառսուն մանուկ, քառսուն կուս,
Քառսուն մանկան բարեխօս:

Գարալագեազի գաղթական ժողովրդի մէջ սովորութիւն է որ Գրիգոր Լուսաւորչու օրը (մուտն ի վիրապ) նորահարսի սկեսուրը հրաւիրում է իւր տուն բարեկամ կանանց, հարսնամօրը և սորա բարեկամ կանանց և զանազան ուտելիքէններ պատրաստելով գնում են կանաչազարդ գաշտը դրօններու:

Այդ դրօսանքի անունն է *գեպշտ*: Գորա մասին ասում են հետևեալը:

„Տարսները կնացած է գեաշտ,
Ի՛նչ են բերած, ջուխտ ջուխտ լաշ. (տղայ)
Անուները ի՛նչ,
Մէկին գաննակ, մէկին պամբակ“:

ԾԱՂԿԱՋԱՐԳ

Ճաղկազարդի տօնը Գարալագեազի գաղթական ժողովրդի մէջ ունի մեծ նշանակութիւն, մանաւանդ երիտասարդ տղայց և աղջկեանց համար, որ ճաղկազարդի առաւօտ,

եկեղեցում, ամեն մի նշանուած աղջիկ իւր փեսացուի ծնողներից ստանում է զարդարուած մոմ: Իսկ ժամասացութիւնից յետոյ իւրաքանչիւր նորահարս, այսինքն նոյն տարի պսակուած, *առաջի* անգամ՝ ուղղակի եկեղեցուց գնալու է իւր հօր տունը, իւր ծնողաց մօտ: Եթէ մէկը վստահանայ ճաղկազարդից առաջ գնալ, այդպիսին անշուշտ կ'ենթարկուի հասարակաց բամբասանքի:

Վաղարշապատի շրջակայքում հարսի հօրանց տուն գնալու սովորութիւնը երբեմն այնքան խստութեամբ է լինում, որ դժբաղդ դէպքումն անգամ (մահ, ծանր հիւանդութիւն և այլն) նորահարս աղջիկը ստիպուած է լինում գալ հօր տունը՝ միայն զիշերը և նոյն զիշերը վերադառնալ:

Վաղարշապատի շրջակայքում և Վաղարի մի քանի գիւղերում սովորութիւն կար, որ եկեղեցու մէջ, «Փառք ի բարձունս» երգելու միջոցին, պատանի տղայք ածում էին *Պօժախակ* և *ձեռ*:

Ճօճանակը ձեռքի թաթի չափ, կոթով մի տախտակ է, որի երկու կողմից թոյլ կապած են մի մի տախտակ և այս տախտակները, շարժելու, ճօճելու ժամանակ զարկում են միջին տախտակին: Իսկ ձեռը փայտի փոքրիկ գլան է, վրան փորուած ատամներով, որոնց արանքը փոխ առ փոխ ընկնելով փոքր տախտակի ծայրը՝ պտտեցնելու ժամանակ, ձայն է հանում, *ճոճոճ* է:

Ծագկազարդի օրը պատանի տղայքը, Վաղարշապատում, խումբ խումբ պտտում են տնէտուն, ձեռքներին բռնելով ուռեր, ծայրը օղակացրած, երգում են այս երգը և ժողովում իւրեաց համար ձու:

Անակ անակ ճօճանակ,
Աստճու դուռն բաց անեմ.
Մննեմ մէջը ժամ անեմ.
Դուրս գամ պատարագ անեմ,
Ընկերս ընկաւ ճովը,
Ծովը ճիրանի դառաւ,
Պատերը հացի դառաւ,
Բօզօն եկաւ կեռ կտուց,

Հաւը տեղից թռցրուց.

Տակիցը մի ձու պլցրուց:

Սշտարակ և շրջակայքում երգում են հետևեալը.

Անակ անակ ճօճանակ,

Աստծոյ դուռը բանանք,

Մտնենք ժամ անենք,

Դուրս գանք պատարագ անենք,

Չալ եզր մորթենք, մատաղ անենք

Պոզերը չարգախ անենք,

Միջին նստենք քեարգահ անենք.

Մատաղը սիրողը երկու ձու տայ,

Ջատիկէ խաղանք քէֆ անենք

Մինն ինձ, մինն իմ ընկերին,

Ով տայ՝ զեղի բարձին նստի,

Ով չտայ՝ չոր քարին նստի:

Ղարսից գաղթած ժողովրդի մէջ՝ Ալէքսանդրապօլում, նոյն Ծաղկաղարդին երելայքը ճօճանակ ածելով պտտում են տնէտուն և ժողովում են հաւկիթ ու «հատիկ», որ է խաշած ցորեն, որին երբեմն խառնում են սիսեռ, չամիչ և այլն և երգում են այս երգը:

Ճրռ ճրռ ճրչեռնակ,

Ասծոյ հալալ պիպեռնակ,

Ընկերս ընկաւ ծովը,

Ծովէն ելաւ ծիրանայ,

Խունկ առէք, մոմ առէք.

Տասներկու պատարագ արէք,

Իմ կարմիր հաւին հաւկիթը դուրս բերէք,

Ով որ բերէ՝ շէն մնայ,

Ով չբերէ՝ հաւի փորին դէմ կենայ:

Դարալագեաղի խաչիկ զիւղում ծաղկաղարդի պատարագից լեռոյ, պատանիները ձեռ և ճօճանակ ածելով շրջում են տները, ձու են ժողովում և երգում են հետևեալը.

Ճըջանակ, անակ անակ,

Կեղեցոյ դուռը բանանք.

Մննենք մէջը աղօթք անենք,

Դուս կանք չալ եզր մատաղ անենք,

Պոզերը չարգախ անենք,
Վրէն պատարագ անենք,
Հաքուն խրագան անենք,
Չալթուկ թակենք տանք հաւերին,
Հաւերն ինձ մի ձու ձու տայ
Չուձուն տանենք տանք պառաւին,
Պառաւն ինձ մի կաթայ տայ,
Կաթէն տանենք տանք խառատին,
Խառատն ինձ մի շիվի տայ,
Ճիվին տանենք տանք չօբանին,
Չօբանն ինձ մի գառը տայ,
Գառը տանենք տանք Աստրճուն,
Աստրճուն ինձ մի աղբէր տայ,
Աղբեր, աղբեր, ջան աղբեր,
Դու բերթի գլխին աղբեր,
Ես բերթի տակին աղբեր.
Հուռում հուռում կանչեցինք,
Հուռումի ձին թամբեցինք
Հուռումը կնաց բանջարի,
Բանջար չիլաւ, խոտ իլաւ,
Խոտի տակին ծիտ ըլաւ,
Ծըլվըլալէն դուս թռաւ,
Հանգիստներին լիս ըլաւ.
Բերէք տուէք մեր երկու ձուն,
Աստուած պահի ձեր հարսնացուն:

805/19
9102

Վէլի Բատարի Դաւալու զիւղում, սրտնք գաղթած են Մակուից, երեխայքը խմբովին, ձեռներին ուռի ճիւղեր, ծայրերը օղակ շինած, պտտում են տնէտուն ձու ժողովելու և երգում են.

Կարկաջայ կարինկաջայ.
Սև եզան սև սամաթեռ
Կարմիր եզան օղն ու կօճակ,
Ով որ չտայ իմ երկու ձուն,
Մուկն ու կատուն իրանց թթուն,
Ով որ կտայ իմ երկու ձուն՝
Աստուած պահէ իր փեսացուն:

Բասենում երելայքը նոյն ձևով և ուռի ճիւղի օղակներով պտտում են և ձու ժողովում ու երգում.

Կարկաչայ կարինկաչայ,
 Սև եզան սև սամոգայ
 Կարմիր կովին եղն ա մօղա.
 Ով որ ինձի հակիթ կտայ
 Աստուած իրեն աւելի տայ:

Ջ Ա Տ Ի Կ

Սուրբ Յարութեան կիրակի օրը շատ եկեղեցիների մօտ ժողովուրդը ընդհանուր հասարակութեամբ մատաղ են մորթում և մատաղի միսը բաժանում են հասարակութեան բոլոր անդամներին: Մատաղը շատ տեղ կոչւում է *ախառ*:

Փարալագեազի Խաչիկ գիւղում մատաղացու կովի կամ եզան ստամոքսը, որ կոչւում է *թափան*, մեծ յարգանք է վայելում հասարակութեան աչքում: Մատաղ մորթողները իրարից դողանում են *թափան*ը: Չատ անգամ երեցփոխը ինքն է վերցնում նորան իւրեան համար, կամ տալիս է իւր սիրելի մարդուն: Բաղդաւոր է այն տունը, որ այս կամ այն ճանապարհով ձեռք է բերել *թափան*ը: Եթէ նորանից սերէք (կճուճի բերանացու) շինեն և ծածկեն սղուղի կամ խնոցու բերանը, իսկոյն իւրի քանակութիւնը կըշատանայ և դորա հակառակ ուրիշներինը կըքչանայ:

Որպէս զի այգպիսի զրկանք չլինի գիւղում ոչ ոքի և ոչ ոք էլ ի վնաս միւսների չհարստանայ իւրով, այլ քրիստոնէաբար ամէնքն էլ հաւասար լինին, կարգադրուած է յիշեալ գիւղում, որ *թափան*ը հանեն, խորովեն և հրապարակով ամէնքն էլ ուտեն: Այգպէս են կարգադրել գիւղի խորագէտ և քաջիմաստ մարգիկ:

Հին Ջուղայում Զատիկի առաւօտ, ժամում երբ սկսում են «Փառք ի բարձունս» իւրաքանչիւր սանահայր իւր կնքաւորին անպատճառ մատուցանում է 20—30 կարմիր ներկած ձու և մի խաչաձև մոմ կոթը ամրացրած մի ձուի վերայ ու խաչի թւերը վառած: Մոմերի բազմութիւնից գիւղական անշուք եկեղեցին յանկարծ լուսաւորում է:

Բասենումը մոմ են մատուցանում եկեղեցու մէջ քաւորակինը՝ իւր սանամօրը, իսկ սկեսուրը՝ իւր հարսնացուին:

Վաղարշապատի շրջակայքում, Զատիկի կիրակի օրը, տղայոց խումբը պտտւում է տնէ տուն, ձու է ժողովում և երգում է հետևեալ երկու երգը.

Արագ, ճրագ ճշմարիտ,
 Աշմախոտիկ Մարտիրոս,
 Մեր սիրելի Քրիստոս,
 Քրիստոս գնաց հնդու քաղաք,
 Բերեց անթառամ ծաղիկ,
 Դրեց Մարիամի գլխին.
 Մարիամ, Մարիամ, դու կուս ես,
 Հողով մարմնով չուս ես
 Եթամ դադեմ բարութիւն
 Հողիս տանես արքայութիւն:

Միւս երգն այս է.

Արագ, ճրագ ճշմարիտ,
 Աշմարիտ է Մարգարիտ,
 Անմահական բանալիք,
 Տար գրախտի դուռը բաց.
 Քաղի անթառամ ծաղիկ,
 Բեր գիր գլխիս տակ,
 Քնեմ քունս տանի,
 Վեր կենամ երազս բարի.
 Ինչ խնդրեմ՝ Տէրը կատարի.
 Երկնքի դուռը բաց ա,
 Ոսկէ աթոռը դրած ա,
 Քրիստոս վրէն նստած ա,
 Ոսկէ գրիչ բռնած ա.
 Լուսաւորիչ կանգնած ա.
 Մեծ ու պստիկ գրում էին,
 Արգարներն խաղում էին,
 Մեղաւորներն լալում էին:

Փարալագեազի պարսկահայ զաղթականների մէջ սովորութիւն է, որ սուրբ Աստուածածնի աւետման առաջին երեկոյին, չորեքշաբթի, կանանցից ոմանք եկեղեցուց դուրս գալով, բոլորովին լուռ և իրարից ծածուկ գնում են մօտակայ առուն, ջուր են առնում փոքրիկ ամանի մէջ, հետն էլ երկու երեք

մանր աւազ և եթէ կայ՝ ծաղիկ ևս և ամանի բերանը ամուր կապած պահում են և հարկաւոր ժամանակ խառնում են պանրի մային, որ պանիր շատ լինի. ածում են խնոցու մէջ՝ որ իւրը շատ լինի:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ահա մի տօն, որ ունի բուն ժողովրդական բնաւորութիւն. Քրիստոսի ծննդից մինչև Համբարձում, ինչպէս տեսանք վերև, բոլոր երգերն ու սովորութիւններն ունին ըստ մեծի մասին կրօնական բնաւորութիւն.

Համբարձման տօնը զարմանալի ընդհանրացած է հայ ժողովրդի մէջ և թէպէտ կատարում է Քրիստոսի Համբարձման օրը, բայց տօնակատարութիւնը ամենևին կապ չունի Համբարձման հետ: Հեռու ամէն կրօնական զգացմունքներից՝ ժողովուրդը անձնատուր է սիրոյ զգացումներին, ինչպէս տեսնում ենք «Ջան գիւլումի» մէջ:

Ջան գիւլումի տօնը պատկանում է միայն կանանց սեռին, նորանք են կատարում ու նորանց երիտասարդ հարսներն ու աղջիկներն են գլխաւոր տօնակատարները: Երևում է որ «Ջան գիւլում» բանաստեղծութիւնը կանանց հեղինակութիւնն է:

Ջարուրի հայ գիւղերում (Ուլիա, Նորաշէն), Երևանում և այլ տեղեր զատկից մինչև Համբարձումը կանայք երեկոները կար, գործ և սորա նման զբաղմունք չեն կատարում, որպէս զի «հաւուր» չլինին: Համբարձման երեկոյին հաւուրը շրջում են — «հաւուրը շուռ են տալի» — այսինքն վիճակ ձգելու առարկաները (մատանի, գանակ, կօճակ, մատնոց և այլն) որ ջան գիւլումի ծաղիկների հետ միասին լինում են պղուղի մէջ, թափում են մաղի կամ այլ բոց ամանի մէջ և ասում այս խօսքերը.

«Հսկա, բսկա պատին տամ,
Հաւուրը, շուռ տամ,
Վախում եմ քնեմ քունս տանի,
Ընկորս տանուլ տամ»:

Նոյն Ջարուրի հայ գիւղերում զատկից մինչև Համբարձում կաթնապուր չեն եփում, որպէս զի կովերի կաթը չպակասի: Բայց Համբարձման կիրակի օրը կաթնապուր եփելը իւրաքանչիւր տան համար անհրաժեշտ է:

Համբարձման նախընթաց օրը արդէն պատրաստութիւն են տեսնում հարսները և աղջկերքը, որ միւս օրը ջան գիւլումը պատրաստ լինի: Գորա համար նորանք քաղում են զանազան ծաղիկներ, դնում են մի պղուղի մէջ, ուր ածում են և աղբիւրի ջուր: Այդ պղուղի մէջն են դնում նաև վիճակ հանելի առարկաներ, ով ինչ կամենայ, մատնոց, մատանի, դանակ, ուլունք և այլն: Ապա աշխատում են որ այնպէս թագցնեն պղուղը, որ տղայքը չզուլանան:

Ղաղախում աղջիկները դնում են միասին դաշտ ջան գիւլումի համար ծաղիկ քաղելու և փնջելու, որի ժամանակ երգում են այս.

Քնացի ծաղիկ,
Վխցայ մատս ծակի,
Հարսներին քաղել տուի,
Մոնթերին փնջել տուի.
Գորին փայ անել տուի,
Գորի փաջը կտերը,
Ծրվըլալայ ծտերը.
Տիւս պի մի թեփշի նոււր,
Որ չգնամ ես խանի դոււր:

Ջարուրի հայ գիւղերում այդ երեկոյին շատերը աշխատում են փորձել իւրեանց բաղդը «վիճակի ջրի» վերայ: Երկու երիտասարդ հարս, որոնք *անպայման* պէտք է լինին ծնողաց անդրանիկները, պղուղից ջուր են ածում ֆինջանի մէջ, որ կոչւում է *վիճակի ջուր* և երկու հարսը ձեռքերի միայն մեծ (բոյթ) մատերի վերայ պահում են ֆինջանը: Բաղդ փորձողը մատը մօտեցնում կպցնում է ֆինջանի շրթունքին ու իւր մտքում մի խորհուրդ է խորհում: Եթէ խորհուրդը կատարուելու է, ֆինջանը պտտում է աջ կողմի վերայ, եթէ չէ կատարուելու, շրջում է ձախ կողմի վերայ:

Ետեւեալ օրը, այն է համբարձման օրը հարսները և աղջիկները միասին գնում են դաշտ, այգի, կամ այլ տեղ, ուր յարմար է, դբօսնում են, ուտում են տարածները, ուրախանում են, երգում, և սպա մի յարմարին տեղում խմբւում են ու սկսում ջան գիւլում երգն ասել մի մի տուն:

Մի փոքրիկ աղջիկ, երեսը անթափանց քողով ծածկած, նստացնում են խմբի մէջ տեղը և վիճակի պղուղը տալիս են ձեռքը, որ հարկաւոր ժամանակ մատով հանում է պղուղի միջից մի առարկայ:

Երգիչ հարսները և աղջիկները երկու խմբի են բաժանւում: Առաջին խումբը անշուշտ երգ գիտեցողներ, ասում է խակական երգի խօսքերը, որ կազմում են չորս տող, իսկ միւս խումբը, առաջինից յետոյ, կրկնում է միայն ջան գիւլում ջան, ջան: Երգի տները, առանց հետևողութեան ասում են, որը մտներն է ընկնում և ասելուց յետոյ վիճակահան փոքրիկ աղջիկը պղուղի միջից հանում է ձեռքն ընկած մի առարկայ: Վերջինը ում պատկանում է, արտասանած երգն էլ, լաւ կամ վատ, նորա տիրոջը կրվերաբերի:

Այժմ յիշատակեմ այն երգերը, որոնք երկուսն են վանագան հայ կետրօններում:

Շիրակ և Բասն:

1. Ղարսայ բերդը պլել է,
Իմ եանրս մէջը քնել է,
Ձէն տուի ձէնս չառաւ,
Մազար ինձէն ջորեր է:
2. Տեղ եմ գցել փոնթ կը տայ
Բարձի տակէն հոտ կգայ
Մեռնեմ դաստայ քոնքուլիդ,
Մէջէն խնկի հոտ կգայ:
3. Իմ եարն եկաւ ու գնաց,
Սարին դէմ առաւ մնաց.
Սրտով իղար (հաճութիւն) չտուեց
Սրտիս դարդ եղաւ մնաց:
4. Երգիկներ բուն եմ գրել,
Նօրս մօրս քուն եմ գրել,

- Աղջիկ եարիս հաւասից,
Ամեն բան տուն եմ գրել:
5. Աղջի, գնա կար տես,
Պաղ աղբորին սալը տես.
Պաղ աղբորէն ջուր խմէ՛,
Արի սրտիս հալը տես:
 6. Ջազցի դռներ տաշած են,
Ունքեր զալմով քաշած են
Ղալամն ինչ է, թուղթն ինչ է
Լուսնի լուսով նախշած են:
 7. Աղջի, կապէ քո ոսկին,
Լկանջ մի մօրդ խօսքին,
Կլուխս գիր գլխիդ դէմ
Նահլատ տուր հօրդ ազգին:
 8. Բոստան եմ ցանէ համեմ,
Խուրմա տուէք որ ծամեմ.
Խուրման առայ ու պահի,
Կարօտ եարիս կը տանեմ:
 9. Չալիր եմ զարկել դարին,
Վաղա եմ կտրի տարին,
Ինձի տուէք էն աղջիկ,
Չքաշէմ ախ ու զարիկ...
 10. Ջրի եկար ու գացիր,
Սիրուն երեսդ չբացիր.
Սև աչքերով, վառ թշով
Ինձ էրէցիր, վառեցիր:
 11. Բոստան եմ ցանած բազուկ,
Իմ եարն էր քեզմէն նազուկ,
Թէ որ էնոր չէք ճանչէ,
Թե ին ունի բիլազուկ (ապարանջան)
 12. Ծառ մը ունիմ ծիրանի.
Քամի՛ն տերև կը տանի.
Տերև ինձմէն արի տար
Իմ եարոջս մատանի:
 13. Դալուբաբէն ամպել է,
Զէկ եարը ձին թամբել է.
Հե՛ծի ջրիթ խաղցել է՛,
Անձրև էկի թացուել է:

14. Կրակն արա մահանայ,
Արի մեր տուն ու գնաց,
Մէ դամ էլ վրաս աշէ՛,
Դունիան քեզի չի մնաց:
15. Ղաշղա բուռակ հեճեր եմ,
Արագին մօտեցեր եմ,
Արագ, Արագ, խան Արագ,
Խաներու սուլթան Արագ:
16. Կողբայ քարերն աղի է,
Մաղերդ շաջբաղի է,
Կողբայ միջի մաղանը,
Իմ եար քեզի բաղանը:
17. Ծառի տակը կեցել եմ
Սնթարիս լուացել եմ.
Ծառի տակը երկու զոյ,
Մինը փնչէր, մինը ոյ:
18. Աղջի անունդ Մահի,
Ճակատդ բոլոր շահի,
Թէ որ ինձի կը հանիս,
Ըստուած աղբերդ պահի:
19. Այ տղայ եզնարած ես,
Դու ջանէդ բեզարած ես,
Քու հերուայ բլբլու լեզուդ,
Էս տարի լալ է գառի:
20. Կախրդնին ուռի ծառ,
Խնձոր գցեմ արի տար,
Ուրբաթ, շաբաթ քեզ մոհրաթ,
Գալ կիրակի արի տար:
21. Կնայի չայ վլածք
Տաշտը կոտրաւ ջուրը գնայ,
Ջուրն առայ ելայ դարը
Չդտայ իմ ֆիդան եարը:
22. Աղջի շամամ ծծերդ,
Թողնես բանամ ծծերդ,
Ինքն իրեն խշխշու՞մ է
Մլպտակ քալամ ծծերդ:
23. Կնն գնն հեաիդ եմ
Այ խնձոր եմ, գօտիդ եմ,

- Ինձի էստեղ չթողնես,
Ուր տեղ էրթաս մօտիդ եմ:
24. Ջրի միջի ջլախոտ
Մնուշ կգայ եարոտ հոտ,
Տեղ մը երթաս՝ թէ՛ դառի,
Սիրոս կեղնի արիւնտ:
25. Բասմա չափար մի կոխի,
Խօսքը իմ է, մի վախի,
Որտեղ երթաս կուզեմ քեզ,
Տուած խօսքդ մի փոխի:
26. Ջուրը կապել եմ սոււուներ,
Կրող տանէ պառւերներ,
Դրանք ինչ բանի պետք են՝
Ստուած պահի աղջիկներ:
27. Վարդ եմ քաղի մաղերով,
Վեր եմ դրել շաղերով,
Հրէս եկաւ իմ եարը,
Այ ձին տակին խաղալով:
28. Դուն ելել ես կերթաս բեր *)
Ոչ բէրն եղնի, ոչ բէրատէր.
Խէր չտեսնի քո հէրն ու մէր՝
Ինձի չանէր էս զարդին տէր:
29. Կանգնելէս բախայ բախայ
Սև չուխա կարմիր եախա,
Քանի դու հեռու մնաս,
Իմ կեանքս ախ ու վախ ա:
30. Ծառի տակը դալղա է,
Քանի կանգնես՝ փայղա է.
Ծառի տակը փորել եմ,
Ոսկիքս մէջը հորել եմ:
31. Ջուրը կապէ ազէստան,
Ստուած պահէ գեաղեստան,
Կնա, եպլէն արտ ունիս,
Հազար ու մի դարդ ունիս:
32. Միւն ու գերան բար պիտէր,
Սրտով սիրով եար պիտէր.

*) Ոչխար կլթելու տեղը:

- Թուխ փուշին*) վզիս կապող
Ձէկ ու կարմիր եար պիտէր:
33. Արխալուղէ կարել եմ,
Գօշիդ կօճակ շարել եմ.
Արխալուղ բոչիդ կիսուն
Կոճակներ հարիւր չիսուն:
34. Այս գիշեր ես դուրս ելայ,
Լուսինն անուշ կըցուլայ,
Կցուլայ հալուլայ սարին,
Կկաթէ մառմառ քարին:
35. Լուսինն էր Բագին ոլոր,
Համ խորոտիկ, համ բոլոր,
Լուսնիակ կամար կամար,
Ես մեռնեմ քեզի համար:
36. Կանանչ կանանչ կանչեցի ք,
Կանանչ մէջքան բացեցէք,
Հարսն ու աղջիկ գուրս կզան,
Պար ու սէջրան բացեցէք:
37. Հաւը թուաւ թառն ելաւ,
Իմ բանս դաւով ելաւ,
Սաբաբի որդին մեռնէր
Գուշմանի սրտով ելաւ:
38. Աս գիշեր լուսնեակ գիշեր,
Սև աչքեր կարմիր թշեր,
Աղջիկ, ապրի աղբերդ,
Գաստուր**) տուր գամ ևս գիշեր
39. Մուղնուլայ ջուրը սառն է,
Մուղնի երթողն իմ եարն է,
Երթայ իր մուրազն առնէ,
Գառնայ իր սիրաճն առնէ:
40. Մատիդ մատնիք մաւի է,
Աղջի էդ ինչ դաւի է,
Սէրն ինչ է, սաւղէն ինչ է,
Էս պարի զաչդէն ինչ է:
41. Կաղզուանի ձորէն եմ,
Մեճ բաղի խնձորէն եմ:

*) Մետաքսե թաշկինակ: **) Երաւունք:

- Դիար դիար կորել եմ՝
Եարոջմէնէն ջորեր եմ:
42. Աղջի անունդ ձուշան,
Արի երթանք սուրբ Նշան,
Թէ ոք ինձի խօսք կը տաս՝
Մատանիս տամ քեզ նշան:
43. Կողբայ քարը դօշա է,
Միջի մարդը բօշա է,
Մաշիք տուէք դուրս ելնեմ,
Ինձի չասեն բօշա է:
44. Ղօշա վանքի դշերը,
Մեր քեաբուրի շշերը,
Չիթ ալաջայ քո բընդեր,
Ինձ երեցին քո գնդեր:
45. Կանանչ արտի քեանարը,
Ո՞վ է տեսել իմ եարը,
Արտի քեանարը կանաչ է,
Իմ եարը քեզ ճանանչ է:
46. Գինի զինի գինդստան,
Եար մը ունիմ ճնդստան.
Մանր հընդի շարող էր,
Թաւդայ շապիկ կարող էր:
47. Մաճկալը կաջնէ մաճին,
Ոսկէ գնդեր անկջին,
Խաբար տարէք գոբանչիս,
Որ գայ մեռնի կորճին:
48. Մեր դրան սուրու զագեր
Իմ եարոջ շէկիկ մագեր,
Իմ եարօջ դեօշի ալը՝
Ինչ կենեմ դուսիկի մալը:
49. Ես աղջիկ եմ, ալլու եմ,
Նշանլու եմ, բեալլու եմ,
Երբ որ գացի ան տունը,
Ամենիցն էլ բալլու եմ:
50. Գերի եղայ աչքերուդ,
Կամարակապ ընքերուդ,
Իսէնց անգուլթ սիրտ ունիս,
Որ չես ճանչնայ ընկերիդ:

51. Իմ եարը հանդին տեսայ,
Ջրերի բանդին տեսայ,
Օրդակ պիտէր, բազ պիտէր,
Ջրերի վլխին բանդ պիտէր:
52. Սուռէ առու եմ թափել,
Քառսուն կաքաւ եմ բռնել,
Քառսուն կաքաւ միատեղ
Նարիս փեշքաշ եմ զրկել:
53. Խմել եմ խոշ եմ եղի,
Սիրուդ սարխոշ եմ եղի,
Հնդստանու բերէք հունդ,
Իմ եարիս բերէք տուն:
54. Աղջի մազերդ իրլանի,
Քամին թել թել կը տանի,
Էդ քո շող շող երեսդ
Չուտով հոգիս կհանի:
55. Արտերն ամեն բիար է,
Իմ եար թաժա խիար է,
Արտերն ամեն խճերով՝
Իմ եարը նախշուն բճերով (գուլպա):
56. Ջուր չէր ջրիլ ծառները,
Գիր չէր գրի ձեռները,
Խաբար տարէք նազօին,
Անուշ պահէ գառները:
57. Տարին տասներկու ամիս
Խնձորն է թուծի գօտիս,
Քեաշկա բալուլ մեռնէի
Եւր քո մտքէն չչելնէի:
58. Էս օր մութ ու լուս կենէ,
Տանտէր եկէր դուրս կենէ,
Ով որ չիգայ իդա պար՝
Մեռնի իւր եար, կտրի ճար:
59. Արեն առի փուռել է,
Ալ ֆաս գլխին ծառուել է,
Ով որ առնի իմ սիրած՝
Թազը գլխէն չվերած:
60. Արի երթանք մեր վանքը,
Դու քանդեր ես իմ կեանքը,

- Թէ որ խօսքս չը լսես,
Վերջս կեղնի թուանքը:
61. Սարեկները եկել են,
Բերդի բոլոր բռնել են,
Բերդի բոլոր ծիլ ունիմ՝
Ել արեշում թել ունիմ:
62. Արփաչացի հանդերը,
Ջուրը քանդի բանդերը,
Անտէր մնան փոշտերը՝
Եր ու իւրդս քանդել է:
63. Այ արխուժը, արխուժը,
Դու կաշնել ես չարխուժը,
Իլուխս գլխիդ զուրբան,
Ջան մարդ կաշնի խալխուժը:
64. Ջաղացս ման եմ տուի,
Սիրել եմ ջան եմ տուի,
Ջաղցի քարեր մանրատուշ,
Ոիրտս եղաւ հալ ու մաշ:
65. Էս օր արև պատել է,
Իմ եարն ինձի ատել է,
Եար, կանչէ, ձէնիդ մեռնեմ,
Մերս ինձ ազատել է:
66. Աղբիւր բացի ջուրն անուշ,
Ծաղկներու հոտն անուշ,
Եոթոջիս թալին թազա
Աղջի, իմ եարը քեզ մազա:
67. Ջուրը կիջնէր էն սարէն,
Կթափթ փէր էն քարէն,
Չէ սաղցել սրտիս եարէն,
Որ դարձար քո իլղարէն:
68. Երկան բս աղի վերաց,
Չամամս թաղի վերաց,
Կարմիր վարդ, ալ ծաղիկ,
Մանիշակ մաղի վերաց:
69. Արխալուղդ կարել եմ,
Կոճկրները շարել եմ,
Չան տղայ, գնա, կտրի,
Քեզնից լաւ ճարել եմ:

70. Արևն արի կամփրնոց,
 Կանփի թուփը երեսնոց,
 Թոն (անձրև) եկել է թուջել է,
 Քանդէ կոճակ, դամ քո ծոց:

Հազարի Ուզունթալայ գիրդում:

71. Ա տղայ, քեզ ջրուժը սէր ընկայ,
 Քարով տուփը, վեր ընկայ,
 Աչքս որ աչքիդ կպաւ,
 Օխտը կոճակ մեր ընկայ:
72. Բազումս կայ մի նունի,
 Բարձ պի, էք աղէն կունի,
 Աղայ զլսիդ, արեւիդ մատաղ,
 Իմ եարի խօսքը բունի:
73. Քոլերսը վել հանդեր ա,
 Թուանքդ լիքը բանդեր ա,
 Ա տղայ գնան, շուտ արի,
 Քիթը կալած անդէր ա:
74. Կեանջայ քամին կեալիս ա,
 Դուռը շողշող տալիս ա,
 Աղջի, վեր կաց, դուռը բաց
 Գլխիդ տէրը գալիս ա:
75. Այ տղայ, տղայ, ետ գնան,
 Առաջովդ գետ գնայ,
 Ջիրվանի քամին փչի,
 Կեանջու շալդ ետ գնայ:
76. Կուն եմ ուզում, հիւն բերէք,
 Դադստանայ ձիւն բերէք,
 Ելս, գիւնս թամամ ա,
 Ղարիք դուշս տուն բերէք:
77. Մեր տան քամակը գարի,
 Աստուած տայ նանիս բարի,
 Ար սրտիս ուզածի պէս
 Ինձ ուզեց նազրու եարի:
78. Ջղացիս դուռը փու ա,
 Քար կզցեմ կխօսայ
 Աստուած սիրող բան չասի,
 Ջան աղջիկ ա, ափսոս ա:

79. Այ տղայ, դու պին տղայ,
 Քեանքիւղ դալին տղայ,
 Ես քեզ որ տեղ սիրեցի,
 Հերանցս կալին, տղայ:
80. Թող իմ եարս եար ըլի,
 Դարդիցս խաբարդար ըլի,
 Թեկուղ որ սիրուն չըլի,
 Խօսքերը շաքար բար ըլի:
81. Հաց եմ թխել գաթացու,
 Իմ եարը մելիքացու,
 Մելիք սարերը շուտ գայ,
 Բարով իմ եարը տուն գայ:
82. Ալիք եմ աղել լեարի ա,
 Իմ եարս սափարի ա,
 Եար, քու սափարին մատաղ
 Խօսքերդ շաքարի ա:
83. Դու նստել ես գերանին,
 Ոսկէ շվին բերանին,
 Ասկէ դայթան եմ կեօրծել,
 Դնեմ ջրիդ բերանին:
84. Կութանս ուքերուժը,
 Իմ եարս ձեռքերուժը,
 Գլուխս դուրբան չտամ,
 Մի մանգալ շոքերուժը:
85. Ջիրուայ գղալ Ջիրվանի,
 Քամին տայ թել թել տանի,
 Իմ եարը սարում ձորում,
 Իմ քունը ոնց կտանի:
86. Մտիկ արէք էն դազին,
 Պտպտուրիկ բողազին,
 Հողն էն հօրն ու մօր գլխին,
 Աղջիկ տուաւ չօլմազին:
87. Այ հւայ հւայ սիրտս,
 Ծիրանի թել ա սիրտս,
 Ախ, ինչ ասեմ քեզ, նանի,
 Բաց անեմ՝ սե ա սիրտս:
88. Կազնել ես սրուխ հովին,
 Քամին տայ դեօշիդ մովին,

- Իռնակ ճողիգ քնողին,
Զամամ ճճերդ բռնողին:
- 89. Գիւլում զիւլում գիլասար,
Բուրդ եմ մանել հաւասար,
Իռնակ կտամ էն օրին,
Որ եկար հետս լսօսար:
- 90. Մեր բաղումը կանանչի,
Չն կայ շնի նման չի,
Հարսն ու աղջիկ շատ տեսայ՝
Մինն իմ եարի նման չի:
- 91. Ղասուժը, հայ Ղասուժը,
Կարմիր գինին թասուժը,
Տղէքքը երբ կիտորու ետ,
Վարդիվերի պասուժը:
- 92. Ղասուժը, հայ Ղասուժը,
Կարմիր գինին թասուժը
Աղջկերքը երբ կտաբանան,
Վարդիվերի պասուժը:

Դարալսագեսգի Խաչիկ գիւղում:

- 93. Առ թող ես արել լծի,
Դունջակ ես արել, կծի,
Իմ հէրը քեզ աղջիկ չի տալ,
Քարէն վեր ընկի պրծի:
- 94. Ջրի ճամբէն սառել ա,
Մանը բուռը տարել ա,
Կաքաւ պոչիկ թուխ որդայ,
Ուշ ու խելքս տարել ա:
- 95. Ես մի պճուրիկ տօխ եմ,
Չուշի զալին կիօխեմ,
Ես էն եարին հաւան չեմ,
Ուրիշ եարի կիօխեմ:
- 96. Ուռի ծառին հով քամի,
Ճիրվանիդ քամին տանի,
Ես դու գնանք դատաստան,
Ում դամաթն է՝ էն տանի:
- 97. Ես Բղէքայ ձորէն եմ,
Ալմալայ խնձորէն եմ,

- Խաբար տարէք իմ նանին,
Իլում իլում կորել եմ:
- 98. Սորը ձիւնը կալել ա,
Անձրի արել հալել ա,
Խաբար տարէք իմ նանին,
Սիրտս վարամ կալել ա:
- 99. Երկանքն ա աղի վրէն,
Խիարն ա թաղի վրէն
Ես մի թաւլան դուշ պտի,
Իմ հօրանց բաղի վրէն:
- 100. Իմ ճաղիկս քաղած ա,
Տեփրի տակին պահած ա,
Ով որ ճաղիկս դատտ անի,
Հէրն ու մէրը թաղած ա
- 101. Ա տղայ, անունդ Ուռուշան,
Սպիտակ կուլիդ թուխ նշան,
Եսլուխդ զարկի նախշեմ,
Ղարկեմ քո եարիդ նշան:

Դարալսագեսգի գաղթական հայերի մէջ, Ազատակ գիւղ:

- 102. Ալխարը փուռե գուրը,
Ջոկէք իմ ալագեօզը,
Մէջկէն քաշէք եսլորը,
Սրփէք երեսի թողը:
- 103. Սղբէր ունիմ, աֆչի է,
Բարակ մէջքը դամչի է,
Չեռիցը մի բան չի կայ
Լեզուիցը թալանչի է:
- 104. Մի ծառ ունեմ ճիրանի,
Քամին թել թել կտանի,
Երես երեսի կառնի,
Ինչ խամեղ քուն կտանի:
- 105. Եարիս խալաւ կեխտտի,
Որ կեխտը ջանը չուտի,
Վարդի ջրով լուացի՝
Բերնի գոլով չորցուցի:
- 106. Կարմիր լսնձոր կըծած է,
Արծթի մէջ բունած է:

- Աղբէրս եկաւ չտուիմ,
Եարս եկաւ բաշխեցիմ:
107. Փամտան ետե խինած ի,
Խինածը խատխտած ի,
Չիլա շապիկ փռած ի,
Յղակ կօճակ շարած ի:
108. Գետերն եկաւ ալաշայ,
Երկու խնձոր մի մէշայ,
Մելիք, տեսէք ով եկաւ,
Եկաւ նարգիզ, բանաւշա (մանուշակ):
109. Աղբէրս ծառի տակը,
Թամբուրան թևի տակը,
Աղբէրս հիլ ի շարձէ,
Լեզուն բլբլիլ ի դարձէ:
110. Լուսնակ ի ամբի տակը,
Ես իմ քո կնդի փակը,
Ես քէ վեարդի սիրացիմ՝
Մխակի քօլի տակը:
111. Սարերը ձնոտիր ի,
Քեալերը (գոմէշ) քնոտիր ի,
Աղբէրս բաղի մէջը
Ոտներն ի շաղի մէջը:
112. Նախրի ջաղա խնկի ծառ,
Խնձոր թալեմ եարի տար
Ուրբաթ շաբաթ քէ մօլլաթ,
Լոս կիրակի եարի տար:
113. Ամբեր է ձիւն չի գալի,
Իմ եարը տուն չի գալի,
Գլխս դրի բարձը,
Նչքերս քուն չի գալի:
114. Իմ խօր տախտըշէն տախտ ի,
Գարուն կիկաչ կճաղկի,
Ձուլուկ վիմ աղբօր իկեալը
Կանանչ վարդեր կթաղկի:
115. Բաղի երգը զամիշ ի,
Մէջը լինքը եմիշ ի,
Նղջիկ խաթրդ չի մնայ
Նազուն քեանց քէ անուշ ի:

116. Տնիսի վրայ քնող լած,
Բէշխաբար քնող լած,
Տարան քո նշանցուդ՝
Ռէշխաբար քնող լած:
117. Տղայ, տղայ, խաս տղայ,
Աղջկանց ետեէն վագ, տղայ,
Այա չեսնա (չես կարող) կոխել
Խոնջանլու կոխ, տղայ:

ՎԱՐԿԱՎԱՌ.

Ղազարի Ուզունթալա գիւղում վարդաւառի կամ նորանց բառբառով «վրժիվեր»-ի օրը հարսները և աղջիկները գնում են զբօսներու իւրեանց բարձրագիւր ամարանոցում, Գամբլուտի սարում, ճլորթի են խաղում և այլն: Գիւղի հասարակութեան մի մասը, միւս գիւղերի բնակիչների հետ, մատաղներով գընում է գիւղից երեք վերստ հեռաւորութեամբ, անտառի մէջ մի բարձր ժայռի գլխին կանգնած «Սրուէղ» անուն վանքը՝ ուխտի:

Տաւարածները Գամբլուտի սարում այդ օրը ծաղիկ են քաղում գոյնգոյն, վիճում են խաչածե և կապում են իւրաքանչիւր տան մի կլթան կովի ճակատին մի ծաղկախաչ: Գեղեցիկ տեսարան է երբ ճակատները զարդարուն կովերը հպարտ քայլերով յառաջ են գնում գէպի իւրեանց տիրոջ վրանները, և նորանց ընդառաջ են դուրս գալի գիւղիս երեխայքը և երգում են հետևեալը:

Ական, ական, ական ի կովին,
Չալ չալ աչքեր բախրի (եղջերու) կովին,
Ես քէ մատաղ, Սուրբ Ուհանես,
Ամէն բիւզիւ (երեկոյ) իմն ըկանես,
Մատաղ անեմ զաբուլ կանես,
Քօռլուղինը քարնրդր անես՝
Իմն աղաքսրոր անես:

Ղամախի գաւառի հայ գիւղերում, օրինակ Գիրդա, Հընդար, Գիւրջուան և այլն, այդ օրը աղջկունք ժողովում են

ծաղիկ, փնջիկներ են շինում նորանից և այդ ծաղիկը կոչում է նորանցում Համբարձում, և փոքր աղջկայ ձեռքով բաժանում են դիւղի տներին և փոխարէն ստանում են իւր, ձու, բրինձ և այլ ուտելիքէն:

Ապա հաւաքում են դաշտ, ընկոյզի ծառերի տակ, գրօսնում են, երգում են, զուռնայով պարում են, ժողոված լուտելիքներ վաճելում են, որոնց մասնակցում են և հասակակից տղայք:

ԸՆՏԱՆԵՎԱՆ ԿԵՆՔ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐՍԱՆԻՔ.

Ահա մի հանդէս, որ կատարում է մեծ շքեղութեամբ և ուրին զիւղերում մասնակցում են ոչ միայն հարսի ու փեսայի ազգականները, այլ և ամբողջ հասարակութեան անդամները: Պարսկահայ և ծածկահայ գաղթականների մէջ մեծ շքեղութեամբ է կատարում այս հանդէսը:

Երեսպէս յայտնի է, ամենից առաջ կատարում է նշանադրութիւնը: Սովորաբար տղայի ծնողները և ազգականները որոնում են յարմար հարսնացու լաւ գերդաստանից: Զիրակում, Բասենում և Վարսում աղջկայ հայրը եթէ իւր աղջիկը հարսնութեան տալու նպատակ ունի՝ պատասխանում է «Ժամանակը կրկնէ, մինչև մեր տանը խորհուրդ կանենք», իսկ եթէ տալու միտք չունի, պատասխանում է, «կորուսող մեր տանը չէ, զսմաթդ Աստուծոց ուզէ»:

Պատահում է որ հայրը կամենալով իւր աղջիկը հարսնութեան տալ օտար գիւղ, կանխօրէն վերաստուգում է տղայի կարողութիւնը, տունը, դոմն, ապրանքը, ապրուստը և այլն: Վերաստուգելուց յետոյ համաձայնում է նստել, բարեկամօտալ, հիւրասիրուել և ստանալ փեսայի ծնողներից ընտան, մահուդ, ձի, ատրճանակ կամ մի այլ պարգև, որ երբեմն նորից վերագարձնում է իւր փեսային, համբուրելով. նորա կիսը: Այս ընթան կոչում է տնտեսութեան խալաթ (տուն տեսնելու):

Նշանադրութեան օրը փեսային տանում են հարսի տունը, հետն էլ զանազան ուտելիքէններ: Այդ տեղ հրաւիրում են բարեկամները, գրացիները և ծխատէր քահանան, որ ընթրիքից առաջ փեսայի հետ առանձնանում է կանանց սենեակը և հարսնացուին փեսայի գէմ կանգնացնելով հարցնում է նախ առաջինի և ապա երկրորդի համաձայնութիւնը, որ արտայայտւում է գլուխ խոնարհացնելով և ապա տղան մատանին հարցնում է աղջկայ մատին և շարղաթը ձգում է նրա զլխին, իսկ շրջապատողները կոչում են «Աստուած շնորհաւոր անի»:

Եթէ նշանադրութիւնը վերջանալուց յետոյ զոքանջը իւր մօտ չպահէ փեսային, սա իսկոյն և եթ պէտք է վերադառնալ իւրեանց տունը: Նշանադրութեան հանդէսը կոչում է նշան:

Հետևեալ օրը աղջկայ հայրը յարգի է հրաւիրում, այսինքն հացկեթեան է հրաւիրում բարեկամներին և նոցաներկացութեամբ մինը կանգնած՝ հատ հատ ցոյց է տալիս աղջկայ հանդերձեղէնը և տղայի տանից բերած ընծաները: Բարջըր ձայնով կոչում է. «Աստուած շէն պահէ Բարսեղ խնամուն, որ բերել է այսինչ խալաթը, որ արժէ 25 մանէթ, այսինչ խալաթը 30 մանէթ» և այլն և միշտ բարձր զնահատելով:

Անմիջապէս յետոյ սկսում է սաշու (հարսնացուի երեստեսնուելը), այն էլ զրամական նուէրներ հարսին փեսայի, կրնքաւորի և սորանց բարեկամների կողմից և իւրաքանչիւր նուէրը և քանակութիւնը յայտարարում է բարձրաձայն:

Հասնում է այն ըոպէն՝ որ հարսին պէտք է դուրս բերին խնամիները առաջ: Նորա զլուխը և երեսը ծածկում են քողով: Գրացիներից կամ բարեկամներից մի հասակով կլն առաջնորդում է նորան և կոչում է ուստա: Գրանը հասած՝ աղջիկը հեղութեամբ զլուխ է խոնարհեցնում հանդիսականներին և ապա նա և ուստան միմեանց յետևից ծանրաքալ մօտենում են և համբուրում նախ քահանայի աջը, ապա քստորի և ապա միւս հրաւիրուածներին, որից յետոյ նորից կանգնում են զրան մօտ:

Մի շիշ օղի, երկու բաժակ ափսէի մէջ զրած, ուստան լցնում է բաժակները, իսկ աղջիկը ափսէով մատուցանում է

մինը քահանային, միւրը քաւորին և ապա ամենքին՝ նստած կարգով, կանխապէս իւրաքանչիւրի ձեռքը համբուրելով:

Քաթակն ընդունելուց, օրհնելուց և խմելուց յետոյ իւրաքանչիւր ոք դրամական նուէր է ձգում բաժակի մէջ աղջկայ համար իբրև *կրեստենանիք* և ուստան բաժակից հանում է գնում ափսէի մէջ:

Յոյրին օղի մատուցանելուց յետոյ աղջիկը նորից կանգնում է դրան մօտ, ուստան բանում է նորա երեսը, ցոյց է տալի բոլոր հանդիսականներին, լսում են շնորհաւորանք և ապա երկուսն էլ առանձնանում են:

Երկուտենանիքի նուէրները պատկանում են աղջկանը, իսկ *սաչուհի* նուէրները ընդունում է աղջկայ կամ փեսայի հայրը և նորանով զարդ է գնում աղջկայ համար:

Արտէս է վերջանում նշանադրութիւնը Չիրակցոց, Քասենցոց և Կարսեցոց մէջ:

Գարալագեագի զաղթած հայ զիւղերում, Սէս, Կորագիղ, Խաչքար և այլն տղայի հայրը կամ բարեկամները գնալով աղջկայ հօր տունը՝ խօսք են բանում, աստիճանաւար մօտենում են այցելութեան բուն նպատակին, եթէ փոխադարձաբար համաձայնութիւն է կայանում, հասնում են իւրեանց հետ բերած օղու շիշը և շնորհաւորական բաժակներ են խմում. հակառակ դէպքում շիշը չի կարող աշխարհ գալ: Համաձայնութիւնից յետոյ աղջկայ մօրը յանձնում է սակի, կամ մատանի և կամ այլ նուէր և այս կոչում է *ըէհ*:

Մի քանի ժամանակից յետոյ տղայի հայրը իւր քաւորով և բարեկամներով գնում են աղջկայ հօր տունը՝ տանելով սակի կամ մանեակ կամ այլ նուէր: Միևնոյն ժամանակ իւրաքանչիւրը նոցանից տանում է մրգեղէն, ուտելիք, որ հացկերոյթից յետոյ գնում են առանձին առանձին ի ցոյց հանդիսականների: Սա կոչում է *շիրընլըղ*: Մինի բերած շերընլըղը թողնում են ի վայելումն հիւրերի, իսկ մնացեալը տանում են աղջկայ մօտ:

Հեռաւոր հիւրերի ցրուելուց յետոյ մնում են մերձաւոր բարեկամները, որոնց մօտ դուրս է դալի հարսնացուն, մօտենում

է իւրաքանչիւրին, զլու է խոնարհեցնում և ստանում պարգև, *երեսնալայ*:

Երեսնալայից յետոյ վերջանում է նշանադրութեան հանգէսը և երբ տղայի հայրը հրաժեշտ է տալու, նորա հետ վերադարձնում են նորա բերած *ըրիանի* (տապակած ոչխար) ազգը (բուզը):

Փեսային տեսնելու համար, եթէ նորան չեն հրաւիրել զոքանչի տունը, աղջկայ հայրը մի բարեկամ կնոջ հետ այցելութեան է գնում, տանելով *դուշ*, այն է պարգև և բրինա: Այնուհետև մինչև պսակը փեսան ուղարկում է հարսի համար ջրհօրնեացը և զատկին բրինձ, մոմ, մրգեղէն, կարմիր ձու, աջահամբոյր քահանային տալու և ձեռքերի համար *խինա*:

Երևանում՝ աղջիկն ու տղան իրար հաւանելուց յետոյ՝ տղային բերում են աղջկայ տունը, ուր քահանան պահպանիչ ասելով երկուսի զլիւին ևս մատանին թօյլ գնում է տղայի աջ միջամատում և առաջարկում է աղջկան հանել և գնել իւր մատում՝ եթէ հաւանում է տղային: Աղջիկը ամօթխամատում է և գնում է և գնում իւր մատը: Քահանան նորից հարցնում է փոխադարձ համաձայնութեան մասին և զլիւի շարժումով պատասխան ստանալով օրհնում է նրանց: Սա նշանադրութեան սկիզբն է կամ բէհը,

Ապա իսկական նշանադրութիւնից մի օր առաջ, պատրաստութեան համար տղան ուղարկում է աղջկայ տունը միս, իւղ, գինի, բրինձ, օղի և մեղրամոմ. քահանան առաջ օրհնում է նշանը տղայի տանը և ապա գուռնայով հրացանած գութեամբ, աղմուկով, բարեկամներով շրջապատուած, գնում են աղջկայ տունը, ուր խառնուելով նորա բարեկամների հետ՝ ուրախութիւն են անում, իսկ հարսները ու աղջկուռք պարում են: Քահանան առանձին սենեակում միմեանց մօտ կանգնեցնելով նշանուածներին՝ նշանը տալիս է աղջկան և օրհնում է: Հրավիրուածները ճաշում են և ցրում:

Հարսանիքից մի կամ երկու շաբաթ առաջ պատրաստում է *ըթէթը*, այսինքն տղան գնում է զանազան կտորե-

զէն իւր և հարսր հանդերձի համար, որ մեծ հանդիսով կարում են տղայի բարեկամները:

Քեասոււմը. Գարալագեազի նոր հայերի մէջ նշանադրութիւնից յետոյ տղահայրը իւր կնոջով և բարեկամներով և քահանայով գնում է նոր խնամու տունը *քեասոււմը* կտրելու, այսինքն վերջնական փոխադարձ պայմանը որոշելու թէ փեսայը որքան բրինձ, գինի, արաղ, մսացու և փող պէտք է ուղարկէ աղջկայ հօրը հարսանիքի պատրաստութիւնը տեսնելու համար: Տուած փողը կոչուում է *նաղը* կամ *ըաշլը*:

Քեասոււմը անելու ժամանակ տղահայրը առանձին նուէր է անում գիւղի եկեղեցու օգտին, 50 կոպէկ կամ աւելի երեցփոխին և մի ռուբլի գիւղի *մէլիքին*, այն է հասարակութեան տանուտէրին:

Քեասոււմ կտրելու սովորութիւնը, փող և խալաթ որոշելը կայ նաև Ջիրակի, Բասէնի և Վարսայ հայերի մէջ. քեասոււմի հետ որոշում է և միւս նուէրների քանակութիւնը—մսացու կով կամ եզ, իւղ, չիր, գինի, բրինձ և այլն, և այս ուտելիղէնները կոչուում են *եզու* կամ *ըարխու*:

Ղազախում կայ և այժմ կամաց կամաց վերանում է քեասոււմի սովորութիւնը, բայց նոցանում կոչուում է *աստառածներ*:

Այս նախապատրաստութիւններից յետոյ արդէն մօտենում է հարսանիքի կամ պսակագրութեան հանգիսի օրը: Բասէնում և Ջիրակում նախկին ժամանակ, 3—4 օր հարսանիքից առաջ փեսայի տանից տանում էին հարսնացուի համար կրճքի արծաթեայ զարդ—*օղակ* և մի թուփ *շիլա* հարսին շապկացու:

Այժմ սորանց փոխարէն ուղարկում են մի կաւէ *մրազ*, մի *հաց* և մի *խնձոր*, որոնք միասին կոչուում են Ղարսեցոց մէջ պուման, իսկ Բասենցոց մէջ *ըուրջալ*: Պումանը կամ բուրջալն ստանալուց յետոյ անմիջապէս աղջկայ հայրըն աւելացնելով նորա վերայ իւր կողմից մի մի ճրագ, հաց և խնձոր, ուրեմն իւրաքանչիւր տեսակից մի մի զոյգ իբրև զուգաւորութեան նշան՝ վերադարձնում է տղայի հօրը՝ Սորանից յետոյ արդէն ասում են թէ Ազոյի կամ Վարոյի աղջկանը *ըուրջալեցին*:

Բուրջալը նշան է, որ աղջիկ հարսնացուին տնէ տուն պտտեցնելու ժամանակ է: Արդարև, աղջկայ բարեկամները առանձնապէս հրաւիրում են իւրեանց մօտ աղջկանը և նորա հետ հասակակից ազաբ աղջիկներին պարելու և ուտելու:

Հարսանիքի առաջին ճաշը տրւում է կանանց, որոնց հրաւիրելու դուրս է գալի գիւղի մէջ քաւորակինը՝ ուսին կամ գլխին դրած հարսնացուի համար նոր կարած *ըաթիըան* կամ *կալ մն*, իսկ ձեռքում ափսէի մէջ *չարազ* (քիշմիշ, լաբլաբու և այլն) զուռնան առաջին, միայնակ պտտուում է գիւղի մէջ և հրաւէր է կարգում կանանց: Հրաւէրը կոչուում է *խնդրախ*: Հրաւիրուածները վերցնում են չարաղից և հետաքրքրութեամբ գննում կաբան կամ քաթիըան:

Հրաւիրուած կանայք փեսայի մօր համար տանում են ընծայ *սեղան*, այն է պանիր, իւղ, ձուածեղ, դուլպա, արախճին և այլ այսպիսի բաներ, ով ինչ կարող է, դարսելով սոցա սինու մէջ և կամ սինի չունեցողը՝ մաղի մէջ: Կանայք ճաշում են ցերեկով և հարսանիքի առաջին օրը, որի երեկոյին հրաւիրուում են տղամարդիկ: Սակայն եթէ փեսան և հարոր նոյն գիւղումն են, տղամարդկանց ընթրիքը լինում է հետևեալ օրը, երեկոյին:

Երկու երեք օր առաջ տղամարդկանց հարսանիքի են հրաւիրում փեսան և նորա քաւորը զուռնան առաջը և ձեռքում մի շիշ արագ: Իւրաքանչիւր տան առաջ տան տէրը լարդանքով ընդունում է նորանց և մի բաժակ օղի է վայելում նորանց ձեռքից իբրև նշան, որ նա ընդունում է հրաւէրը, պարտաւորում է գալ հարսանիքի և *սաշու* տալ: Նոցանից ով կամք չունի սաջու տալ, նա օղի չէ ընդունում և առաջին ընթրիքը վայելելուց յետոյ այլ ևս չէ մասնակցում հարսանիքին: Սաջու տուողների համար, առաջին ընդհանուր ընթրիքից յետոյ, առանձին մսացու է մորթում և առանձին կերակուրներ պատրաստում:

Ուրբաթ օրը հարկաւոր է հրաւիրել քաւորին և միւս ժողովրդականաց, ուստի մսացուն մորթելու օրը փեսան, նո-

րա ազգայինները, հայրը, մայրը, քույրը և մօտ բարեկամները գնում են քաւորին հրաւիրելու:

Փեսան վերցնում է իւր հետ շաքարի կտորներ, կամ խնձորներ, նորա մայրը կամ քույրը ձեռին մի փունջ ծաղիկ (մեխակ, մախմուր ծաղիկ, հոտաւետ չորացած կամ կանաչ մարգա և այլն), իսկ ազգայինները գաւաթով գինի, մի բաժակ ափսէի մէջ, շուրջը չոր միրգ շարած: Փունջը մատուցւում է քաւորակնոջը, իսկ մնացեալներին մի բաժակ գինի:

Այսպէս է լինում՝ երբ քաւորը և փեսան միւսմտոյն զիւրումն են, իսկ եթէ ջոկ զիւրումն են, այն ժամանակ քաւորը դալով փեսայի տունը, այն տեղ է պատրաստում ծառը, որ պարսկահայերի մէջ կոչւում է ուրց:

Փեսան և հիւրերը հաւաքուելուց յետոյ՝ ամէնքը միմեանց կից բոլորշի նստելով սկսում են բարձրաձայն գովել ուրցը, որ ունի իւր յատուկ երգերը: Ամենից առաջ գովում է քաւորը, ուրցը ձեռքում բռնած, այսինքն նա ասում է երգից մի տուն և ապա տալիս է կողքի նստածին, որ նոյնպէս երգելով մի տուն՝ տալիս է երրորդին և այլն: Այսպէս ուրցը պտոյտ է աւում մինչև երգի աւարտը.

Ուրցը կամ ըստ մեր ուսուհայերի՝ ծառը, կադմուած է մի գլխաւոր փայտից, որի շուրջը թէք բարձրանում են ճիւղեր: Սորանց, ինչպէս և գլխաւոր փայտի վերայ շինած են խաչաձև փայտեր, որոնց ծայրերում տնկում են խնձորներ: Գլխաւոր փայտի վերին ծայրում դրած է հորիզոնական զիրքով խաչ, որ կոչւում է կարաւ և նորա խնձորները գլխախնձոր: Բացի խնձորներից՝ ուրցը զարդարում են նաև զոյն զգոյն թելերով:

Ուրցի գովասանական երգն Գարալաղեալի Կորադիգ, Սէս, Մարտիրոս, Փաշալու, Գնդէվաղ և այլ զիւղերում, ուր բնակուած են գաղթած հայեր, երգւում է այսպէս.

Էս թագն իր խաչ,
Խաչի կոթն իր խաչ ու մաչ,
Ղնախաւոր պսակդ,
Արևդ իր կանանչ:

Էս թագն իր խաչ,
Խաչի կոթն իր խաչ ու մաչ,
Ղնախաւոր թագուհիդ,
Արևդ իր կանանչ:
Էս թագն իր խաչ,
Խաչի կոթն իր խաչ ու մաչ,
Գթակդ իր բուխարի
Արևդ իր կանանչ:
Էս թագն իր խաչ,
Խաչի կոթն իր խաչ ու մաչ,
Չուխաղ իր ալ մահուդ՝
Արևդ իր կանանչ:
Էս թագն իր խաչ,
Խաչի կոթն իր խաչ ու մաչ,
Բարսքդ (գօտի) իր ասլրահ (Քիրմանի շալ)
Արևդ իր կանանչ
Էս թագն իր խաչ,
Խաչի կոթն իր խաչ ու մաչ,
Սօլերդ իր սաղրի՝
Արևդ իր կանանչ:
Էս թագը վիր թագի նման է,
Գաւիթ մարգարայի թագի նման է,
Որ թագն շուռը մուռը կաչ:
Էս թագն վիր թագի նման է,
Սողամոն իմաստունի թագի նման է,
Որ թագն շուռը մուռը կաչ:
Էս թագն վիր թագի նման է,
Մելքոն, Կասպար, Բաղդասար թագի նման է
Որ թագն շուռը մուռը կաչ:
Էս թագն վիր թագի նման է,
Կոստանդին թագաւորի թագին նման է,
Որ թագն շուռը մուռը կաչ:
Էս թագն վիր թագի նման է,
Ապկար թագաւորի թագին նման է,
Որ թագն շուռը մուռը կաչ:
Էս թագն վիր թագաւորի թագին նման է,
Սէնաքարիմ թագաւորի թագին նման է,
Որ թագն շուռը մուռը կաչ:
Էս թագն վիր թագաւորի թագին նման է,

Յովասափ թագաորի թագին նման է,
 Ար թագն շուռը մուռը կայ:
 Էս թագն վիր թագաւորի թագին նման է,
 Տրթաթ թագաւորի թագին նման է,
 Ար թագն շուռը մուռը կայ:
 Էս թագն վիր թագաւորի թագին նման է,
 Մանասէր թագաւորի թագին նման է,
 Ար թագն շուռը մուռը կայ:
 Էս թագն վիր թագաւորի թագին նման է,
 Կիրկեօր Լուսաւորչի թագին նման է,
 Ար թագը շուռը մուռը կայ:
 Էս թագը քնչ ուղելի,
 Թագաւորի մէր կայնաճ կուզի,
 Ար շուռ կայ: (Թագաւորի մայրը կանգնում է):
 Էս թագն քնչ ուղելի,
 Թագաւորը իւր ազափներով կայնաճ կուզի,
 Ար թագն շուռ կայ: (նոյնը)
 Էս թագն քնչ ուղելի,
 Թագաւորի քոյրերը կայնաճ կուզի,
 Ար թագն շուռ կայ (նոյն.)
 Եկ բարև, եկ բարև,
 Սուրբ ճնունդին տանք բարև,
 Թագաւորին ու թագուհուն տայ շատ արև:
 Եկ բարև, եկ բարև,
 Սուրբ խաչափայտին տանք բարև,
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արև:
 Եկ բարև, եկ բարև,
 Սուրբ գլխատէրին տանք բարև,
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արև:
 Եկ բարև, եկ բարև,
 Քսան ու չորս մարգարէանց տանք բարև,
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արև:
 Եկ բարև, եկ բարև,
 Տասներկու առաքելոց տանք բարև,
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արև:
 Եկ բարև, եկ բարև,
 Երեք հարիւր վացունը վեց հաչրասկետաց տանք բարև,
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արև:
 Եկ բարև եկ բարև,

Քառսուն զինաւորաց տանք բարև,
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արև:
 Եկ բարև, եկ բարև,
 Քառսուն մանկանց տանք բարև,
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արև:
 Եկ բարև, եկ բարև,
 Երեք մանկունքին տանք բարև,
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արև:
 Եկ բարև, եկ բարև,
 Քառասուն կուսանաց տանք բարև,
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արև:
 Եկ բարև, եկ բարև,
 Ամենայն սրբոց տանք բարև,
 Թագաւորին, թագուհուն տայ շատ արև:

Ազա կանդնում են բոլորչի շղթայուած և թագաւորին կանգնեցնելով շրջանի կեդրոնում, երեսը դէպի սրբոթարան (արևելք), ազափները զովում են նորան հետևեալ երգով.

Թագաւոր, քնչ բերեմ քեզ նման,
 Կեարնան վարդն որ կբացուի,
 Խոտն (հոտն) արևուզ նման:
 Թագաւոր, քնչ բերեմ քեզ նման,
 Նարկիզ ճաղիկ որ կճաղկի,
 Խոտն անեօշ արևուզ նման:
 Թագաւոր, քնչ բերեմ քեզ նման,
 Բալասան ճաղիկ որ կճաղկի,
 Խոտն անեօշ արևուզ նման:
 Թագաւոր, քնչ բերեմ քեզ նման,
 Սուսուն ճաղիկ որ կճաղկի,
 Խոտն անեօշ արևուզ նման:
 Թագաւոր, քնչ բերեմ քեզ նման,
 Սուսամբար ճաղիկ որ կճաղկի,
 Խոտն անեօշ արևուզ նման:
 Թագաւոր, քնչ բերեմ քեզ նման,
 Ամառուան վարդն որ կբացուի,
 Խոտն անեօշ արևուզ նման:

Թագաւորը, քաւորն և ազափները գնում են ուրբաթ օր փեսայի գոքանչին այցելութեան: Փեսան համբուրում է

նորա ձեռքը, իսկ նա փեսայի երեսը: Փեսան և քաւորն ստանում են գուլպա. արխայուղ և այլն ըստ կարողութեան: Ապա պտտում են զլիզի մեծերի մօտ, համբուրում է փեսան նորանց ձեռքը. ծաղկափունջ է մատուցանում նորանց իբրև հրաւիրման նշան և նոքա էլ համբուրում են նորա երեսը: Այս հրաւէրը կոչւում է „խարնըսի խարար“:

Հրաւէրի հետևեալ օրից քաւորը միշտ իւր ձեռքում պրտտեցնում է ուրցը, մինչև հարսանիքի վերջը:

Հրաւիրուածների առաջ կատարւում է մսացու կովի կամ եղան մորթելու հանդէսը: Հանդիսաւոր կերպով դուրս են հանում նորան մի ընդարձակ տեղ, շրջապատում են նորան կանայք և տղամարդիկ: Զուռնան ածում է „Քեօր օղլու“ եղանակը: Թագաւորը մօտենալով՝ ոտակապ և վայր ձգած մսացուն՝ գանակով փոքր կտրում է նորա վզի կաշին, որից յետոյ մորթում է մի այլ անձը: Մսացուի մազից մի քանիսը դնելով արիւնոտ դանակի բերանին, թագաւորը պահում է իւր մօտ մինչև հարսանիքի վախճանը:

Երևանում փեսան նստում է մսացուի վերայ մինչև մորթել՝ վերջացնելը: Ապա արիւնոտում է մի կողպէք և տալիս է իւր մօրը պահելու մինչև առագատտը: Իսկ Գաւալու գիւղում արեան մէջ թաթախում են դանակ և մաղէ լար: Խաչիկ գիւղում մսացուի պոչից երկար մաղերը իրար կապելով գօտի շինում և արեան մէջ թաթախելով կապում է թագաւորը իւր մէջքը, անմիջապէս մարմնի վերայ, որպէս զի շար աշըը չազդի նորա վերայ:

Գարալազեագի նոր հայերի (գաղթած) մէջ մսացուն մորթելուց յետոյ զուռնան „Քեօր օղլու“ եղանակը փոխում է *մեռնախաղի* եղանակի, որով աղջկունք և հարսներ թաշկինակները ծածանելով պարում են մսացուի շուրջը: Ապա տղամարդիկ նորանց հետ շղթայ կապած կազմում են ահագին շրջան և պարում են *գեօնդ* (եայլի): Այդ ժամանակ թագաւորի ազգականները գինի են բերում իւրեանց տներից և հիւրասիրում են ամենին:

Այլ գիւղերից հրաւիրուած հիւրերի զալու ժամանակ զուռ-

նան դուրս է գալի ընդառաջ և ընդունում է իւրաքանչիւրին, իբրև արտակարգ պատիւ:

Սոյն ուրբաթ երեկոյին պատրաստում են հարսնահօր տան համար, քեասումի համաձայն, բոլոր խոստացած նիւթեղէնը, որ կոչւում է *նանը գօշտ*, (նան – հաց, գօշտ միս) և բարձած ազգիներից մինի վերայ, ուղարկում են խնամու տունը: Նա ասում է *աղուէս*:

Աղուէսին ուղեկցում են զուռնան, պարող աղջկունք և տղայք: Գորանց գնալու ժամանակ, ճանապարհին, ընդառաջ է դուրս գալիս գիւղի կտրիճներից մինը և առաջարկում աղուէսին կամ մենամարտել կամ տալ նորան մի գաւաթ գինի և աղատուել: Մենամարտը հաղիւ է գլուխ գալի, այլ չաճախ ուղածն ստանալով՝ հաշտութեամբ է վերջանում գործը:

Ղազախում, փեսան իւր ազգիներով երբ դնում է մի այլ գիւղ իւր նշանածի հետ պսակուելու, նա իւր հետ անպատճառ պէտք է վերցնէ հաց, խաշած միս, գինի հարսնացուի գիւղի ազգիների համար, որոնք խմբովին կտրում են գիւղի մօտ հարսնաւորների ճանապարհը և պահանջում են իւրեանց հասանելի ուտելիքէնը, որ նորսնցում կոչւում է *ազափանա*: Երբեմն ազափանայի համար ընդհարումն է ծագում:

Գարալազեագում նանը գօշտը տանելիս տանում են և *խինա*, որի կէսը քաւորակինը թագաւորի տանը պահում է ու մօտիկ հրաւիրուած ազգականներին բաժանելով՝ ստանում է նորանցից նուէր:

Աղուլիսում և շրջակայքում, Հարսանեաց հանդիսի սկզբում, ուրբաթ օրը, սազանդարներով կամ զուռնայով կատարւում է *տաշտադէրը*: Հարսանիքի համար հաց թխող և խմոր հաւնցող կանայք տաշտի երկու ծայրից բռնած պարում են ու փեսայի հօրից ստանում են նուէր: Նոյն նուէրը տրւում է թոնդիր վառելու և գաթան թխելու ժամանակ:

Ապա ընտրւում է *մառանապետ*, որ նուէր ստանալով շալ գօտի պարտաւորւում է վերահսկել ուտելեաց և ըմպելեաց վերայ: Կերակուր եփողները՝ ամանները ձեռքներին պարելով՝ ստանում են իւրեանց հաւանելի նուէրը և կանգնում են գործի:

Մարդկանց հրաւերը կատարում է մի ընտրեալի ձեռքով, որ մի մետաքսէ թաշկինակի մէջ չոր պահած ծաղիկներ է բաժանում և թաշկինակն իրան վերցնում:

Հետևեալ օրը, շաբաթ, ընտրում է մի ազափրաշի և սա գուռնայի ուղեկցութեամբ, մետաքսէ թաշկինակը ձեռափայտի վերայ դրօշակահաման կապած, շրջագայելով հրաւիրում է թագաւորի մօտ ազգականներին, որոնք մի մի թաշկինակ են կապում ազափրաշու փայտին և գուռնային և որևէ պարզև ուղարկում փեսային:

Վերջը նուռն և խնձոր առած ազափրաշին հրաւիրում է քաւորին և քաւորակնոջը և գուռնաչու հետ սոցանից ստանում են նուէր մի մի թաշկինակ: Քաւորակինը հետը առնում է մի կտոր շարար և կանաչ ու կարմիր մետաքսէ թելհինան: Գորա համար քաւորակնոջ առաջ գնում են սինի, ջուր և հինա: Հէնց որ նա հինա և ջուր խառնում է իրար, գուռնան իսկոյն նուագում է, աղջկունք, կանաչք և տղամարդիկ, որոնք աչքերը բևեռած նայում էին քաւորակնոջ արարքը վերայ, իսկոյն ձայն են տալի ամէն կողմից «Աստուած շընորհաւոր անի», և հինան սինով բարձրացրած պարում են:

Ապա մի խոնչայի մէջ պատրաստում են զանազան մըրգեղէն և շաքար և միւս խոնչայի մէջ հարսի հանդերձը և հինան: Երիտասարդ տղայք հինայով ներկում են մի խոյլ ճակատը և մէջքը և կանաչ կարմիր թել են կապում վիզը, իսկ եղջիւրները զարդարում են վառ մօմերով:

Խոնչաներն ուսերին ազափրաշին գլուխ կանգնած՝ երիտասարդները զարդարուն խոյր առաջն արած՝ պտոյտ են տալի հանդիսականների մէջ, և յետոյ քաւորակնոջ հետ, գուռնա նուագելով տանում են այդ բոլորը հարսնացուի տունը: Նորահարսի բարեկամները գուռնայով ընդառաջ են դուրս գալիս և ընդունում են նորանց:

Տարած խոնչաները և խոյր նորից պտոցնում են հանդիսականների մէջ և յետոյ խոնչաները նուիրում են հարսնացուին, իսկ խոյր նորա եղբօրը, որից յետոյ քաւորակինը, ազափրաշին և նորանց ուղեկիցները նորից վերապառնում են փեսայի մօտ:

Հին նախիջևանում և հին Ջուղայում հարսանիքը սկըսում, (նորանց լեզուով կայնում՝ ա, բասենցոց լեզուով ԲՐՈՆՆՈՒՄ է, Վագախում-նստում՝ ա) ուրբաթ օրը և այդ օրը քաւորը իւր հաշուով բաղնիք է հրաւիրում թագաւորին իւր ազափներով և այն տեղից իւր տունը հացկերութեան, ուր գուռնայի նուագածութեամբ ուրախութիւն են անում և պարում մինչև գիշերը:

Հետևեալ օրը, շաբաթ, կէս օրից առաջ քաւորակինը բաղնիք է հրաւիրում հարսնացուին նորա հասակակից աղջկանց հետ, տանելով բաղնայան կնոջ համար նուէր մըրգեղէն և պարսկական շաքարի ամենափոքրիկ գլուխ:

Այդ օրը, առաւօտ թագաւորը ուղարկում է հարսին մի ոչխար՝ եղջիւրների վերայ խնձորներ անցուցած և վիզը կարմիր թաշկինակ կապած: Իսկ քաւորին ազափների ձեռքով ուղարկում է խոնչա (շաքարաղլուխ և մըրգեղէն) և երեկոյեան նոյն ազափներով ուղարկում է հարսին մըրգեղէն և չոր, չշաղխած, հինա և փոխարէնը հարսի տանից ստանում է նուէր մի շապիկ՝ կարմիր կամ սպիտակ դանաուզ մետաքսէ կրտորից:

Ապա երեկոյին՝ ազափները վառած մօմերով, գուռնայով, ուրախ և զուարթ գնում են քաւորի տունը՝ քաւորին հրաւիրելու թագաւորի մօտ: Քաւորը իւր հետ առնելով հինա, մօմ, զանազան մըրգեղէն, կանաչ-կարմիր ժապաւէն և հարսի նարուտը, բարեկամներով հանդերձ, շրջապատուած լիշեալ ազափներով՝ գնում են թագաւորի մօտ, որ ընդառաջ է դուրս գալի, նուիրում է նորան մի խնձոր կամ նուռն և ներս է հրաւիրում:

Երևանում նոյնպէս քաւորը իւր հաշուով հրաւիրում է բաղնիք փեսային և ազափներին, ուր լողանում են, ուր ածելում են թագաւորի և ազափների երեսի մագերը, զանազան դովասանական խօսքերով հաղցնում են թագաւորի նոր շորերը, ապա այդ տեղից գուռնայով գնում են ուղղակի քաւորի տունը, ուտում են միայն մըրգեղէն և խմում են գինի: Պարում է առաջինը քաւորի կինը կամ աղջիկը՝ ձեռքում ծածանելով

մետաքսէ թաշկինակ (բաղդադի) և ապա պտրելով մօտենում է թագաւորին և թաշկինակը կախում է աջ ուսի վերայ՝ ծայրերը ձախ թւելի տակ: Այդպէս կապած թաշկինակը կոչւում է *կոսպանդ*:

Ապա ամբողջ խումբը, սուներով իւր հետ քաւորակնօջը, գնում են թագաւորի տունը: Այտեղ ուտելուց և պարելուց յետոյ՝ գիշերը *քթեթն* (հարսանեաց հագուստ) առած, զուռնայով, վառ մաշխալաներով, ուրախական աղաղակներ արձակելով գնում են հարսի տունը:

Հին հուշայում և Հին Նախիջևանում ընթրիքից առաջ, թագաւորին առանձին սենեակում նստեցրած՝ շրջապատում են նորան և պարում են: Սափրիչը ածելում է նորա երեսը և նորա կուրծքից դեռ չառած սպիտակ թաշկինակը, սափրիչը տալիս է հայելին թագաւորի ձեռքը և հանդիսականներին հրաւիրում է նուէրներ դնել հայելու վերայ սափրիչի օգտին: Առաջինը մօտենում է քաւորը, որ համբուրելով թագաւորին, դրամական նուէր է դնում հայելու վերայ: Նորանից յետոյ մօտենում են թագաւորի մայրը, քոյրը և այլ բարեկամները:

Ընթրիքից յետոյ քահանան օրհնում է թագաւորի հանդերձը, որի ժամանակ թագաւորը և աջ ու ձախ կողմից քաւորը և խաչեղբայրը վառ մոմերով՝ չոգում են ծնկները վերայ: Քահանան իւր վարձն ստանալով քաւորից և թագաւորահօրից՝ ածուրդ է նշանակում *ազափրաշի* ընտրելու և ազափներից ով շատ է առաջարկում եկեղեցու օգտին, նա է ընտրւում ազափրաշի:

Վերջինս իրաւանց տէր դառնալով՝ սկսում է հրաւիրականները առաջ օրհնած հանդերձը հազցնել թագաւորին և չուխի մի թւելը չհազցնելով կանգ է առնում մինչև թագաւորահայրը տայ նորան *խալաթ*: Խալաթն ստանալուց յետոյ ազափրաշին տանում է թագաւորին միւս սենեակ և այնտեղ հազցնում է միւս հանդերձը:

Ապա նուագածուները տեղափոխւում են կանանց բաժին, որ հրաւիրւում են թագաւորը, կնքաւորը և խաչեղբայրը:

Քաւորի կինը կամ քոյրը՝ կանաչ ու կարմիր ժապաւէնները ձեռքին, պարելով մօտենում է թագաւորին և ժապաւէնները գնում է նորա արխայուղի կոճակներում: Սորանից յետոյ նոյն քաւորակինը կամ քոյրը պարելով մօտեցնում է ափսէի մէջ շաղախած հինան, որի մէջ աջ ձեռի ձկոյթը թաթախում են թագաւորը, կնքաւորը և խաչեղբայրը և դրամական նուէր ձգում ափսէի մէջ:

Գարալագէտի զաղթական հայերի մէջ սափրիչը ածելում է թագաւորի երեսը հրապարակով, հանդիսականների առաջ և կիսատ թողնելով նուէրներ է ստանում հանդիսականներից, որ կոչւում է *ըռըսում*, այսինքն պարտաւորութիւն: Սորանից յետոյ թագաւորը փոխում է հանդերձը, նորա քոյրը կապում է նորա ուսին թաշկինակ, նորանց բարբառով *խարջըկոթ*, և աչքերին սև դեղ է քաշում, որից յետոյ գնում են հարսի տունը:

Գաւալու գիւղում՝ խոր վիրապի մօտ, ուղարկում են հարսի համար մի տուրակ հինա ամանի մէջ, հետն էլ չամիչ, փշատ և այլ մրգեղէն, վրայից էլ թաշկինակով ծածկած: Քաւորի աղջիկը իւր գլխին դրած այդ բոլորը, զուռնայի հետ, տանում է հարսի տունը, ուր հարսնամայրը քաւորի համար ուղարկում է մի զոյգ գուլպա:

Խաչիկում առաջին ուսկապը *կարմիր* մետաքսից կապում է քաւորիկինը կամ քոյրը թագաւորի աջ ուսին, իսկ *կանաչը* ձախ ուսին կապում է հարսի տանը հարսնաքոյրը կամ մայրը: Երկու ուսկապն էլ քահանայի բաժինն է:

Ղաղախում գեղեցիկ տեսարան է, երբ թագաւորը զարդարուած նոր հանդերձով և շրջապատուած հանդիսականներով և ազափներով, որոնք այնտեղ կոչւում են *մանարներ*, կանդնած բացօթեայ, նորա քոյրը *քնալաղայայ* մետաքսէ թաշկինակը ձեռին ծածանելով, զուռնայի նուագածութեամբ սլարում է ծանրաքայլ և մօտենալով եղբօրը, համբուրում է նորան և թաշկինակը աջ ուսով կապում է ձախ թւելի տակ: Գա կոչւում է այն տեղ *ուսկապ*:

Ջիրակի, Կարսի և Բասենի գիւղորայքում հարսանքի

երկրորդ օրը մի քանի երիտասարդներ քաւորի առաջնորդութեամբ, բայց առանց թագաւորի, գնում են հարսին բերելու և սոքա կոչում են հարսնաւաններ:

Վերջիններիս գնալուց յետոյ՝ քաւորի ազգականներից մինը հրաւիրում է իւր տուն նորափեսին և ժողովում է նորա համար ազաւաններ, լողացնում են նորափեսին, հազցնում են նոր հանգերձ: Սաւիթիքը սափրում է նորա և ազաւանների երեսները: Այդ ժամանակից նորափեսին անուանում են թագաւոր: Նորա զինի Փասը կամ արախճինը սափրիչը վերցնում է իւրեան:

Ազաւանները թագաւորի վզով խաչաձև անցուցանում են մետաքսէ թաշկինակ, որ և աւում է կոսպանդ, իսկ ոտերին, հազցնում են սօլեր: Կոսպանդը և սօլերը նուիրում է քաւորը: Ազաւանները հինով ներկում են թագաւորի և իւրեանց ձեռքերը: Բայց նախքան թագաւորին հազցնելը, նորա հանգերձը քահանան օրհնում է և յանձնում է ազաւաններին:

Այլ քսանդրապօլում ազաւանաւորին թուրը ձեռքին բարձր ձայնով դիմի ու ազաւանների խմբին, ասում է. «Թագաւորի ազաւաններ, զիտէք մեր թագաւորն ինչ ունի»: Ազաւանաւորն ցոյց տալով արխաւուզը, շտրունակում է «Մի լաւ թանգաղին շալ արխաւուզ, զինը չորս թուման»: Խումբը երգում է:

Ասենք շնորհաւոր, ասենք շնորհաւոր
Մեր թագաւորին հազար շնորհաւոր:

Նոյն ազաւանների միւս խումբը երգում է տաճկերէն.

Դիախ մուբարաք,
Գէյսա մուբարաք,
Բրզըմ գիւվանգեայ՝
Ալ եշիլ գեարաք:

Այս երգի բառացի թարգմանութիւնն այս է.

Ասենք շնորհաւոր,
հազար շնորհաւոր,
Մեր նորափեսին՝
Կարմիր, կանաչ է հարկաւոր:

Ազաւի բաշին նորից ցոյց տալով մի այլ հագուստ, դիցուք շալուար, գովում է նորան և գնահատում է շատ թանգ և առաջին խումբը կրկնում է. «Ասենք շնորհաւոր» երգը, իսկ միւս խումբը՝ տաճկերէն երգը: Այսպիսով գովում է ամէն մի շորը և վերջինը գովում է գլխարկը և մետաքսէ կոսպանդը, որ երեք անգամ պտտցնելով թագաւորի գլխի շուրջը, գլխարկը դնում է նորա գլխին, իսկ կոսպանդը կապում է ուսի վերայ:

Երբ հագուստով զարգարում են թագաւորին, ապա սկսում են գովել նորա հանգերձի մասերը: Ազաւանների առաջին խումբը երգում է՝

Էս օր մեզ էրնէկ,
Մեզ հազար էրնէկ,
Մեր թագաւորն է աջ
Աչկոց խաչ ու մաչ,
Կոսպագն է կարմիր,
Արևն է կանաչ:

Սոյն այս բոլոր տուներ ամբողջութեամբ կրկնում է ազաւանների երկրորդ խումբը, որից յետոյ առաջին խումբը նորից շարունակում է և երկրորդը կրկնում է,

Էս օր մեզ էրնէկ,
Մեզ հազար էրնէկ,
Մեր թագաւորն է աջ
Աչկոց խաչ ու մաչ,
Գօտիկն է արծաթ,
Արևն է կանաչ:

Այսպէս յիշատակում են հանգերձի բոլոր մասերը: Ապա սկսում են գովաբանել անմիջապէս թագաւորին նոյն երգերով, որոնցով երգում են Ջիրակի գիւղերում և որոնք յիշատակում են ստորև այն է «թագաւոր ինչ բերում քէ նման», և այլն, որից յետոյ «ինձոր, ինձոր գլխինձոր» և այլն, գովելով նաև սորա մէջ թագաւորին, թաղուհուն, խաչեղբօրը, քահանային, տիրացուներին, ազաւաններին և այլն:

Յասենում, Ջիրակում և այլ տեղեր ազախրաշին հանդի- սականները առաջ բաղմացնելով թագաւորին՝ սկսում է երգել և հանել նորա նախ դուլպաները, ապա շալուարը, ապա ար- խալուղը, ապա շապիկը և այլն: Իւրաքանչիւրը հանելու ժա- մանակ նա բարձր ձայնով երգում է.

Օղլան, հարամգաղա սան,
Կորխերամ եալգաղասան,
Գեաթը ջորաբն չեղարեմ,
Դհա երան դագմանամ:

Սորա թարգմանութիւնն այս է.

Տղաչ, խաբեբաչ ես,
Վախենում եմ խաբես,
Բեր գուլպադ հանեմ,
Էլ ոչ մի տեղիդ չեմ դիպչիլ:

Այս տունը ամբողջութեամբ կրկնում են միւս ազախները, որ կազմում են մի առանձին երգեցիկ խումբ: Ազախրաշին շա- լուարը հանելով՝ նորից շարունակում է երգել.

Օղլան, հարամգաղա սան,
Կորխերամ եալգաղասան,
Գեաթը ուչկուրն չեղարեմ,
Դհա երան դագմանամ:

Ազախները կրկնելուց յետոյ՝ ազախրաշին նորից շարունա- կում է.

Օղլան, հարամգաղա սան,
Կորխերամ եալգաղասան,
Գեաթը արխալըղն չեղարեմ,
Դհա երան տագմանամ:

Այսպէս երգելով և բոլոր հին հանդերձը հանելով ազախ- րաշին փոխում է երգը և երգի եղանակը և սկսում է նորը հագցնել և իւրաքանչիւր մասը հագցնելիս նա երգում է՝

Գէչգըրըն, հաչ գէչգըրըն,
Բիլմագ իսա բըլգըրըն,
Գեաթը ջորաբըն գէչգըրեմ,
Դրհա երան դագմանամ:

Այն է

հագցրէք. հաչ հագցրէք,
Եթէ չի հասկանում հասկացրէք.
Բեր, գուլպէդ հագցնեմ,
Էլ ոչ մի տեղիդ չեմ դիպչիլ:

Ազախների խումբը այդ տունը կրկնելուց յետոյ՝ ազախրա- շին շարունակում է երգել հայերէն.

Ըսենք շնորհաւոր, ըսենք շնորհաւոր,
Մեր թագաւորի գուլպէք շնորհաւոր:

Այս տունն էլ խումբը կրկնելուց յետոյ՝ ազախրաշին շա- րունակում է նորից թուրքերէն.

Գէչգըրըն, հաչ գէչգըրըն,
Բիլմագ իսա բըլգըրըն,
Գեաթը ուչկուրն գէչգըրեմ,
Դհա երան դագմասամ:

—
Ըսենք շնորհաւոր, ըսենք շնորհաւոր,
Մեր թագաւորի շալուար շնորհաւոր:

—
Գէչգըրըն հաչ գէչգըրըն,
Բիլմագ իսա՝ բըլգըրըն,
Գեաթը քեօնագըն գէչգըրեմ,
Դհա երան դագմասամ:

—
Ըսենք շնորհաւոր, ըսենք շնորհաւոր,
Մեր թագաւորի շապիկ շնորհաւոր:

—
Գէչգըրըն, հաչ գէչգըրըն,
Բիլմագ իսա բըլգըրըն,
Գեաթը զիպուրն գէչգըրեմ,
Դհա երան դագմասամ:

—
Ըսենք շնորհաւոր, ըսենք շնորհաւոր,
Մեր թագաւորի կաբէն շնորհաւոր:

—
Գէչգըրըն, հաչ գէչգըրըն,
Բիլմագ իսա բըլգըրըն.

Գեաթը կուրջաղն գէջըրըմ,
Դհա երան դագմասամ:

Ըսենք շնորհաւոր, ըսենք շնորհաւոր,
Մեր թագաւորի գօտիկ շնորհաւոր:

Ապա թուրը կապելով թագաւորի մէջքը՝ ազաւիրաշին եր-
գում է և ազաւիրները կրկնում են հետևեալը:

Այ նազինան, նազինան,
Քեաբաբ բիշար քեօզինան,
Գեաթը ասպաբն գէջըրըմ
Արգեանլարըն սեօզինան:

Սորանից յետոյ ազաւիրները միացած դուրում են թագա-
ւորին հատևեալ երգով:

Մեր թագաւորն էր խաչ,
Հայոց խաչ ու մաչ,
Գուրբէքն էր նշխուն,
Արևն էր կանանչ:

Մեր թագաւորն էր խաչ,
Հայոց խաչ ու մաչ,
Չալուարն էր կապոյտ,
Արևն էր կանանչ:

Մեր թագաւորն էր խաչ,
Հայոց խաչ ու մաչ,
Բինիշն (վերարկու) էր կարմիր,
Արևն էր կանանչ:

Մեր թագաւորն էր խաչ,
Հայոց խաչ ու մաչ,
Փէշքիրն էր նշխուն,
Արևն էր կանանչ:

Մեր թագաւորն էր խաչ,
Հայոց խաչ ու մաչ,
Գդակն էր բուխարա,
Արևն էր կանանչ:

Մեր թագաւորն էր խաչ,
Հայոց խաչ ու մաչ,

Չապիկն էր կարմիր,
Արևն էր կանանչ:

Այ նոր գեօզալ նոր գեօզալ,
Նոր և շնորհաւոր գեօզալ,
Քո բինիշն էր նոր, գեօզալ:

Սոյն այս գովը երգում է և Գաւալու գիւղում, որի ժա-
մանակ բարեկամները փաթաթուում են թագաւորի վզով և
մի մի թաշկինակ դնում նորա գօտիում:

Քասենու գիւղերում թագաւորի շորերը հաղցնելու ժամա-
նակ ազաւիրներից մինը հաղցնում է և միւսները երգում են
հետևեալ երգը:

Մեր թագաւորին ինչ պիտի,
Մէկ լաւ շաբիկմ պիտի.
Մեր թագաւորին ինչ պիտի,
Մէկ լաւ զուլթ իշլիկմ պիտի.
Մեր թագաւորին ինչ պիտի,
Մէկ լաւ գօտիկմ պիտի.
Մեր թագաւորին ինչ պիտի,
Մէկ լաւ ֆասմ պիտի.
Մեր թագաւորին ինչ պիտի,
Մէկ լաւ վալամ պիտի.
Մեր թագաւորին ինչ պիտի,
Մէկ լաւ դիզլիկմ պիտի.
Մեր թագաւորին ինչ պիտի,
Մէկ ջուխտ ջորաբմ պիտի.
Մեր թագաւորին ինչ պիտի,
Մէկ ջուխտ կո՛ղարամ պիտի.
Մեր թագաւորին ինչ պիտի,
Մէկ լաւ փէշքիրմ պիտի:

Նախկին ժամանակ՝ Քասենում՝ թագաւորի գլխին դնում
էին ֆաս և ղազ (չալմա) և վրան ծածկում էին ընկնիչ, այ-
սինքն կարմիր մահուգից երկար վերարկու: Ամէն ոք ձեռնահաս
չէր, իբրև թանգազին հանգերձ, ունենալ իւր սեպհականը և
հարկադրուած էր խնդրել ուրիշներից և սորանից լատաջ էր գալի
անյարմարութիւն: Ուստի դորանց փոխարէն այժմ գործ են
ածում մորթէ գտակ և մաղէ եափնջի:

Հանդերձ հագնելու նշանաւոր հանդէսը վերջանալուց յետոյ թագաւորը համբուրում է քաւորի ձեռքը և շրջապատուած ազափներով զնում է նախ եկեղեցին՝ համբուրելու, ապա պրտտում է զիւզի բարեկամների տները, ուր նուէր է ստանում դրամ, թաշկինակ և այլն, իսկ նորա ազափները հիւրասիրւում զանազան ուտելիքներով: Ապա դառնում են թագաւորի տունը:

Սակայն թագաւորը քաւորի տանից դուրս գալուց սկսած մինչև թագը վերցնելը միշտ ծածկում է քիթը կլորած թաշկինակով, որ իբրև թէ զիւզում հարբուխ ցաւը չերևայ:

Տուն վերադառնալով թագաւորը քաւորի և ազափների հետ բազմում է տախտակներից կազմած բարձրութեան վերայ, որ ասում է թախտ: Երբ այս կամ այն հրաւիրուածը մըտնում է տուն, բարևում է թագաւորին և աղափներին այս խօսքերով. «Քարև պարոնաց» և ազափները պատասխանում են. «Աստու բարին գալողաց»:

Հէնց որ, երբեմն, հրաւիրականներից մինը կամ միւսը ձայն է տալիս «թուն է», ազափները պատասխանում են «Աստու գառն է» և իսկոյն թագաւորը, կլոր թաշկինակով քիթը ծածկած, ոտքի է կանգնում և կանգնած մնում, մինչև հիւրերից նստելու թոյլտուութիւն չստանայ:

Գեռ քանի թագաւորը քաւորի տանն է լինում, այնտեղ ազափները շինում են փայտից ծառ, որ պարսկահայերի մէջ, ինչպէս տեսանք, կոչում է ուրց: Ծառի վերի ծայրը կոչում է կարաւ: Ծառը զարդարուած է զոյնզոյն թելերով:

Թագաւորն իւր տուն վերադառնալուց յետոյ ծառը բերում են քաւորի տնից, որպէս զի թագաւորի տանը զարդարեն նորան խնձորներով, ջղանով և ապա զովաբանեն: Երկու ամուսնացած տղամարդ նստած բռնում են ծառը և նորանց առաջ կանգնում է լեզուով ճարպիկ մի տղամարդ: Առաջինը մօտենում է քաւորակինը և նուիրում է մի խնձոր՝ վրան զարկած զոյնզոյն թելերով զարդարուն փոքրիկ խաչ, որ կոչում է ջղան:

Կանգնած ճարպիկը օդի մէջ պտտցնելով ջղանը, զուար-

ճախօտութեամբ կոչում է «օրհնեա, տէր, ջամիաթ, անգաջ արէք, քաւորկինը սանահօր համար մի խնձոր է բերել, ջղան վրէն, հայով, հոյով, նորա մարդը ինչ որ աշխատել է մալով, մարդով, տուէլ է էս մի խնձորին, որ կաթէ խոյ, խորասան, Հինդ, Հնդստան, Բալխի, Բուխարայ, Զաքի, Զիրվան, Զամախի, Ստամբուլ, էս օրս իրան տղին եղնի, շէն մնայ՝ շէն»: Ամենքն էլ ձայնում են. «շէն մնայ»:

Ծառ բռնողներից մինը տնկում է ջղանով խնձորը ծառի վերին ծայրում՝ կաքաւի վերայ: Ապա բերում են խնձոր թագաւորի քոյրը, մայրը կամ հարսը և միւս բարեկամներն ու հրաւիրուածները և նրանց բերածը զովելուց յետոյ զարդարում են ծառը:

Ապա երկու խմբի են բաժանում և սկսում են զովասանել ծառը հետևեալ կերպով: Առաջին խումբը հարցական ձևով զիմում է երկրորդին, իսկ երկրորդ խումբը պատասխանի ձևով զարձնում է առաջինին: Աստի, որպէս զի կրկնութիւն չլինի, առաջին խումբը նշանակում եմ ա տառով, իսկ երկրորդը բ տառով:

- ա. Օրհնեալ է Յիսուս,
Օրհնեալ է Քրիստոս,
Խաչս բազմանեցաւ,
Ծառս բազմանեցաւ,
Ծաղկեցաւ ծառս կանանչ,
Ինչո՞ւ նման էր,
Լուսեղէն պտուղ տուաւ,
Ինչո՞ւ նման էր:
- բ. Ծաղկեցաւ ծառս կանանչ,
Ինչո՞ւ նման էր,
Լուսեղէն պտուղ տուաւ՝
Նայվայ նման էր:
- ա. Այն ձեղբեր ալփին ալփին
Ինչո՞ւ նման էր,
Լուսեղէն պտուղ առաւ՝
Ինչո՞ւ նման է:
- բ. Այն ձեղբեր ալփին ալփին,
Աստուածածինն էր,

- Լուսեղէն պտուղ առաւ,
Տէր Միածինն էր:
- ա. Այն էգուան հովն էր հովեց
Եւ աննման էր.
Աղուէնուն գելնէր, մտնէր,
Ինչն նման էր:
- բ. Այն էգուան հովն էր հովեց,
Առաքեալներն էր.
Աղուէնուն գելնէր մտնէր,
Արդար հոգիքն էր:
- ա. Այն բախչէն, կանանչ բախչէն
Ինչն նման էր.
Ծով մը կար բախչի դուռը,
Ինչն նման էր:
- բ. Այն բախչէն, կանանչ բախչէն,
Այն մեր դրախտն էր.
Ծով մը կար բաղչի դուռը՝
Այն էլ դժոխքն էր:
- ա. Ղարղ (կանգ) եղաւ միջնաձովին,
Ինչն նման էր:
Այն աղբիւր որ ոտնազնաց,
Ինչն նման էր:
- բ. Ղարղ եղաւ միջնաձովին,
Ինչ մեղաւորներն էր:
Այն աղբիւր որ ոտնազնաց,
Քէտ Որդանանն էր:
- ա. Այն աղբիւր որ մկրտեցին,
Ինչն նման էր.
Ճեղքերն ամէն ալփին ալփին՝
Եացվաչ նման էր:
- բ. Աղբիւր որ մկրտեցին,
Սուրբ Կարապետն էր,
Ճեղքերն ամէն ալփին ալփին,
Այն խնկէ ծառն էր:
- ա. Ին սեղան բարձրասեղան
Ինչն նման էր.
Ինչ հնձան բոլոր հնձան,
Եացվաչ նման էր:

- բ. Ին սեղան բարձրասեղան
Եջմիածինն էր.
Ինչ հնձան, բոլոր հնձան,
Ինչ Երուսաղէմն էր:
- ա. Այն խաչեր, բարձրախաչեր
Ինչն նման էր.
Բուրվառ ձեռք որ ժուռ կուզար՝
Ինչն նման էր:
- բ. Այն խաչեր, բարձրախաչեր,
Տէր քահանան էր.
Բուրվառ ձեռք որ ժուռ կուզար՝
Այն սարկաւազն էր:
- ա. Այն սալամ (թռչուն) սար հնչելով
Տեսէք այն ձրն է.
Ինչ կաքաւ կարկաչելով
Տեսէք այն ձրն է:
- բ. Ին սալամ սար հնչելով
Ղարղապետն է,
Ինչ կաքաւ կարկաչելով
Երիցաներն է:
- ա. Ինչ ճնճուղ ճրլլտալով
Տեսէք այն ձրն է.
Երկու ճնճուղ կանանչ բաղչէն,
Տեսէք այն ձրն է:
- բ. Ինչ ճնճուղ ճրլլտալով,
Տիրացուներն է,
Երկու ճնճուղ կանանչ բաղչէն
Արդար հոգիքն է:
- ա. Արեգակ նոր շաղէշաղ
Ինչն նման էր:
Լուսնեակ նոր սարն ելաւ,
Ինչն նման էր:
- բ. Արեգակ նոր շաղէշաղ,
Այն թագուհին էր.
Լուսնեակ նոր սարն ելաւ,
Այն թագաւորն էր:
- ա. Յիսուսի Քրիստոսի սուրբ զօրութիւնով
Ծառս ճաղկեցաւ.

- Սուրբ Կարապետի սուրբ գորութիւնով
Ծառս ծաղկեցաւ:
- բ. Սուրբ Էջմիածնի սուրբ գորութիւնով
Ծառս ծաղկեցաւ:
Սուրբ Լուսավորչի սուրբ գորութիւնով
Ծառս ծաղկեցաւ:
- ա. Սուրբ Արուստղէմի սուրբ գորութիւնով
Ծառս ծաղկեցաւ:
Սուրբ Նարեկացու սուրբ գորութիւնով
Ծառս ծաղկեցաւ:
- ա. Ծաղկեցաւ ծառս կենաց
Տեսէք այն հրն է,
Բազմեցաւ խէչն ի գլխուն,
Տեսէք այն հրն է:
- բ. Ծաղկեցաւ ծառս կենաց
Էն թագաւորն է,
Բազմեցաւ խէչն ի գլխուն,
Էն իւր պսակն է:
- ա. Այն խնձոր, գլխախնձոր,
Տեսէք այն հրն է,
Այն խնձոր, գլխազոր,
Տեսէք այն հրն է:
- բ. Այն խնձոր, գլխախնձոր,
Թագաւորահայրն է,
Այն խնձոր գլխազոր,
Այն ազափներն է:
- բ. Այն խնձոր աջ աթոռին
Տեսէք այն հրն է:
Այն խնձոր ձախ աթոռին,
Տեսէք այն հրն է:
- բ. Այն խնձոր աջ աթոռին՝
Այն խնձորահայրն է,
Այն խնձոր ձախ աթոռին՝
Էն թագուհին է:
- ա. Այն չորբան, բարձրաչորբան
Եւ աննման էր,
Հրեղէն թուրն ի ձեռին
Ինչն նման էր:

- բ. Այն չորբան, բարձրաչորբան,
Այն հարսեղբայրն էր,
Հրեղէն թուրն ի ձեռին՝
Այն խնձորահայրն էր:
- ա. Այն երկինք որ ամպ ու պարզ
Եւ աննման էր,
Երկու հաւք որ տետետափ (չոզնած)
Ինչն նման էր
- բ. Այն երկինք որ ամպ ու պարզ
Այն խնամտիք էր,
Երկու հաւք որ տետետափ,
Խնամտոց խօսքերն է:
- ա. Այն խնձոր գլխազոր
Ինչն նման էր,
Փուռն ջ մանուշակ որ ծաղկեցաւ,
Եւ յալաց նման էր:
- բ. Այն խնձոր գլխազոր
Էն ազափներն է,
Փուռն ջ մանուշակ որ ծաղկեցաւ,
Էն աղջիկներն էր:
- ա. Էն փտած կոճն ի որմին,
Տեսէք էն հրն է,
Էն կարաս գլխազոր՝
Տեսէք էն հրն է:
- բ. Էն փտած կոճն ի որմին
Հալեորներն է,
Էն կարաս գլխազոր,
Պառաւներն է:
- ա. Զուռն եկաւ պարկն ի բերան,
Տեսէք էն հրն է,
- բ. Զուռն եկաւ պարկն ի բերան,
Գեղի գգիրն է:

Սուրանից յետոյ զիմելով անմիջապէս թագաւորին սկսում են զովաբանել նորան հետեւեալ երգով:

Թագաւոր, ի՛նչ բերեմ քէ նման,
Քո կանանչ արեւուդ նման,
Էն բալասան ծաղիկն՝ որ կբացուի,
Բացուի արեւուդ նման:

Թագաւոր, ինչ բերեմ քէ նման,
Քո կանանչ արևուդ նման,
Էն կարմիր վարդն որ կբացուի,
Բացուի արևուդ նման:

Թագաւոր, ինչ բերեմ քէ նման,
Քո կանանչ արևուդ նման,
Սիրուն մանիշակ, որ կբացուի,
Բացուի արևուդ նման:

Թագաւոր, ինչ բերեմ քէ նման,
Քո կանանչ արևուդ նման,
Էն խունկի ծաղիկ որ կբացուի,
Բացուի արևուդ նման:

Թագաւոր ինչ բերեմ քէ նման,
Քո կանանչ արևուդ նման,
Անթառամ ծաղիկ՝ որ կբացուի,
Բացուի արևուդ նման:

Թագաւոր, ինչ բերեմ քէ նման,
Քո կանանչ արևուդ նման,
Ըուշան ծաղիկ՝ որ կբացուի,
Բացուի արևուդ նման:

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունակ,
Ծաղիկ ինչէնի պիտէր ծաղկունակ,
Ծաղիկ պալասան պիտէր ծաղկունակ:

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունակ,
Ծաղիկ ինչէնի պիտէր ծաղկունակ,
Ծաղիկ նունենի պիտէր ծաղկունակ:

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունակ,
Ծաղիկ ինչէնի պիտէր ծաղկունակ,
Ծաղիկ համասփիւռ պիտէր ծաղկունակ:

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունակ,
Ծաղիկ ինչէնի պիտէր ծաղկունակ,
Ծաղիկ պրաբեօն պիտէր ծաղկունակ:

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունակ,
Ծաղիկ ինչէնի պիտէր ծաղկունակ,
Ծաղիկ նունուֆար պիտէր ծաղկունակ:

Թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունակ,
Ծաղիկ ինչէնի պիտէր ծաղկունակ,
Ծաղիկ ոսկեծաղիկ պիտէր ծաղկունակ:

Վերջապէս գովաբանները դիմում են թագաւորի ճնո-
ղաց և ազգականներին հետևեալ երգով՝

Գնացէք, ասէք թագւորահէր, թագւորահէր,
Ծառդ գոված է:

Եզ մի խորվու, տիկ մի զինի

Ծառ գովողինն է:

Գնացէք ասէք, թագւորամէր, թագւորամէր,
Ծառդ գոված է:

Սեւ մը սեղան, խոց մը խորվու

Ծառ գովողինն է:

Գնացէք ասէք, թագւորաքուր, թագւորաքուր,
Ծառդ գոված է:

Ուլ մի խորվու, զաւ մի զինի

Ծառ գովողինն է:

Գնացէք ասէք, թագւորահարս, թագւորահարս,
Ծառդ գոված է:

Չորս ջուխտ գուլպայ մի մահրամայ

Ծառ գովողինն է:

Գնացէք ասէք, թագւորաղբէր, թագւորաղբէր,
Ծառդ գոված է:

Երկու ճնճուդ, մէկ գարէ հաց

Ծառ գովողինն է:

Գնացէք բերէք սինով սեղան,

Գաւով զինի, ջուխտ գաթաներ,

Նախշուն գուլբէք:

Ծառ գովողին խալաթ տուէք:

Ծառ գովողներն ստանում են ձուածեղ, հալուա, զինի,
սեր, և այլ ուտելիղէն: Ազափները ծառը զգուշութեամբ պա-
հում են ապահով տեղ, որպէս զի աղջկունք չգողանան և տը-
ղայոց վերայ չծիծաղեն:

Համախու դաւառում, ուր կան 24 մեծ և փոքր հայ զիւ-
ղեր Ղարաբաղի, Թաւրիզի, Սպահանի գաղթականներ, չունին
հարսանիքի ժամանակ այն սիրուն հանդէսները, որ տեսնում
ենք Բասենի, Ղիրակի և կամ Գարալագեաղի զիւղերում: Սա-
կայն այստեղ էլ հայ ժողովուրդը գուրկ չէ կրօնական զգա-
ցումներից. այստեղ էլ փեսան և հարսը իւրեանց ապագայ յա-
ջողութիւնը և բարօրութիւնը յանձնում են տեղական ուխտա-

տեղերի բարեխօսութեան, ուխտատեղիների, որոնք կազմում են մի ծառի տակ բազմեցրած մի տափարակ քար, կամ մի քանի հասարակ քարեր իրար վերայ դարստած:

Հէնց հարսանիքի սկզբում փեսան առանձին, շրջապատուած իւր ազափներով—մակարներով-գուռնայի նուագածութեամբ և հարսն առանձին, շրջապատուած երկու հասակակից աղջիկներով և երիտասարդ հարսներով, ուխտ են գնում իւրաքանչիւրն իւր գիւղի մօտի սրբատեղերը, ջերմեռանդութեամբ աղօթում են, մոմ են վառում, խունկ են ծխում, համբուրում են անպաճոճ քարերը և դառնում են տուն: Եթէ գիւղի շուրջը կան մի քանի ուխտատեղիներ, ոչ մինը զանց չեն անում, բոլորին էլ կարգով այցելում են:

Այսպէս, օրինակ, Զարդեարան գիւղում ուխտ են գնում «Խաչի Սրո» կոչուած տեղը, որ գիւղից դէպի արևելք Ամրաքիւ լեռան ծառախիտ անտառի մէջն է: Բահլիան գիւղում այցելում են «Նահատակ» ուխտատեղին, որ գիւղի եղբում, բարձրագիւր բլուրի վերայ է, հասարակաց հանգստարանի մէջ: Քեականդի գիւղում հինգ սրբատեղիք կան, 1. «Գալլաքի բաղի նահատակ», 2. «Մուսիանց սուրբ», 3. «Ռուշանենց կամ քեօխենց սուրբ», 4. «Սրբի Բաղ» և 5. «Թեղի տակի սուրբ»: Այսպէս էլ միւս հարևան գիւղերում:

Մինչև այժմ խօսում էի գլխաւորապէս փեսայի նախապատրաստութեան մասին: Այժմ խօսեմ թէ ինչ նախապատրաստութիւններ և հանդէսներ են կատարում աղջկայ, այսինքն նորահարսի տանը:

Հին Նախիջևանում և Հին Ջուղայում, շաբաթ երեկոյին հարսանիքի երկրորդ օրը, հասակակից երիտասարդ աղջկունք հարսնացուին շրջապատելով հինա են գնում նորա ձեռքերի վերայ, ներկելու նրանց: Հետևեալ օրը, կիրակէ, թագաւորը, քաւորը, խաչեղբայրը, ազափբաշին, վառ մոմերը ձեռքները, տանում են հարսի տունը նոր հանգերձը:

Հանդերձը հազցնելուց յետոյ հրաւիրում են քաւորին որ հարսի գօտիկը կապէ: Նախ քաւորը իւր գզակը ծածկում է հարսի գլխին և քամարի երկու ծայրից բռնած՝ երեք անգամ

անց է կացնում հարսի գլխից և ոտքերից, ասելով «օխտը տղայ բերես, մի աղջիկ» և ապա կապում է քամարը նորա մէջքը և նուէր տալի հարսի գլուխ կապողին, ու հեռանում է կանանց բաժնից:

Այս տեղ զոքանչը նոր մոմեր է դնում փեսայի և միւսների ձեռքում, նուիրում է փեսային, ըստ կարողութեան, ժամացոյց, կամ երեքին էլ մի մի մետաքսէ թաշկինակ, դնում է նորա առաջ խոնջա զանազան ուտելեղէններով (հաւ, հալուա, դաթայ վարազածածկ կամ կարմիր ձու և այլն, որ ազափբաշին իսկոյն և եթ ժողովում, տանում է միւս օրը այցում վայելելու համար:

Գաւալու գիւղում խոր վիրապի մօտ՝ հարսի քամարը կապում է հարսի եղբայրը, առանց գլխարկ դնելու հարսի գլխին, իսկ քաւորը ներս է հրաւիրում միայն փող նուիրելու գլուխ կապողին:

Գարալագեազի գաղթական հայերի մէջ, կիրակէ օրը, թագաւորը քաւորի, ազափների և բոլոր իւրայինների հետ գուռնայով գնում են հարսի տունը հարսին բերելու: Եթէ հարսը մի այլ գիւղումն է, այն ժամանակ յիշեալ անձինք գնում են ձիանց վերայ, հրացաններ և ատրճանակներ արձագնում են ձիանց վերայ, հրացաններ և ատրճանակներ արձակում, վերայ, ճարպիկ շարժումներ են անում, հրացաններ արձակում, մի խօսքով՝ աշխատում են գիւղի ուշադրութիւնը իւրեանց վրայ դարձնել: Սօքա արագութեամբ մօտենում են գիւղին և նորից ձիու գլուխը թեքում ու նոյն արագութեամբ յետ արշաւում գէպի գուռնայիները, որոնք միւս հանգիստականների հետ յետևից կամաց յառաջ են գալի: Ձիարշաւի ժամանակ հետ յետևից կամաց յառաջ են գալի: Ձիարշաւի ժամանակ հետ յետևան նուագում է, այդ կողմերում սովորաբար «Քեօր օղլու» յայտնի եղանակը: Ինչ կտակած որ գիւղացիք մեծ և փոքր դուրս են գալի նայելու:

Սակայն պէտք է ասել որ այս ձիարշաւը կատարում է ամենայն տեղ: Նոյն սովորութիւնը մենք տեսնում ենք

Չիրակում, Բասենում, Երևանի կողմերում, Ղազախում և այլուր:

Աղջկայ տունը շինում են թախթ թագաւորի նստելու համար: Աղջկայ հայրը նուիրում է թագաւորին թաշկինակ կամ քիսա և կամ այլ իր և նուէրը կախում է թագաւորի դռակից երևալու համար: Նոյնը նուիրում են և քաւորին:

Եթէ թագաւորամայրը նոյնպէս եկել է հարս տանելու՝ նորա մասին երբեմն ասում են զուարճանալու և ծիծաղելու համար հետեեալ խօսքերը.

Խնամի, դու խոշ ես եկել,
Դարդակ ու բոշ ես եկել,
Երկու բլոճ ես բերել,
Ին էլ ճամբին ես կերել.
Բերածդ է կանանչ կապաց,
Թւերն ու՞ փէշը ծակ ա.
Խնամի, դու խոշ ես եկել,
Դարդակ ու բոշ ես եկել:

Հացկերոյթից յետոյ հազցնում են հարսի հանդերձը: Հազցնում է մի կին, որ հարսի զլուխը չէ կապում մինչև քաւորը նուէր չչնորհէ նորան: Քլուխն չարդարելու ժամանակ զուռնան նուագում է. աղջկունք պարում են, իսկ հարսը տխուր լալիս է: Այ մի երգ չեն երգում:

Ապա մօտենում է թագաւորահայրը և կապում է հարսի քամարը երեք անգամ անցկացնելով նորա գլխից, մէջքից և ոտից: Հարսնահայրը նուիրում է իւր խնամուն մի գտակ ու ինքը նորանից ստանում է գրամական նուէր:

Աղջիկը (հարսը) եօթն անգամ պտտում է հայրական թոնգլի շուրջ, մի անգամ ծնկաչօք համբուրում է թոնգլի շուրթը, համբուրում է հօր ոտքը, մօր ձեռքը, տան շեմի գետինը, դրսի դրան շրջանակը և հրաժարական է տալի հայրական տանը, մայրական օջախին:

Սագանդարները կամ զուռնաչիները բռնում են շիմը և չեն թողնում որ հարսն անցնի, որպէս զի հարսի հայրը նուէր տալ նորանց: Նուէրը կոչւում է զուռըռնել:

Երկու աղջիկ, որ ասում են կըշտի քիւր (կողքի քոյր), իսկոյն բռնում են հարսի երկու ձեռքը, որ արանքով մարդ չանցնի և այդպէս պահում են նորան մինչև հարսանիքի վերջը:

Աղափները և թագաւորի կողմի մարդիկ, դուրսը կանգնած, գլխամամբ գոչումներ են անում «ճինինի, ճինինի, հարսը տարան», որպէս զի բարկացնեն հարսի ծնողաց և բարեկամներին:

Այդ հրաժարականի, լացի, աղմկի և ուրախութեան ժամանակ աղափներից մինը, որ կոչւում է աղուէս, ընկնում է հարսի հօրանց հաւերի ետեից և ծածուկ աշխատում է բռնել նորանց և տանել, որպէսզի յետոյ աղափները ուտեն, քէֆ անեն:

Այտեղ այդ անձը հաւագողութեան համար կոչւում է աղուէս և այն բառով մի անձնաւորութիւն հարսանիքի ժամանակ ամենայն տեղ հայերի մէջ կոչւում է աղուէս, որի պատճառը շատ շատերը չգիտեն. բաց շատ տեղ էլ աղուէսը հաւ չէ զողանում, այլ լրաբեր է հարսանիքի ժամանակ:

Թագաւորը, ձեռի թաշկինակով մի խնձոր փաթթած, սեղմում է միշտ իւր շրթունքները նորանով: Եկեղեցին պսակի գնալու ժամանակ աղուէսներից մինը իւր հետ տանում է մի գնալու ժամանակ աղուէսներից մինը իւր հետ տանում է մի գնալու ժամանակ: Իւրաքանչիւր հանդիսական իրագաւթ զինի և մի բաժակ: Իւրաքանչիւր հանդիսական իրաւունք ունի զինով բաժակը մօտեցնել թագաւորի բերանին ու ասել. «Լիւսը Լիւսաւորջին, հաւատն է Քրիստոսին, օրհնալ Աստուած, անիւշ, անիւշ, անիւշ» և թագաւորը անձայն անժպիտ, խոնարհ, սնտրտունջ, մի կաթիլ բերանն է առնում ու խնձորը նորից սեղմում շրթունքներին:

Ղազախում թագաւորը աղափներով, բարեկամներով, զուռնայով գնում է հարսի տունը, այն գիշերը ընթրիք են անում, հարսի ըածինքը (օծիտը), որ լինում է սովորաբար գիւղի բահեր, օրինակ. կարպետ, խալիչա, թոկ, դօշակ, վերմակ, բարձ, ներ, օրինակ. կարպետ, խալիչա, թոկ, դօշակ, վերմակ, բարձ, ձիու զարդն, խուրջին, ջուալ, պղնձէ կուժ, պղնձէ ամաններ և այլն, մի առ մի ցոյց են տալի հանդիսականներին և ամեն կողմից լուում է «Աստուած շնահաւոր անի, շէն կենայ»:

Եթէ փեսան ուրիշ գիւղից է գալի, նա նոյնպէս շրջապատուած է լինում խաչ եղբայրով, (որ թուրը ձեռին միշտ անանջատ լինում է թագաւորի մօտ և շրջում է նորա հետ), ազախներով և բարեկամներով: Գեռ սոքա կէս ճանապարհում՝ աղուէսը առաջուց արդէն լուր է բերում հարսանքաւորներին մօտենալու մասին: Գիւղին մօտեցած՝ ձիարշաւ են սարքում, հրացաններ արձակում, ճարպիկութիւններ անում: Սոքա իւրեանց հետ բերում են աղջկայ գիւղի ազախների համար ուտելիք և ըմպելիք, որ կոչւում է ազախանայ:

Երբ աղջիկը հօր տանից պէտք է դուրս գայ, այդ տեղ կատարում է մի շատ սրտաշարժ տեսարան: Զարդարուած նորահարս աղջիկը, շրջապատուած իւր ընկեր աղջիկներով, զուռնայի նուագածութեամբ բազմաթիւ հանդիսականների առջ ծանրաքայլ գնացքով պտտւում է տան օջախի շուրջը, ծնկաչոք համբուրում է օջախի քարը, դուռը, տան շեմը, պտտւում է թոնրի շուրջը և ծնկաչոք համբուրում է թոնդրի շուրթը և ապա համբուրում է ծնողաց ձեռքը, որ վերջին հրաժարականը տայ: Այս տեսարանը Ղազախի Ուզունթալա գիւղում, դեռ ևս իմ մանկական ժամանակի յիշողութեանս մէջ խորին տպաւորութիւն է թողել:

Պսակ գնալու ժամանակ թագաւորը գնում է առաջից, նորա կողքին խաչեղբայրը իւր անբաժան թուրը ձեռին, իսկ մի քայլ թագաւորի յետևից գնում է հարսը երկու թեւը բռնած հարսնեղբայրը և քոյրերը: Հանդիսականները շրջապատում են դորանց և զուռնան ամէնի առաջ մեզմ եղանակով «առաւօտ լուսոյի» նման նուագելով ծանր քայլերով յառաջ է շարժում բազմութիւնը:

Ճանապարհի վերայ եղած տներից խօկոյն և եթ անխտիր կերպով դուրս են բերում ձուածեղ և գինի և հիւրասիրում են ազախներին և միւսներին: Ազախները երբեմն թագաւորի բերանում գնում են ձուածեղի կտոր, որ ինքն իրաւունք չունի վերցնելու: Հէնց որ հասնում են եկեղեցու դուռը, զուռնան խօկոյն և եթ կտրում է իւր ձայնը մինչև հարս ու փեսայի եկեղեցուց դուրս գալը:

Երևանի շրջակայ գիւղերում, երբ աղջկանը հագցնում են շորերը, գլուխ կապող կինը թագցնում է հարսի քամարը և չէ տալի քաւորին, որպէս զի սորանից զրամական նուէր ստանայ: Երբ քաւորը կապում է հարսի քամարը, ասում է. «Առջնէկդ տղայ լինի»: Քահանան հարս ու փեսային ձեռք ձեռքի տուած կանգնեցնում է և ծնողքը շնորհաւորում են:

Ազուլիսում, կիրակի առաւօտ, ազախբաշին մակարներին (ազախներին) մօմեր է բաժանում, իսկ ազախբաշու կինը աղջկանցն է բաժանում մօմ: Ազախբաշին զրահաւորուած իւր իշխանական գաւազանով, բայրին թաշկինակ կապած, բոլոր խումբն առած, աղմուկով և նուագածութեամբ տանում է հարսի տունը:

Հարսի հանդերձը հագցնում է քաւորի կինը, իսկ քամարը կապում է հարսի եղբայրը՝ նախապէս երեք անգամ անցկացնելով գլխով, և ոտքերի տակից հանելով: Ապա աղջկունք և կանայք համբուրում են հարսին և դուրս բերում փեսայի մօտ:

Հրաժարականի ժամանակ աղջկանը պտտացնում են տան բոլոր մասերը, սենեակները, ներքնատունը, թոնդրատունը և այլն, բայց առանց ծնրադրութեան և համբոյրների: Տնից դուրս գալու ընդմէջ տան ծառան ծածկում է դուռը և թագաւորից նուէր ստանալով՝ նորից բանում է:

Բարեկամները համբուրում են աղջկան, սա էլ համբուրում է նորանց ձեռքը. ծնողքը լալիս են և հանդէսը շարժւում է դէպի Լիեղեցի: Զուռնայիք կանդ են առնում, երեսները դարձնում են դէպի հարսնահօր տունը, նուագելու եղանակը զըռզըռօցի փոխելով՝ բարկացնում են ծնողաց ու բարեկամներին:

Սանամայրը իւր հետ բերած շաքարի կտորը և կանաչ կարմիր թելը յանձնում է քահանային, սր սա թելից շինէ հարսի համար նալօտ, իսկ շաքարը ձգի աղջկայ տնից բերած գինու բաժակի մէջ:

Հին Նախիջևանի գիւղերում պսակ գնալու և պսակից

դառնալու ժամանակ Հարսն ու փեսան բռնում են թաշկինակի երկու ծայրից, որ արանքով ոչ ոք չանցնի:

Քասենի, Ջիրակի և Կարսայ զիւղերում նախքան Հարսնառնելի դալը և Հարսին տանելը, Հարսի Հասակակից սղջկունք մէն մենակ Հարսին տանում են ուստի մօտ, ուր նորա զլուխը լուանում են, սանտրում են և երբ իրիցկինը կապում է նորա զլուխը, յղջկունք երգում են նախ և սուաջ Հետևեալ տաճկերէն երգը: Նա կոչում է «զլուխ դովալ»:

«Սղամա, աղլամա,
Գեալին, աղլամա,
Իրիցկին, իրիցկին,
Քաշը բաղլամա:

Անամ չըխտըն եպլալարի եպլասըն,
Իչարն սովուղ սուլար՝ գեօնկլի աղլասըն,
Անամն կըզը վար, բանի նէչնասըն,
Ազիլ՝ դաղլար, ազիլ, անամ գեօրընսըն:
Չաքտիլար, չաքտիլար օջաղն դաշի,
Ղուրգիլար, ղուրգիլար զիւզիներն աշի.
Չաղըրըն, չաղըրըն կովում դարդաշի,
Չէն անայ, շէն բաբայ, աւըն շէն օլսըն,
Ըշտայ բան գեգարամ՝ երըն ենգ օլսըն:

Աթլագըմ, աթլագըմ, չըխտըմ էշիկի,
Ղըրըլսըն, ղըրըլսըն ղըզըն բէշիկի,
Սուֆրադայ, սուֆրադայ ղօյղըմ դաշըղի,
Չէն անայ, շէն բաբայ, աւըն շէն օլսըն.
Ըշտայ բան գեգարամ՝ երըն գէն օլսըն:

Անամըն թիւթսիւսի ազրիճա թուլթար,
Սթամըն սուֆրասը, մէչդանի թուլթար,
Ղըզըն ուզանգըսի քիմլարդան թուլթար,
Չէն անայ, շէն բաբայ, աւըն շէն օլսըն,
Ըշտայ բան գեգարամ, երըն գէն օլսըն:
Չամ բաշընդա չրայ եախտըմ, եանմատի,
Բեազ բաբամայ Էլի սալըմ, գեալմաղի.
Ղարդաշ քիւչիւզ իկի, գեալայ բիլմաղի,
Չէն անայ, շէն բաբայ, աւըն շէն օլսըն,
Ըշտայ բան գեգարամ, երըն գէն օլսըն:

Յելէ երեկուան քամին, յելէ երեկուան քամին,
Քաղըրգեան մտել է գեամին, բաղըրգեան մտել է գեամին.
Աղջի, Հարսնառդ եկաւ վերի կալերով,
Հինայ բերին քեզի թղթի ծալերով,
Ել հազի, ել կապէ. Հարսնառդ եկեր է:
Աղբօրդ խաբեցին ջուխտմ ճըզմով.
Քրոջդ խաբեցին ջուխտմ փապուճով.
Հօրդ էլ խաբեցին լիւրմ թիւթիւնով.
Մօրդ էլ խաբեցին թուղթմ պուռնուլթով:

Հարկաւոր եմ համարում վերոյիշեալ տաճկերէն երգի թարգմանութիւնը դնել այստեղ, նոյնպէս և միւս ստորև լիշեալ երգերի թարգմանութիւնը իւր տեղում:

«Մի լար, մի լար,
Հարս, մի լար,
Իրիցկին, իրիցկին,
Գլուխը մի կապիր:

Մայրս դուրս գայ ամարանոցներ՝ վայելի,
Խմի սառը ջրեր, որ սիրտը կանգնի,
Մօրս աղջիկ ունի, էլ ինձ ինչ անի,
Թեքուէք, սարե, թեքուէք, մայրս երևի.
Քաշեցին, քաշեցին օջաղի քարը,
Սարքեցին, սարքեցին բրինձով փաւը, (հարսանիքի կերակուր)
Կանչեցէք, կանչեցէք բարեկամիս, եղբօրս,
Չէն հայր, շէն մայր, տունդ շէն մնայ,
Ահա ես գնում եմ, տեղդ լայն մնայ:

Չիաւորուեցի, ձիաւորուեցի, դուրս եկայ,
Կոտրուի, կոտրուի աղջկայ օրօրոցը.
Սուփրի մէջ, սուփրի մէջ թողի գզալը.
Չէն հայր, շէն մայր և աչն:

Մօրս ծուխը ծուռը կըծխի,
Հօրս սեղանը հրապարակ կըբռնի.
Աղջկայ ասպանդակը ձկ կըբռնի,
Չէն հայր և աչն:

Չամաճառի գլխին հրագ վառի, չվառուեց,
Բէզ հօրս գեսպան ուղարկեցի, չեկաւ,
Եղբայրս փոքր էր, գալ չկրցաւ,
Ահա ես գնում եմ տեղդ լայն լինի:

Ապա աղջկունք երգում են այլ եղանակով հետևեալ երգը նորահարսի մօր, քրոջ, մայրաքրոջ մասին, որոնք այդ հանդիսին սովորաբար ներկայ չեն լինում:

Համամ ջուսպասի,
Թոխաթ վալասի,
Չաղըրն անասի՝
Գեայսն սարըլսըն
Բոչննայ՝ աղլասըն,
Եօլայ սալսըն:

Համամ ջուսպասի
Թոխաթ վալասի,
Չաղըրն բաջըսի,
Գեայսն սարըլսըն
Բոչննայ՝ աղլարսըն,
Եօլայ սալսըն:

Համամ ջուսպասի,
Թոխատ վալասի,
Չաղըրն խալասի,
Գեայսըն սարըլսըն
Բոչննայ՝ աղլասըն,
Եօլայ սալսըն:

Ահա երգի հայերէն թարգմանութիւնը.

«Բաղանիքի վերարկու,
Թոխաթ քաղաքի մետաքսէ թաշկինակ,
Կանչեցէք մօրը,
Գայ փաթաթ ուի,
Վզովը, լայ,
Ճանապարհ ձգի.»

Նոյնը կրկնում է քրոջ և մօրաքրոջ (խալա) մասին:

Երբ ուստի մօտ «գլուխ գովալու» հանդէսը կատարւում է, այդ միջոցին արդէն հարսնառնեբը զուռնայով, աղմկով մօտենում են գիւղին: Նորանց առաջ զուրս են բերում զինի, արաղ, հիւրասիրում են նորանց և ապա տանում են ուղղակի ուստի մօտ, ուր որ հարսն է:

Հարսին շրջապատող աղջկունք այդ տեղ նորից մի երգ են

երգում տաճկերէն, որի մէջ բացադրելով աղջկայ ազգականների բացակայութիւնը, նկարագրում են հարսի զրութիւնը:

Արմըղի ալ դըր բունըն,
Ջիգիթը քեալ դըր բունըն,
Աթասը եօխ աղլասըն,
Կարդաշը լալ դըր բունըն:
Արմըղի ալ դըր բունըն,
Չիգիթը քեալ սըր բունըն,
Բաջըսի եօխ աղլասըն,
Գալինի լալ դըր բունըն:
Արմըղի ալ դըր բունըն,
Չիգիթը քեալ դըր բունըն,
Խալասի եօխ աղլասըն,
Բիբիսը լալ դըր բունըն:

Ահա սորա թարգմանութիւնը.

Սորա խնձորը կարմիր է,
Սորա սերմը լսակ է,
Հար չունի որ լայ,
Եղբայրը սորա համր է:
.
.
Քոյր չունի որ լայ,
Սորա հարսը համր է:
.
.
Մօրաքոյր չունի որ լայ,
Սորա տատը համր է:

Ապա զուռնան նուագում է, աղջկունք մի տեսակ պսր են բռնում, որ կոչւում է թեխմախ և զուրս են բերում հարսնացուին: Տղայքը ձայնում են շարաշ: Արդէն երեկոյեան դէմ է լինում, որ բոլոր հանդիսականները հսրսին առած՝ ծանրաքայլ շարժւում են դէպի հարսնահօր տունը:

Այս տեղ պէտքէ լիշել որ այն տեղի գիւղերում հազիւ է գտնւում այնպիսի մի տուն, որ իւր մեծութեամբ կարողանար տեղաւորել իւր մէջ գիւղի բոլոր հրաւիրուածներին, ուստի այդ պէտքի համար մաքրում՝ յարմարեցնում են մեծ գոմեր:

Քաւորը, որ միշտ լինում է հարսնառների շարքում, բե-
րում է իւր հետ հարսի հանդերձը և հինա, թղթի մէջ
փաթըթած և սինու մէջ զրած: Հինայով սինին Աստան զը-
նում է իւր գլխի վերայ և առաջինը ինքն է պարում. ապա
տալիս է միւս աղջկանց, որոնք հերթով պարում են և վերջը
սինին գնում են քաւորի առաջ, որպէսզի նա 15, 20 կոպէկ
նուէր ձգի մէջը՝ պարող աղջկանց համար: Այդ գլշերը աղջ-
կունք հինով ներկում են իւրեանց և հարսի ձեռքերը:

Հետեւեալ օրը, աղջկայ հայրը ճաշ է պատրաստում հիւ-
րերի համար, կերակուր պատրաստող կինը պղնձների բերանը
չէ բանում և կերակուր չէ բաժանում, մինչև քաւորը նորան
նուէր չանի, 20 կոպէկից մինչև 1 ռուբլի:

Ճաշը վայելելուց յետոյ, աղջկայ հայրը հանդիսականնե-
րի առաջ թափում է բոլոր օժիտը, ինչ որ պատրաստել է
իւր աղջկայ համար, որ կոչւում է ջնէզ: Ջհէզը գիւղերում
սովորաբար լինում է վերմակ, բարձեր, չգուլպաներ, մարբաշ,
խուրջին և այլն: Կանչողը հատ հատ ցոյց է տալի հանդի-
սականներին, իրար վերայ դարսում և վրան նստելով չի վեր-
կենում տեղից, մինչև նուէր չստանայ (երբեմն մինչև 10
ռուբլի) փեսասօրից հարսնահօր օգտին:

Տղամարդկանց մօտ ջհէզը գննելու միջոցին՝ կանանց բաժ-
նում սովորաբար գիւղի իրիցկիներ, եթէ սա չկայ՝ մի այլ կին
կապում է հարսի գլուխը և նուէր է ստանում քաւորից, որ ասում է
գլօխկապելիք, և գօտիկ կապելու համար նոյնպէս նուէր, որէ
գօղելկապ. Իսկ աղջկունք, որ ըլուններից փնջիկ են շինում
հարսի գլուխ գարդարելու համար, նոյն պէս նուէր են ստա-
նում քաւորից-*փնջի փարս*:

Արիշ հայ երկրներում թագաւորն ինքն է գնում իւր
հարսնացուն բերելու և առանց պսակուելու աղջիկը չի դուրս
գալ գիւղից. իսկ այստեղ, Ֆասենում և շրջակայքում փեսան իւր
իւզում սպասում է հարսին, որ պէտք է բերեն հարսնառ-
ները:

Հրաժարականի ըոպէին աղջիկը համբուրում է հօր, մօր,
եղբօր և միւս բարեկամների ձեռքը, բայց հօր տան օջախը,

թոնդիրը, իւր առաջին սննդավայրը համբուրելու սովորութիւն
չկայ: Աղջիկը հեծնում է ձի և նորան ուղեկցում է նորա եղ-
բայրը, որ այդ դէպքում կոչւում է *ժաղար*:

Երբ փեսայի գիւղին մօտենում են՝ մաղարը, այսինքն
հարսնեղբայրը, հանում է հարսի տակից թամբի բարձը և
տալիս է հարսնառներից մինին, որ կոչւում է *աղուէս*:

Աղուէսը բարձն առած շտապում է գէպի թագաւորի
տունը: Քայց աղուէսն ամենայն զգուշութեամբ և թագաւորին
շրջապատող ազափներից խիստ ծածուկ, բարձը յանկարծ դը-
նում է թագաւորի ոտաց տակը, որ այդ միջոցում ազափնե-
րով շրջապատուած *կանգնած է* և անպատճառ կանգնած
իւր տան երգիկի բարձրութեան վերայ, սպասում է հարսի
գիւղը մտնելուն:

Եթէ աղուէսի անզգուշութիւնից կամ անշնորհութիւնից
ազափները բարձը նկատեն նախքան թագաւորի ոտաց տակը
գնելը, այն ժամանակ աղուէսին՝ զուարճութեան համար խիստ
զանակոծում են:

Թագաւորի ոտաց տակ բարձի գնելը նշան է թէ հարսը
խոնարհութեամբ իւր գլուխը գնում է իւր ամուսնու ոտաց կամ
իրաւանց տակ:

Թագաւորը հրամայում է ճարպիկ աղուէսի ձիու վզից
կախել թաշկինակ, կամ երեսի սրբիչ կամ մի գոյգ գուլպա և
այլն, իսկ ինքն թագաւորը իւր տեղը բարձի վերայ *անշարժ
կանգնած* մնում է մինչև հարսի ձիուց իջնելը: Հարսը եր-
բէք չէ իջնում թագաւորի տանը, այլ ընդունում են նորան
քաւորի կամ թագաւորի ազգականներից մինի տանը: Թագա-
ւորը իրաւունք չունի գնալ նորա տեսութեան, այլ գնում են
նորա կողմից բարեկու նորա մօլբը, քոյրը և այլ բարեկամ
կանայք և միմիայն կանայք և ոչ տղամարդիկ:

Հարսնեղբայրը միշտ անանջատ մնում է իւր քրոջ մօտ:
Գիւղ մտնելու ժամանակ հարսի գաւակին նստացնում են մի
երեխայ և հարսնեղբայրը երեխային իջեցնելու կամ հեռացնե-
լու համար ընծայում է նորան մի ջուխտ գուլպա:

Տան տէրը, որի մօտ իջնում է հարսը, ճաշ է ուտեցնում

հիւրերին: Հարսը գիշերը մնում է այդ տանը և շրջապատում է աղջիկներով և երիտասարդ հարսներով, որոնք գիշերը աշխատում են ազափների ոտամանները կամ գօտիկ կամ այլ հագուստ գողանալ, իսկ ազափները, ընդհակառակը, աշխատում են գողանալ աղջկանցից որևէ հագուստ:

Վերջինչեալ եղելութիւնը պատահում է այն ժամանակ, երբ տղան և աղջիկը որոշ որոշ գիւղերից են. իսկ եթէ երկուսն էլ մի գիւղումն են, այն ժամանակ չեն լինում ոչ ազուէս, ոչ բարձ, ոչ հարսի գալուստ և այլն: Այլ սովորական կարգով թագաւորը իւրայիններով գնում է հարսի մօտ և այն տեղից եկեղեցի պսակուելու:

Առաւօտը թագաւորը գնում է հարսի մօտ այն տունը, ուր նորան երեկեան օրը ընդունել են և այն տեղից իբրև մի գիւղացի, հանդիսականներով շրջապատուած, նուազածութեամբ գնում են եկեղեցի պսակուելու:

Եկեղեցի գնալու ժամանակ հարսը գնում է թագաւորի յետևից և թաշկինակի մի ծայրը բռնած, որի միւս ծայրը կապած է թագաւորի գօտիկից, որպէսզի երկուսի արանքով, նախքան պսակը, ոչ ոք չանցնի, որ շատ չարազուշակ նշան է: Պսակուելուց յետոյ նոքա գնում են արդէն իրար կողքի և առանց թաշկինակի:

Պսակուելու ժամանակ տղան ծածուկ աշխատում է հանել աղջկայ մատից մատանին և աղջիկն էլ աշխատում է չբտալ:

Եկեղեցուց դուրս գալով ուժ տան մօտով որ անցնի հարսանիքը, ամէն ոք թէ բարեկամ, թէ օտար, հարսի գլխին ձգում են զանազան կտոր (չիթ, թաշկինակ և այլն), իսկ ազափներին ոչինչ չեն տալիս, ինչպէս անում են այդ այլ տեղերում, բայց պակ գնալու ժամանակ:

Եկեղեցուց մինչև թագաւորի տունը գուռնայի նուազածութեամբ վանդաղաքայլ ընթանում է հանդէսը և պարում են հարսներ, աղջիկներ և տղայք: Թագաւորի տան առաջ պատրաստած է լինում սեզան զանազան ուտելիքներով ազափների համար: Պարելով ընդառաջ են դուրս գալի թագաւորի

մայրը, հայրը. և վերջինիս երեսը, զուարճութեան համար, ալիւր են քսում, թաղիքի կտոր են դնում գլխին, քթոց են անցկացնում վիզը: Սեմից անցնելու ժամանակ հարսի գլխին թուր են բռնում:

«Վանչը», որ նշանակում է յիշատակել զանազան նուիրաբերութիւններ հանդիսականների կողմից, մշեցոց մէջ լինում է երեկոյեան ընթրիքին, իսկ Բառնում լինում է պտակից վերադարձի ժամանակ, թագաւորի տան առաջ, ուր նորապսակները պարտաւորուած կանդնում են մինչև կանչի վերջը:

Նորապսակները տուն ներս մտնելուց յետոյ աւելը տալիս են հարսի ձեռքը, որ տան լատակը փոքր ինչ աւելում է զանազան կողմերի վերայ: Քահանան «ծագմանն» երգելիս թագաւորն և քաւորը իրար կողքի և նորանց յետևից հարսը երեք անգամ պտտում են թոնդրի շուրջը, ու իսկոյն շերեփը և աղը տալիս են հարսի ձեռքը, որ շերեփով խառնի թոնդրի միջի գրած կերակուրը և աղ ձղի նորա մէջ: Ապա հարսին տանում են վարադոյրի յետև:

Գարալագեազի խաչիկի գիւղում, հարսը, պսակուելուց յետոյ կրկին վերադառնալով թագաւորի հետ հօրանց տուն, առաւօտը թագաւորի հետ միտին, շրջապատուած ազափներով և այլ հրաւիրականներով, զուռնայի ուղեկցութեամբ, պտտում է գիւղի մէջ, ուր բազերում քիւրսիների վերայ պատրաստուած է լինում ուտելիք, խմելիք (գինի, արաղ, միրգ, ձուածեղ): Ուտում խմում են ամէնքը, իսկ հարսն ըստանում է խալաթ (նուէր). վերջը գնում է թագաւորի տունը, բայց ներս մտնել չէ ուզում առանց *ոտնափոխէքի*: Սկեսրայրը ականջից բռնած մօտեցնում է նորան ձի, կով կամ երինջ կամ այլ անասուն իբրև նուէր, *ոտնափոխէք*, մակաղներն իսկոյն նշանում են անասուներ, այսինքն ականջի ծայրը կտրում են, և „հուշտ“ անելով խրտնացնում փախցնում են վախկոտ անասունին և խրեանք ծիծաղում են:

Ապա սրահի կտորից չոր մրգեղէն են ցանում հարսի գլխին և մանր երեխայք մեծ աղմկով և իրար հրելով ժողովում

են: Չեմում ոտաց տակ կոտորում են կաւէ աման և մակար- ները կանչում են „կոտրեց:“ Հարսը գնում է իւր տեղը, բայց մնում է կանգնած և չէ կամենում նստել, մինչև որ սկեսուրից խալաթ ստանայ:

Հին ժամանակ սովորութիւն կար, որ մետաքսէ թելերով պատած եղեգնեայ փոքրիկ խաչ տնկում էին խնձորի կամ նը- ռան մէջ և դնում էին նորաստակ թագաւորի գգակի ծայրում, որ փոխարինում էր թագը: Այժմ վերացել է:

Ղաղախի Ուզանթալա զիւղում պսակակատարութիւնից յետոյ, հարսը եթէ նա գնալու է մի այլ զիւղ՝ հանդիսականներով հանդերձ նորից վերադառնում է հօր տունը, ուր պստրաստութիւն տեսնելուց յետոյ նորան ձի են նստացնում, ու եղբօր կամ մօր ազգականի հետ, թագաւորի և նորալինների հետ ձիերով ընկ- նում են ճանապարհ: Այստեղ էլ ազգիները ձիարշաւ են ա- նում, բայց քիչ, ըստ որում ուժերը պահում են իւրեանց զիւղը մտնելու համար:

Բայց եթէ հարսը մնալու է այն զիւղում, այդ ժամանակ պսակը կատարելուց յետոյ հանդէսը շրջում է արդէն դէպի փեսայի տունը: Գանդաղաքայլ գնացքին ուղեկցում են գուռ- նան, զիւղի երեխայքը, որոնք բղաւելով, ուրախանալով զը- նում են: Փեսի տան սրահին հասած՝ հանդէսը փոքր կանգ է առնում, ընդառաջ են գուրս գալի փեսայի մայրը, քօրը, հարսը և միւս կին ազգականները, մին մին մօտենում թագա-ւորին և հարսին և համբուրում են նորանց և պսակը շնոր- հաւորում:

Չատ գուարձալի է այդ տեղ, որ երբեմն ծերունի փեսա- հայրը սկսում է պար գալ, ճարտիկ շարժումներ անել, քաշ- քշել իւր կնոջը, որ նա էլ օրօր գայ, ուժով բռնում է կնոջը որ այնքան բազմութեան մէջ համբուրի, խախկ ու խայտա- ռակ անի: Հանդէսը առաւել գուարձալի անելու համար թագաւորի մակարները ալիւր են ցանում, քթոց են ծածկում թագաւորահօր գլխին, բայց նա առանց մազաչափ նեղանալու շարունակում է պարել, ուրախանալ:

Սրահումը հարսի գլխին ցանում են չամիչ և այլ չոր

մրգեղէն, որ մանր տղայք իրար հրելով ժողովում ուտում են: Չեմը անցնելիս խաչեղբայրը թուրը բռնում է թագաւորի գըլ- խին և թագաւորը կտարում է իւր ոտաց տակ գրած կաւէ ամանը և անցնում է: Ապա հարսին տանում են կանանց բաժին:

Ղաղարշապատի զիւղերում սկեսուրը տան հարսի շեմում, գլխին, դնում է մի կտոր հաց, իսկ տան ներսը՝ աւելը տալիս են հարսի ձեռքը:

Հին Նախիջևանում, Հին Զուղայում, Աղուլիսում, Ղաղար- շապատի և Բասենի զիւղերում հարսին հօր տանից գուրս բե- ըելու և եկեղեցի տանելու խառը ըողէին հարսնեղբայրը աշ- խատում է համբուրել թագաւորի կողմից եկած հարսներին և այդ համբուրը կոչում է խնամապաշ:

Հին Նախիջևանում պսակից հանդէսը վերադառնում է ուղղակի թագաւորի տունը, ուր զիմաւորում և համբուրում են հարսին, թագաւորին և խաչեղբօրը, պարում են, երբեմն պարում է և թագաւորահայրը, որի երեսին այստեղ ևս ցանում են ալիւր, գլուխը անցնում են մաղ, հարսին տալիս են խա- լաթ և հրաւիրում են ներս:

Իսաւրու զիւղում, խոր Վիրապի մօտ, հարսին եկեղեցուց բերում են փեսայի տունը, նորա առաջ պարում են, գուրս են բերում չոր մրգեղէն ափսէի մէջ, վրան խաչաձև դրած հացի երկու լաւաշ և սոցա վերայ տնկած խաչաձև մեղրամօմեր: Պարելուց յետոյ մերզը տանում են խուռն հանդիսականների վերայ և լաւաշները դնում են հարսի գլխին և ներս տանելուց ու իւր տեղը կանգնեցնելուց յետոյ վերցնում են: Չեմում թա- գաւորի ոտաց տակ կաւէ պղուղ են դնում ոտով կոտրելու համար:

Աղուլիսում պսակակատարութիւնից յետոյ նախ գնում են աղջկայ տունը, ճաշում են և ապա փեսայի տուն գնալու ժա- մանակ նորաստակների բարեկամները փողոցում սեղան են սար- թում և հանդիսականներին հիւրասիրում են: Թագաւորի ծա- ռան (եթէ կայ) խալիչա է փռում նուապսակների ոտաց տակ և նոքա, վրայից անցնելով, փող են նուիրում ծառային: Թա- գաւորի տան ըագում աթոռների վերայ նստում են հարսն ու

փեսան և ընդունում են իւրեանց բարեկամներին շնորհաւորութիւնը և նուէրները (շալ, թաշկինակ, մետաքսէ կտոր և այլն) որ մատուցանում են պարելով ձեռքում բռնած: Ապա հարսին տանում են կանանց սենեակը:

Երեկոյեան դալիս է հարսնեղբայրը, բերելով կերակուր հարսի համար, որ այդ օրը և հետեւեալ օրը կերակուրն ստանում է իւր հօր տնից:

Երեւանում և Վաղարշապատի զիւղերում պսակի ժամանակ, եկեղեցու մէջ, հարս ու փեսան աշխատում են իրարից խիլ մատանին և մինը միւսի ոտը սեղմել, ըստորում, նորանց կարծիքով, ով ում մատանին հանեց և ոտը սեղմեց, նա էլ կեանքի մէջ կիշխի միւսի վերայ: Այս սովորութիւնը կայ և Գարալագեազի բնիկ հայ զիւղերում (Սաչիկ, Կնիշիկ, Արփա, Աղաւնաձոր և այլն):

Թագաւորի տնից դուրս են բերում ձուածեղ, հալուա, զինի, որոնց համը տեսնում են թագաւորը և քաւորը: Հէնց այդ ժամանակ էլ խալաթ են նուիրում հարսին: Թագաւորի մայրը և ազգական կանայք պարելով բարեւում են նորաստաններին, համբուրում են հարսին և թագաւորամայրը իւր նորաստանի որդու բերանը դնում է մի կտոր շաքար:

Ձեմով անցնելիս քաւորը թուրը բռնում է զլուինների վերայ և թագաւորի ոտների տակ փշրելու համար դնում է կաւէ ափսէ: Քահանան շուրջառը ծածկած՝ իրարից ջոկում է հարսի և փեսայի ձեռքերը և հարսին տանում՝ կանդնեցնում են կանանց բաժնում փափուկ բարձի վերայ: Սյդ ըստից քաւորը լանձնում է թուրը թագաւորին, որ պահում է իւր մօտ մինչև հարսանեաց վերջը:

Փեսայի բարեկամ կանայք հարսին խալաթ են տալի, որ նա համաձայնի նստել: Խալաթը ժողովում է հարսի համար հարսնաքիրը, մի պառաւ կին հարսի ազգականներից, որ նորան ուղեկցում է և մնում է նորա մօտ մինչև հարսանիքի վերջը: Քերում են հարսի բերած բաժինքը և կանանց մէջ մի առ մի դննելով ասում են «խնամին շէն կենայ»: կանայք պարում են, ուրախանում են և երեկոյեան ցրում:

Գարալագեազի գաղթական հայերի մէջ, երբ հարսանեաց հանգէսը պսակից վերագառնում է թագաւորի տունը, հարսի զլխին ցանում են չոր միրգ: Քարեկամները սովորաբար ընդառաջ դուրս գալով բարեւում են, իսկ ազգայները ծիծաղելու և զուարճութեան համար երգում են հետեւեալ երգը՝ զիմելով թագաւորի մօրը:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Ինչեր մինչեր եմ բերել,

Քէ դաստա գիւլ եմ բերել:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Ինչեր մինչեր եմ բերել,

Կարմիր խնձոր եմ բերել:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Ինչեր միչեր եմ բերել,

Քէ աչքի լուս եմ բերել:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Ինչեր մինչեր եմ բերել,

Քէ ոժ (ոչժ) թագաթ (նոչնը) եմ բերել:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Ինչեր մինչեր եմ բերել,

Քէ ծամ փետոզ եմ բերել:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Ինչեր մինչեր եմ բերել,

Քէ աչք լսանոզ եմ բերել:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Ինչեր մինչեր եմ բերել,

Քերան ձող եմ բերել:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Ինչեր մինչեր եմ բերել,

Ձերեփղ խլոխ եմ բերել:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Ինչեր մինչեր եմ բերել,

Պուճաղղ քանդող եմ բերել:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Ինչեր մինչեր եմ բերել.

Դուխղ: Թագող եմ բերել:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Ինչեր մինչեր եմ բերել,

Քէ տնէ դուս խանող եմ բերել:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Քէ գեօլի դաղ եմ բերել

Լեզուն կէս գաղ եմ բերել:

Թագաւորի մէր, դուս արի,

Տես քէ ինչեր եմ բերել,

Թոնդրին կոխող եմ բերել

Ակէն խանող եմ բերել:

Տանը մօտեցած՝ գուռնաչին ստանում է իւր խալաթը: Ստանում է խալաթ նոյնպէս և հարսնեղբայրը: Նորապսակները ներս են մտնում տուն և տեսնում են, որ Թագաւորի Թախտին նստած է մի երեխայ, իսկ հարսի տեղում նստած է մի աղջիկ *) որոնք քաւորից մի քանի կուպէկ ստանալով հեռանում են տեղներից: Սակայն հարսը մնում է կանգնած իւր տեղը, չէ կամենում նստել. գալիս է սկեսրայրը, խոստանում է նուիրել նորան՝ օրինակ մի կով և ապա Թէ հարսը համաձայնում է նստել:

Երբ ամենքն էլ տեղաւորում են և Թագաւորը իւր քաւորով և ազափներով նստում է իւր Թախտը, այդ ժամանակ սկսում է ծաղը: Թագաւորի բարեկամները իւրեանց տներից բերում են Թագաւորի համար նուէր, այն է երկու երեք գա-

*) Երեխայքը նստացնում են որ նորապսակները ծննդաբեր լինի: Խմբ.

թայ, մրգեղէն, եփած հաւ, և այլն և վրան վառած մեղրամոմեր: Այդ նուէրը կոչում է ծաղ:

Հէնց որ իւրաքանչիւր անգամ ծաղը դրսից բերում է ներս, Թագաւորի երկու կողքին նստած երկու ազափներից մինը բացականչում է. «Վեաւ որ էկաւ, բարով էկաւ: Թագաւորի ճըճընէր.»

— «Համմէ». իսկոյն պատասխանում է նորան միւս կողքի ազափը: Ապա շարունակում է առաջինը, լիշելով ծաղ բերողի անունը.

«Ներսօն չիշայ, Թագաւորին բարի,

«Ասված իւրը տայ հազար բարի,

«Ոտն ոչխար, տկով գինի,

«Ասված Թագաւորին օխտը որդի,

«Օխտը որդու սեղան նստի,

«Կիւտանը դաշտը պանի,

«Չար կամը դուռը պատուի,

«Հայ տունը շէն՝ հայ տունը շէն.»

Նոյն Գարալագեազի Ազատակ զիւղում նոյն խօսքերը կըրկնում են հետևեալ կերպով.

Մարկոսն ուզեց Թագաւորին բարի,

Ասված տայ ընդարը հազար բարի,

Օխտը որդու սեղան նստի,

Կիւտանը դաշտը բանի,

Չար կամը դուռը պատուի,

Կատուն մըռընչայ,

Մուկը փըռընչայ,

Օխտը տարուայ փուշը կընանչայ,

Հայ տունը շէն, տունը շէն:

Ամեն մի ծաղ ներս մտնելիս բոլոր վերոյիշեալ խօսքերը նորից կրկնում են և ազափները ծաղերը վերցնում պահում են յետոյ վայելելու. այդ բոլոր ծաղերը միասին կոչում են Թագաւորի խազնաւ:

Երեկոյեան լինում է մեծ հրաւեր: Գիւղի իւրաքանչիւր տան մեծը հրաւիրում է ընթրիքի և այդ երեկոյ, ընթրիքից անմիջապէս առաջ, լինում է կանչ, այն է որ իւրաքանչիւր

հրաւիրուած իւր կարողութեան չափ մի գումարով նպաստում է թագաւորահօրը: Մի մեծ սինի դնում են քահանայի և պատուաւոր հիւրերի առաջ, կանգնում է ճարպիկ դաւուլչին, ու ամեն մի նուիրած փող ձեռքում պտտցնելով օդի մէջ՝ լիշատակում է տուողի անունը և դնում է սինու մէջ: Առաջին նուիրաբերութիւնը անում է քաւորը:

Կանչը վերջանալուց յետոյ սկսւում է ընթրիքը, որից յետոյ պարողները՝ արք և կանայք կազմում են մեծ շղթայ և մինչի ժամի 3—4 առաւօտեան պարում են 12 տեսակ պար, որոնց եղանակները նախ ծանր են և ապա աստիճանաբար արագանում են: Պարերի տեսակները սոքա են: 1. Ծանր գեօնդ. 2. Ծունկ կոտրուկ, 3. Մայմօ. 4. Երեք տո. 5. Մաշկէ. 6. Զէօրօր. 7. Եարգեօղալ. 8. Սէթալի. 9. Թալալի. 10. Սիւզմա. 11. Եալլի. 12. Թուուկ: Այս պարերի մանրամասն նկարագրութիւնը կարելի է կարգալ «Ճանապարհորդական նկատողութիւնը» աշխատութեան մէջ Քաջբերունոյ:

Հին Ջուղայում կամ Հին Նախիջևանում հարսանիքի վերջին երեկոյին լինում է կանչը: Այս տեղ էլ առաջինը նուիրում է քաւորը: Կանչը կատարում է ազափներից մինը-ճարպիկը-որ իւրաքանչիւր նուէր լիշելիս դիմում է թագաւորի մականերին (ազափներին) այս խօսքերով.

— Թագաւորի մականերն:

— Ամէն, ամէն. պատասխանում են մակաները միասին:

— Աստուած ձեզ բարի ամէն. Աստուած սազ պահի քաւոր աղէն, Աստուած նորա օրդուն (կամ եղբօրը և այլն) փոխանի, որ լիշեց մեր թագաւորին 10 մանէթ, շէն կենայ, շէն կենայ:

— Չէն կենայ, շէն կենայ. պատասխանում են մակաները:

Այսպէս էլ շարունակում է իւրաքանչիւր նուիրողի համար: Ապա վերջում յայտնում է ընդհանուր գումարը, որից և ստանում է իւր վարձը ներկայ քահանայի ձեռքից, իսկ գումարը յանձնում է թագաւորահօրը:

Ղազախի Ագուլթալա գիւղում նոյնպէս լինում է վերջին լիշերը նուիրաբերութիւն, որ այն տեղ կոչւում է յիշելիք:

Մի ճարպիկ և լիզուանի մարդ, գլխաւորապէս դաւուլչին (թմբկահար), կանգնում է տան մէջ տեղ, հանդիսականների առաջ և զանազան աւելցուկներով գովում՝ գովաբանում է նուիրողներին՝ ձեռքում խաղացնելով նուէրը: Զատ տասնեակ տարիներ առաջ, շատերը գիւղացիներից այդ յիշելիքի երեկոյին փողի փոխարէն լիշեցնում էին կով, խոզ, ձի, փեթակ մեղու և այլն:

Սովորաբար ճարպիկ լիշողը դիմում է թագաւորի մականերին:

— Այ թքաւորի մականնի. կանչում է նա:

— Համմէ համմէ. պատասխանում են նոքա:

— Աստուած ձեզ պարի ամէն, շէն կենայ Ղուզեստանց Քիքին (Գրիգորը), Աստուած նրան հաստատ պահի, մեր գիւղից, մեր իշխաններից անպակաս անի, նրա մինը հարիւր տեսանայ՝ հարիւրը՝ հար. Աստուած նրա սուփրան քցած պահի, թիւնգին դրած, էս ուրախութիւնը մի օր էլ Աստուած նրան արժանացնի, ըսօրէց էլ նրա որթու կարմիրը կապենք, որ լիշըցրել ա մեր թագաւորին մի լաւ կով՝ ֆորթը տակին, շէն կենայ, շէն կենայ:

— Չէն կենայ, շէն կենայ. կրկնում են մակաները:

Գիւղի չարածըճի պատասխանները, որ իբրև հանդիսատես ներկայ են լինում, սկսում են կովի նման բառաչել, ձիու նրման խրինջալ, խոզի նման կղկղալ, մեղուի նման բզզալ, նայած՝ թէ ինչ է լիշեցրած: Սակայն այժմ լիշեցնում են միայն դրամ և դորանով փակուել է տղայոց չարութեան ասպարէզը.

Գարալագեազի գաղթական հայերի մէջ, կանչի զիշերը, երբ հրաւիրուած ժողովո ըզը անձնատուր է լինում պարի և ուրախութեան կամ մասամբ արդէն ցրուած են լինում, թագաւորը, ազափները և այլ մերձաւոր ընկերները հաւաքում են առանձին սենեակ կամ տուն և ուտում են հարսի հօրանց տնից ուղարկած ուտելիքները: Այս ընթրիքը ասում է «ակուժաժայ»:

Դաւալու գիւղում թագաւորի «որսից» յետոյ է լինում «ակուժաժայ»: Այդ տեղ զոքանչը փեսայի համար ուղարկում

է մի քանի գաթայ, եփած հաւ, մի աման հալուա, մէջ տեղը դրած արծաթ մանէթ, աւելի կամ պակաս, ըստ կարողութեան, իբրև նուէր փեսային: Զուռնան ուղեկցում է այդ ուտելիքը մինչև փեսայի տունը:

Քասենում և Ղերակում ասում է «առկաթաթուն» և լինում է այն երեկոյին, երբ «որսից» կամ նորանց բարբառով «հաւթուռնքից» մնացած հաւերը ուտում են ազափները և այլ մօտիկ բարեկամները: Այս ընթրիքի ժամանակ թագաւորը չէ կամենում ուտել, չէ կամենում ատամները շարժել, մինչև որ հարսնեղբայրը փող է նուիրում նորան:

Ազուլիս „առկաթաթի“ փոխարէն, երկուշաբթի օրը լինում է *խնամականչ*: Ազափբաշին զուռնայի հետ զնում է հարսնահօր մօտ և հրաւիրում է հարսի ծնողաց և բարեկամներին փեսայի մօտ: Փեսայի տանը սորանց ընդունելու ժամանակ փոխադարձ տալիս են միմեանց կարմիր ձու:

Հին Զուղայում կանչի ընթրիքի հետևեալ առաւօտ, երկուշաբթի օրը, թագաւորի տան բագում, գորգի վերայ քաւորը զնում է խաչաձև թուրը և պատեանը: Մօտն էլ մի բաժակ զինի: Թագաւորը երեք անգամ ծունր է իջեցնում թրի վերայ և բաժակ զինին խմում: Ապա երկու ազափ բռնում են թրի երկու ծայրը՝ սուր բերանը դէպի վեր: Ազափբաշին տալիս է թագաւորին մի կենդանի հաւ, որ բերել էր նա հարսի հօրանց տնից: Թագաւորը հաւի ոտերը բռնած, նորա վիզը այնպէս է զարկում թրի բերանին, որ հաւի գլուխն իսկոյն և եթ թուչում է: Ազափներն էլ նոյն ձևով մորթում են իւրեանց տնից բերած հաւերը և այս ասում է «որս տալ»:

Որսի հաւերը եփում են և այգիներում վայելում են այն ուտելեաց հետ միասին, որ ազափբաշին բերել էր հարսի հօրանցից: Այդ երեկոյին նորահարսը պարում է:

Այս տեղ, ժողովրդի սովորութեամբ ազափբաշին, բացի վերոյիշեալ պարտաւորութիւնները, որ մենք արդէն տեսանք, ունի և հետևեալ պարտաւորութիւնները. ապահով պահել թագաւորի գլխարկն ու կօշիկները, որ հարսնատան չար տղայք

աշխատում են գողանալ և փրկանքով դարձնել. բ. հարսնատնում թագաւորի համար բերած „խոնչաները“ պահել, որպէսզի տղայքը չգողանան ուտեն: գ. հարսնահօր տնից որսի համար հաւ բռնել և դ. թագաւորի շորերը հագցնել:

Այս պարտաւորութիւնները Վաղարշապատի գիւղերում դրուած են խաչեղբօր վրայ:

Գաւալու գիւղում ազափները բերում են մի մի հաւ և առաջինը թագաւորն է զարկում թրով հաւի վզին և գլուխը թուցնում, ապա ազափները: Սա ասում է «որս»: Մօրթած հաւերը կանխապէս թագաւորի տան երդիկից ցած են ձգում և ապա պատրաստում են ու ուտում:

Գարալագեագի գաղթականների մէջ կանչի հետևեալ առաւօտ, երկուշաբթի, թագաւորը, քաւորը և ազափները սազանդարներով կամ զուռնայով պտտում են բարեկամների տները և հաւեր ժողովում, որ ասում է „ղուշ“ և ծառերի հետ միասին կազմում են թագաւորի խաղնան:

Հրաւիրուածները, իբրև վերջին ճաշ, վայելում են *խաշ*, այսինքն ոտ ու զուլիս:

Սալմաստի գաղթականները հարսանիքի վերջը երբեմն պարում են և երգում հետևեալը.

- Լուսնակը կըշտանց կէթայ,
- Խարսները խերանց կէթայ,
- Էշ կնիկը, գէշ կնիկը,
- Մաճուն կուգեմ թան կբերի,
- Ալըմաղով ցան (աթարի փշրանք) կբերի

Գարալագեագի Ազատակ գիւղում, հարսանիքի վերջը, կրբեմն երգում են ստորև գրած երգը և հետը պարում են «ճունկ կոտորուկ» պարի եղանակով:

- Խատի կէս կորեկ ունեմ ցանելու խամայ.
- Տունը մէ ոսկի (վեցկի) տուէք վարելու խամայ.
- Տունը մէ մանգեռ տուէք ցանելու խամայ.
- Տունը մէ մայգէօն (մանգաղ) տուէք քաղելու խամայ.
- Տունը մէ ջառջառ տուէք ծեծելու խամայ.
- Տունը մէ քեառէշք (որսելի) տուէք էրնելու (բամել) խամայ.
- Տունը մէ սարաթ տուէք մաղելու խամայ.

- Տուևը մէ թիւրա (1/2 փթանոց չափ) տուէք չափելու խամայ.
- Տուևը մէ ճաղաչ տուէք աղալու խամայ.
- Տուևը մէ թոնդիւր տուէք թխելու խամայ.
- Տուևը մէ կնիկ տուէք խանելու խամայ.
- Տուևը մէ մարդ ժողուէք ուտելու խամայ:

Ժողովուրդը ցրուելուց յետոյ՝ թագաւորը, ազափները և մօտ բարեկամները բանում են թագաւորի *խազնան*, վայելում վերջացնում են, ապա ազափները դատաստան են բանում լուս և համը թագաւորի անունից: Ներկայ եղողներէց ով քիչ փող է նուիրում ազափներին, վերջիններս խսկոյն ենթարկում են նորան զանազան պատժի, կալանաւորում են, կապում են այլ և կնոջ միասին և այլն:

Զիրակի, կարսայ և Բասենի գիւղերում առաջինը թագաւորն է զարկում հաւի գլուխը և այդ հաւը պէտք է ուտեն պսակուած մարդիկ, իսկ միւս հաւերից մինը քահանայինն է, մինը քէհինը, մինը գուռնաչուն և մինը հարսին ու փեսային, մնացածն՝ ազափներին, որ յետոյ ուտում են: Հաւերը ժողովում են ազափները և դրանց մորթելը կոչում է «հաւթուռնք»: Սորանով էլ վերջանում է հարսանիքը:

Գարալագեազի գաղթականների մէջ թագաւորի խազնան կողոպտելուց յետոյ՝ հարսի մօտ ժողովում են կանայք, բերելով իւրեանց հետ զանազան կերակուրներ, որ նորանցում անուանում է *քեսասայ*: Ապա գուռնաչով գնում բերում են հարսի ջհէզը, որ մի ազափի գլխի վերայ դրած պարելով բերում են: Գալիս է թագաւորի հայրը, որի բացակայութեամբ չէ կարող բացուել ջհէզը և տալիս է մի ուռբլի և աւելի ընըսումը (նուէր) ջհէզ պահող հարսնամօրը կամ հարսի քրոջը:

Կանայք մի առ մի գննում են ջհէզը և յետոյ յանձնում փեսայի մօրը, որը իւր կողմից նուիրում է այս կամ այն բարեկամին ջհէզից մի գոյգ գուլպայ, ձիու նոխտա, ջրի բաժակ և այլն:

Հարսնեղբայրը (խարսնաղբեր) որ մինչև այդ ըտպէն լինում է նորահարսի, իւր քրոջ մօտ, ստանում է փեսայի հօրից իբրև նուէր մի կաբա, կամ գլխարկ կամ այլ հագուստ:

Խաշն ուտելուց յետոյ երեցփոխը կուտում է ուրցը և իւր զարդերով մի մի ճիւղ բաժանում է պատուաւոր մարդկանց, իսկ մէջ տեղի գլխաւոր ճիւղը նուիրում է քաւորին և նորանից եկեղեցու օգտին ստանում է նուէր: Քահանան բանում է նարօտը և խարջըլթը (ուսկապները):

Ազուլիսում թագաւորին արգելում է շիմում բարեկամներից մի երեխայ և առանց նուէրի չէ թողնում որ մտնի հարօսի սենեակը նարօտը վերցնելու քահանայի ձեռքով: Քաւորը թուրը հանած կանգնում է՝ քանի որ քահանան կատարում է կարգը, և ապա թրով կտրում է նարօտը և տալիս է թագաւորին բարձի տակ պահելու համար:

Գարալագեազի կորագլիզ, Սէս և այլ գիւղերում, նարօտը անմիջապէս վերցնելուց յետոյ, ազափները բանում են փեսայի հագուստի բոլոր կապերն ու կոճակները, նոյնպէս և արիւնոտ դանակը, որ նորանց բարբառով աւուռ է *խանգետօճ*, այն է հանդոյց: Նոյնը անում են և հարսին նորա *հարսնքիւրերը*:

Հարսանիքը սորանով վերջանում է, բայց փեսան եօթ օր պաս է պահում, որ եօթն արու զաւակ ունենայ:

Պսակուելուց յետոյս երբ նորահարսը առաջին անգամ գրնում է եկեղեցի, նորա դէմի պատկերի շուրջը վառում են շատ մոմեր: Մեծ պատի միջինքին հարսի հայրը իւր աղջկայ համար բերում է *թարաղ*, այսինքն զանազան մրգեղէն և ուտելիք: Ծաղկազարդին իւր աղջկան հրաւիրում է իւր տուն և այդ կոչում է *գարձ*, և պահում են նորան մինչև Համբարձում:

Ն Ա Ն Ի Կ Ն Ե Ր

ԵՐԵՒԱՆԵՑ ՔԵՆՅԵՆԵՂՈՒ ԺԱՄՄԱՆ ԱԿ.
(Օրօրոցի երգեր)

Ա.

Գարալագեազի Կնիւիկի գիւղում:
Նանիկ ասեմ՝ քնես դու,
Ծածկեմ՝ քրտնես դու,

Ծածկածն եղ գցեմ,

Վարդի նման փռուես դու:

Սիրտս խոցով եարայ ա,

Թաքուն չի, աշկարայ ա,

Դեղ կանեմ, դարման կանեմ՝

Դեառ էն եարէն եարայ ա:

Աստըծունէ նման ա,

Թոռ (անձրև) կայ, տափը նամանայ,

Նանին բերի քիանայ (քեզանից)

Բաջու սիրտը թուռանայ:

Ես նան ունեմ մոլորած,

Գիշերը քունը կորած.

Նանն ու բաջին ի՛նչ անի.

Պուճուր տղայ մլորած:

Չարդախը ցան եմ ածել,

Բոչիդ նման եմ ածել,

Ես էլ քեզ ջան եմ ասել,

Մեծացրած ման եմ ածել:

Նանիկ արա, մեր պղտիկ,

Չամիչ բերեմ՝ կեր պղտիկ,

Ծառի տակին ձնէ բուկ,

Քաղեմ եփեմ, կեր պղտիկ:

Բ.

Գարալազեազի խաչիկ զիւղում պապը իւր թուռին խա-
զացնելու ժամանակ:

Ձիւնն եկաւ քուլայ քուլայ,

Պապն ասեց դանեն ուր ա,

Գէլն ասաց, հրէս տարայ,

Ջունն ասեց, հրէս բերի,

Պոչիկ թիւլայ,

Մեղրը կերար, պուլիկս ուր ա:

Գ.

Նոյն զիւղում, յուսարացին, երեխային խաղացնելու ժա-
մանակ մայրը երգում է:

Լիսը լիսացաւ,

Հարսը վերկացաւ.

Հացը գողացաւ.

Կերաւ կշտացաւ.

Սկեսուրն իմացաւ.

Պատրոնը կռուացաւ.

Գնաց թուրքացաւ.

Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Դ

Ղազարի: Ուզունթալա զիւղում տատն իւր թուռին խաղաց-
նելու ժամանակ:

Պապար կանի կըտիտը,

Հարսն ու աղջիկ խտիտը (գիրիլը.)

Խնձորը կճի, ծուլ անի,

Զիգի հարսին կուլ անի:

Ծառի Տէրի չարթն (կաչաղակ) եմ,

Աղջկերանց մարդն եմ,

Ծառի Տէրի հոպոպն եմ,

Աղջկերանց փոփոքն եմ.

Ծառի Տէրի ճիւղէն եմ,

Աղջկերանց զիւղէն եմ:

Ե.

Հին Ղախիջևանում:

Լալա ասեմ քունդ տանի,

Չար կամարիկ ջուրը տանի,

Ով որ քեզ չի սիրում,

Թող նրան ջուրը տանի:

Իս օր մեր տունն խան ա գալու,

Բազ ու բաղչէն ման ա գալու.

Հարս ու աղջիկ էջվանումը,

Թոփ ծաղիկը մէջդանումը,

Ոսկին ծոցին ձնկճնկաց.

Այ ձին տակին խրխնջաց:

Զ.

Երևանում և Ղազարի Ուզունթալա զիւղում, ձեռքերի
վերայ թուցնելով երեխային:

Էդ ո՞վ էր էդ կտերը,

Թուցրէք էդ ծտերը,

Ազափ տղի տեղն ինչ ա.

Կոկոմ կոկոմ ծծերը:

Թուի, թուի, թուցնեմ,

Սև հաւի միս կերցնեմ,

Ազափ բաշուն հասցնեմ:

Է.

Հին Նախիջևանում աղջիկ մանկան համար:

Դանդանի դանդան պիտի,
Մի լաւ տղայ բանդ պիտի,
Ջիբը քար ու քանդ պիտի,
Դան դանի դան դանեցի,
Բերանը եկեղեցի,
Տուն եկաւ համբուրեցի,
Դուրս եկաւ բարեցի,
Աղջիկ ունիմ նմանի,
Ձենք տալ հազար թիւմանի,
Բուրդ բերէք բաժինք անի,
Ուղտ բերէք բարձի տանի,
Կտանք մի բազիրդեանի
Ջորին գայ ճեհէզը տանի:

Ը.

Ալէքսանդրապօլում:

Ծափին ծափին կուլկուլայ,
Հալուայ շաքեար կուլ կուտայ,
Ելէք, աշեցէք վե գուքայ,
(Տուբիթ) խանումը տուն գուքայ,
(Կաբրիէլ) աղան տուն գուքայ,
Չի խորոզը (աքաղաղ) մորթեցէք,
Թղթով թնդիր վառեցէք,
Տուբիթ խանումիս փայը պահեցէք:

Թ.

Դարալազեաղի էրզափին գիւղում, երեխային լողացնելիս և քուն գնելիս:

Էրկնը վզիկ,
Թափտէր ճրիկ,
Ըռնէր քնիկ,
Ջաղամաթի քունը բեզիկ:

ԵՐԵՍԱՅՈՑ ԱՍԵԼԻՔՆԵՐ

1.

Աղէքսանդրապօլում ամպը որոտալու ժամանակ երեխայքը, մէջքը պատին քսելով, արտասանում են.

Ամպը գոռաց
Մուկը ճռռաց,
Մաչքամ խաթուն
Թախտը նստաւ:

2.

Ղազախի Ուզունթալա գիւղում:

Ա՛ կնանիք,
Եկէք, գնանք Չըրթմակը,
Չըրթմակայ ճամփէն դէօրն ա.
Ալա քօլի խնձեօրն ա,
Խնձեօրը կճեմ ծուլ անեմ,
Ջիզի հարսին կուլ անեմ,
Պատրիք անեմ պատ քցեմ,
Սաղրուն (ձիու գաւակը) նի ըլեմ (հեճնեմ) չափ քցեմ:

3.

Դարալազեաղի Խաչիկ գիւղում, ցուրտ եղանակին, երբ արևը թագնուած է ամպերի յետև, երեխայքը կամենալով տաքանալ, աշխատում են դուրս կանչել արեգակին:

Արև, արև, եկ, եկ,
 Զիզի քարին վեր եկ,
 Հորն ընկնեմ, ձորն ընկնեմ,
 Կարմրագիզիկ դուրս ընկնեմ,
 Քու հէր, քու մէր եկել ա,
 Թուր ու թուանք բերել ա,
 Գոմշու ոտին տուել ա,
 Դուան տակին հորել ա,
 Մուկն եկել ա, հանել ա,
 Կատուն ետնէն վազել ա:

4.

Նոյնը Չարուրի խանլըխլար գիւղում:

Արև, արև, եարի,
 Դայա բաբազ էկիրի,
 Ասկի թանան պիրիրի,
 Ծառը տակը դիրիրի,
 Աքլեօրն էկէ կճրճէ,
 Կոր քեալն էկէ կոխրճէ,
 Տէրտէրն էկի օխնիրի,
 Տիրօխնին էկէ լացիրի
 Կնեաց խօրնը մօրը ճիւր տայ իկեաց,
 Սողսողիկ, դողդողիկ,
 Ս'է տաք արև տու տաքնամ:

5.

Նոյն խանլըխլար գիւղում և Հին-Նախիջլանում աղքատ գերդաստանի մասին ասում են:

Կար մէ իրիկ,
 Կար մէ կնիկ,
 Զինեցին թաղկէ տնիկ,
 Աւին գիդան մէ կոր պլիկ,
 Ին էլ տուին ծամունի,
 Ծամունն եկաւ մուկը տարաւ,
 Զքեաթ, շքեաթ, մուկն ի շքեաթ
 Զարկին մկան պոչը կրրին:

6.

Դարալագեազի բնիկ հայերի մէջ ցուրտ եղանակին:

Ցուրտ ա, ցուրտ ա,
 Մօլլէն քիւրդ ա,
 Տէր տէրը հայ ա,
 Զուալի թայ ա:

7.

Նոյն տեղում զկրտոցը կտրելու համար:

Քեռին եկաւ պակը,
 Սև պտուկը շալակը.
 Պտուկն ընկաւ, կտրվաւ,
 Զկրտիկը կտրվաւ:

8.

Երևանում եթէ երկուսը իրար կենաց խմելով, ուշադրութեան չեն առնում ուրիշներին, այդպիսիների մասին ասում են:

Սաղաթը խմեց Մաղաթին,
 Մաղաթը խմեց Սաղաթին,
 Մեռնեմ ձեր անկարգ աղաթին:

9.

Երևանի շրջակայ գիւղերում աղջկունք ասում են:

Հայ, հարայ անգս } ներքին ծնօտ.
 Կոտրուեց տանգս }
 Մէկ պառաւ աղջիկ
 Ընգել ա ճանկս.
 Ծեծում եմ, լալիս ա,
 Կանչում եմ գալիս ա,
 Սիրում եմ խօսում չի:

10.

Հին Նախիջլանում նոր նշանուած երիտասարդի համար ասում են:

Փեսայ, փեսայ, փստացնեմ,
 Դուան տակը նստացնեմ,
 Մի ճոթ հացով կշտացնեմ,
 Մի թաս գինով գժուացնեմ,
 Երկու բարձով քնացնեմ:

11.

Դարալագեազի հին և նոր հայերի մէջ պտտուում է մի անէկզոտ մի քահանայի ու նորա տիրացուի մասին, որ հրաւիրուած են եղել մի աղքատ հիւանդ կնոջ ճաշակելու և քահանան շարականի երգեցողութեամբ հասկացրել է տիրացուին, որ պառաւ հիւանդի կացինը գողանայ:

Ք Ա Հ Ա Ն Ա Յ

Մոնթիկ, մոնթիկ,
Առջի քոնթիկ,
Նայիր պառւի գլխատակին,
Կացինն առ դիր կոնատակիդ,
Ողորմեա քո ստեղծուածոց
Յուսով ի քեզ ննջեցելոց:

Պ Ա Ռ Ա Ի

Տէր տէր, տէր քահանայ
Փորդ մտնի սև սատանայ
Առ քո օրհնանքն ու յետ դնա,
Թող մեր կացինը մեզ մնայ,
Ողորմեա քո ստեղծուածոց,
Յուսով ի քեզ ննջեցելոց:

12.

Նոյնը Դարալագեազի նոր հայերի բարբառով:

Ք Ա Հ Ա Ն Ա Յ

Ինդա կացին,
Դռան տակին,
Վերու, կոխա
Մէջ տոպրակին:

Տ Ի Ր Ա Յ Ո Ւ

Պոճն երկան է անիրաւի,
Չի պարտկուիր
Մէջ տոպրակին:

Ք Ա Հ Ա Ն Ա Յ

Վէրու, տար,
Զարկ ընդա քարին,
Պոճը կոտրա
Մէջ տոպրակին:

13.

Նոյն հայերի մէջ հարսն սկեսուրի հետ կռուելուց յետոյ:

Կեսուր ինձի զրկիրի,
Անթրոցով մրկիրի,
Կեթամ՝ խանին դատ կանեմ,
Ճօշ տունը վերան կանեմ,
Փստիկ տունը շէն կանեմ:

14.

Դարալագեազի Էրզափին գիւղում, երեխայոց խմբից ճանապարհ գնալու առաջ ընկնողների համար ասում են:

Առջին, առջին
Գէօյարչին (աղանի)
Դայադ (մօրդ) բռնի
Կոր չարչին:

Իսկ յետ մնացողների համար ասում են:

Իտին, իտին,
Իտմը կծի,
Խարիր մանգաղ
Դայուդ կցին:

15.

Դարալագեազի Քարազլուխ գիւղում աղջկունք վերվեր թուչկոտելով երգում են:

Խըշ, խըշ, իգդա (փշատ) խըշ,
Իգդա բըզըմ բաղդա խըշ,
Ես խսանի (հիւսնի) թուռն եմ,
Կիր Սարանի խարսն եմ,
Կինդս ընկաւ բըրլխտօր, (անցատ բառ)
Պտիսի, հայ պտիսի:

Ալ արբշում կճիսի,
Գեղի ըռէս խէրիկս ի,
Տայք տանտիկին մէրիկս ի,
Քեարվան զուան քեռիս ի:

16.

Նոյն տեղը երեխայք միմեանց խարդախութիւնը տեսնելով:

Սատանայ, հայ սատանայ
Պոչիդ, տակը տիտանայ
Քանի գարկեմ խաստանայ,
Աղջիկներուն մօտանայ,
Պառաւներին զատանայ:

17.

Չարուրի Ուլիանորաշէն գիւղում խաղին չմասնակցող երե-
խային բարկացնելու համար ընկերները ասում են:

Զըռպօ, զըռպօ, զըռպ անեմ,
Ճախայկ թալեմ՝ խըրկ անեմ:

Իսկ չմասնակցող երեխան պատասխանում է.

Ընկերս պէ,
Կորկոտս կէ:

18.

Գարալագեազի Ազատակ և միւս գիւղերում:

Ա.

Էս քշեր մէ երազ եմ տըսէ,
Ղամբար գեօլերն եմ լողցէ,
Մէ կուց աւազ եմ կողցէ,
Տէր տէր, մեղայ Աստըծու:

Բ.

Խաւերը մտան կեօրծի խորը,
Ազուէսն է կերաւ խարսի փորը:

Գ.

Եարէք էթանք ինձի,
Մէ փարա տանք բրնձի,
Ես քէ թալեմ, գու ինձի:

Դ.

Հալայ, հալայ, բալլարի,
Ալըրմ սալամ բալլարի.
Ես լուսնակ, դու արև:

Ե.

Չաղանայ չաղչաղանայ,
Մալէ, մալէ, դարկէ դարկէ,
Սև սամաթեռ օղն ու կօծակ,
Մէ բողոճակ թէի վեր դուռը:

19.

Նոյն գիւղերում կորուստ որոնող երեխայքն ասում են.

Սատանայ, սատանայ,
Ինչ կիտեր ես՝ եարի կիսենք,
Չատը քեզի, քիչն ուր է.
Սատանայ, սատանայ,
Զարկեմ, պոչիդ տակը փետանայ:

20.

Նոյնը Ալէքսանդրապօլում:

Սատանայ,
Պօչիդ տակը բանըմ կայ,
Կէսն ընձի, կէսը քեզի:

Նոյնը Չամախի:

Սըտանայ, մտմտանայ,
Մին զագիկ ամ կորցրալ,
Նաչիզը քիթի, ինձի տուր:

21.

Երևանի կողմերում երգում են.

Հէքեաթ, հէքեաթ, պապս ա,
Ղաշղա քուռակ տակս ա,
Հեճնեմ, էթամ էրևան,
Էրևանայ կուտ բերեմ.
Վուտը տամ հաւերին,
Հաւերն ինձի ձուճու տայ:

Ձուձուձն տանեմ դարփինին,
 Դարփինն ինձի շղփինկ տայ, (անկոթ դանակ)
 Զղփինկ տանեմ, հարսներին,
 Հարսներն ինձի գաթայ տան,
 Գաթէն տանեմ չոբանին,
 Չոբանն ինձի գառ տայ,
 Գառը տանեմ Աստրճուն,
 Աստուած ինձ մի աղբէր տայ,
 Աղբէր, աղբէր, ջան աղբէր,
 Դու բերդի գլխին՝ աղբէր,
 Ես բերդի տակին՝ աղբէր,
 Չալ չալ կովերն ինչ էլան,
 Նախրատափին գիւմ էլան,
 Մերայ, մերայ, դիշերն արի կաթ կթի,
 Կաթը դրի կրակին,
 Ման եկայ չալ տօրակին,
 Այ գալըմ աղբէրակին,
 Դու իմ աղբօրն ի՛նչ արիր,
 Քէ դնեմ իշի քուռակին.

22.

Դաւալու գիւղում, զարնանը, երեխայքը խմբովին դաշտ
 զբօսանքի գնալու ժամանակ ասում են.

Չա, չա, չալթուկ չա,
 Չալթուկ փռեմ չորանայ,
 Տամ հաւերին կուրանայ,
 Հաւերն ինձի ձուձու տան,
 Ձուձուն տանեմ դարբնին,
 Դարբնն ինձի շղփինկ տայ,
 Զղփինկ տանեմ հարսին,
 Հարսն ինձի գաթայ տայ,
 Գաթէն տանեմ չոբանին,
 Չոբանն ինձի գառ տայ,
 Գառը տանեմ Աստրճուն,
 Աստուած ինձի աղբէր տայ,
 Աղբէր, աղբէր, ջան աղբէր,

Ջանս քէ դուրբան աղբէր,
 Դու բերդի գլխին՝ աղբէր,
 Ես բերդի տակին՝ աղբէր,
 Բերդը պուցին, աղբէր,
 Գինին թափեցին, աղբէր:
 23.

Ղազախի Ուղունթալա գիւղում:
 Հէքիաթ, հէքիաթ էս պապս,
 Ղաշղա քուռակ էս տակս,
 Գնացի ձուլաւէր,
 Տեսայ մի հլիվեր (ալւոր)
 Մտայ մի ճաղաց,
 Միջին մի կտաղած,
 Մի հաց ունէր մկան կերած,
 Մի հարսն ունէր թօնրի էրած.
 Լինզը քաշեց կոճերն աղաց:
 24.

Ալէքսանդրապօլում.

Հէքիաթ, հէքիաթ պապս,
 Ղաշղա քուռակ տակս,
 Հեճնեմ, էրթամ երևան,
 Կինի խմեմ, գիրանամ.
 Հաւերիս կուտ ու ջուր տամ,
 Հաւերս ինձի հաւկիթ տան,
 Հաւկիթը տանեմ խառատին տամ,
 Խառատն ինձի շուի տայ,
 Զուին տանեմ չոբնին տամ,
 Չոբանն ինձի գառ տայ,
 Գառը տանեմ Աստրճուն տամ,
 Աստուած ինձի աղբէր տայ,
 Աղբէր, աղբէր, ջան աղբէր,
 Դու բերդի պատին՝ աղբէր,
 Ես բերդի տակին՝ աղբէր,
 Զաքար մաղեմ, կեր աղբէր:

25.

Չարուրի Ուլիա Նորաշէն գիւղում խմբուած երեխայքը
Հանելուկները ասած վերջացրած, այլևս չեն գտնում, ասում են.
Խանելիւք, խանմանելիւք,
Քեզի խանեմ մէ բալաք ձմերուկ: (գոչնզգոչն):

26.

Նոյն գիւղում, դարնանը, առաջին անգամ ամալը որոտա-
լիս, երեխայքն աչքերը դէպի երկինք, ձեռքերը լայն բանում
են և ասում երեք անգամ:

«Մեր ծծումի (խնոցի) կարագը էդ ղըգայ ընի»:

Կամ պատի քարը կրծելով՝ ասում են երեք անգամ:

«Իմ ատամները քեզ պէս պինդ ըլի, քար»:

Կամ մէջքը պատին երեք անգամ դիպցնելով ասում են:

«Պատ, իմ մէջքի թուլութիւնը տամ քեզի,

Քու մէջքի պնդութիւնը տու ընձի»:

27.

Նոյն տեղում կարճահասակ՝ մարդուն երեխայք ծաղրում են.

«Ակլի (Յակոբ) կաքաւ,

Վեարդի տափար, (թագնուար)

Փետով զարկեմ,

Փխուր թափար:

28.

Նոյն տեղում ընդունելով, որ կաջաղակի (ղաջըլայ) կարկա-
ջելը նշան է Հիւր գալուն, երեխայքն ասում են:

Ղաջըլայ, բարով էկար, խազար բարի

Թէ խէր ես, քելի, մէջն էլ եարի,

Թէ շառ ես, ոտդ կոտրուի, էլ մի եարի:

29.

Նոյն տեղում աղջկունք, մի ոտի վերայ պինտ պտտուե-
լով ու փէշերը քամուն տալով, լանկարծ նստում են գետնին և
ասում:

Անթրան (անուն).

Պատէն թում,

Ինդեամ, մեռամ:

30.

Նոյն տեղում:

Սւաշան (անուն).

Թումաշան. (անուն)

Գնացին, պոլորին բերին քեանս մէ շան

Վեան էր տրսէ էդ թամաշան:

31.

Ալէքսանդրապոլում աղջկունք վեր վեր թռչկոտալով:

Ելայ էրդիկ, վեր վեր ընկայ,

Խաչքը կոտրաւ, ես նես ընկայ,

Գյօրեցայ, թնդիր ընկայ,

Օխտը պուտուկ տօլմա կերայ,

Ելի ըսի՝ չկշտացայ:

32.

Նոյն քաղաքում կարապետ անունով մարդուն ծաղրելու:

Կարապետ,

Կարմիր վարպետ,

Չան վարդապետ,

Իշու կարպետ:

33.

Նոյն տեղում աղջիկները թռչկոտալով երգում են միասին:

Զփիկ, գփիկ զարն է,

Ալուան ծաղիկն առնէ,

Իմ տալը տախտակումն է,

Կանանչ կապան գլխուն է,

Բերանն առած լեղի է,

Բերնես թափածն գինի է,

Գինի, գինի լաջերուն,

Վարդ մանուշակ հարսներուն.

Տանձ ու խնձոր աղջկներուն,

Քթոցմ աղբ մանչերուն:

34.

Նոյն տեղը խաղացող խումբը ցրուելու ժամանակ:

Ծտի բուն, ծտի բուն,
Երբ պտի մթնի գնանք տուն,
Գնանք տեսնանք հարսը քուն,
Կեսուրը կշտին, քոփակ շուն:

35.

Նոյն քաղաքում աղջկունք գնդակ խաղալու ժամանակ:

Մէկ, երկուս, տասնըվեց,
Ես էլ ըսի տասնըվեց,
Դուն էլ ըսիր տասնըվեց,
Չես հաւատայ, համբերէ տես:

36.

Նոյն տեղում երեխայքը թռչկոտալով:

Մէկ, էրկուս, չերկրննաս,
Յերեկ, չորս, չորնաս,
Չինգ, վեց, վերնաս,
Օխտը, ութը ուր կերթաս,
Իննը, տասը տուն կերթամ:

37.

Ղաղախի Ուզունթալա գիւղում «չիլգի» կոչուած խաղի ժամանակ:

Սըրմի (կապոցտ) վիլա, (օղականման փաթթած թել)
Կուռդ թիլ ա,
Ընկերը հետուկ, (ընկերիդ նման)
Աչքիդ ծետուկ,
Ընկերիդ ճաթէն կտրես,
Բարինանց Չատինի կօլօլ աչքն ուտես:

38.

Նոյն գիւղում:

Ա.

Սյք, բէն,
Տաշտին դմփեմ,
Օխտը պաղարճ խըտրտեմ,
Գնամ գեղը պտտեմ,
Դամ կլեօխդ դմփեմ:

Բ.

Նրէս կկեայ փաւը,
Թակուրճակիս դաւը:

39.

Նոյն գիւղում, երբ երեկոյեան դէմ, եկեղեցու զանգերը զարկում են, որպէս զի իմացնեն ժողովրդին վաղուայ տօնը, երեխայքը ուրախութեամբ թռչկոտում են և ասում:

Եզուց կիրակի,
Երմանի բեագի,
Չալ հաւը ծրտեց,
Չուն քամակից շարտեց:

40.

Չամախու գիւղերում երկ երկու կամ խմբովին ձայնով երգում են ու ծափ տալի.

— Արա հօ, քո մար հոն ա,
«Արա հօ, քեացալ ա Չաքի»
— Արա հօ, հինչ կրպիրի,
«Արա հօ, գար ու գարբար»,
— Արա հօ, ինձ էլ կտաս.
«Արա հօ, պա խէ չըմ տալ:

41.

Նոյն տեղում թւի շարժումը նմանեցնելով ճախարակին ասում են.

Տըզ, վըզ չխարակ,
Ես հաստ մանեմ
Դու պերակ:

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳՆԵՐ

Ա.

Բասենի գիւղերում գուլթան վարելիս հօտաղնեւը երգում են:

Խըլըսուն (առաւօտ) թթու թան,
Կէս օրին ոսպէ վաիկ (ապուր)
Իրիգուան աւելուկի աղցան,
Դէհ, հոռովել արա,
Մուխսի (մահտեսի) գուլթան:

Բ.

Նոյնը Ղազախի գիւղերում:

- «Մաճկալը մաճին,
- Դիւռն ընկաճին,
- Ճիտ անեմ (գրկեմ) մաճկալի բաջին,
- Հորիքը պտտեմ
- Մաճկալի բաջին խտրտեմ:

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ «ԽԱՐԲՈՒՄ» ՅԱՒԻՅ

Ջարուրի Ուլիանորաշէն գիւղում ով կամենում է խարբուխով չվարակուել, ասում է խարբուխով հիւանդին.

- Ճաղցէն եմ իկեալի,
- Կլոխս ալրոտ է:

Հիւանդը հարցնում է.

- Դաւան (ուղտը) քանի՞ ոտէն կլլի.
- Չորս, պատասխանում է առողջը.
- Խազ ու խարբուղս քեզ խէտ փոխս

շարունակում է հիւանդը:

Ե Ր Ե Մ Ա Ն Յ Մ Ա Ղ Ե Ր

1. Մ Ա Տ Խ Փ Ո Ւ Կ

Ա.

Դարալագեագի նոր հայերի մէջ աղջկունք ժողովում են և իւրեանց միջից ջոկում են մի պլուխ, որ կոչւում է պապ: Ապա բոլորն էլ իւրեանց ձեռի ցուցամատը դնում են մի տեղ և պապն իւր աջ ձեռքի ցուցամատը կարգով դիպցնում է նորանց մատերին և արտասանում է այս խօսքերը:

- Ուկուլ, դուկուլ, դինազէ
- Չամիլ, մամէլ պիպազէ,
-
-
- Դանակ սրեմ,
- Սև խաւու վիզը կտրեմ:

Վերջին խօսքը որի մատին ընկաւ, մատը բռնում են և աղջկան ծեծում են, մինչև խոստովանի թէ որ տղային պէտք է ուզէ:

Յ.

Մատխիուկ Հին Նախիջևանում:

- Ովի, վանի, կապիտան,
- Չեմի, կոմի, գապիտան,
- Լատտան, բիտտան,
- Ռոզ, բուռզ,
- Քէրվա, իզդա,
- Կոկին կնեազ:

Գ.

Նոյն խաղը Երևանում և Դաւալու գիւղում:

- Աքլոր դիքլոր,
- Չարուզ, չամբար,
- Ոսկէ դամբար,
- Հաչի հուզի,
- Թուրքի թազի,
- Պոմբլա պզի,
- Նալալի,
- Ղըլըլ, մըլըլ,
- Դօլդուր բիստի,
- Աբասի:

Դ.

Նոյն խաղը Դարալագեագի Ազատակ գիւղում:

- Ուկուլ, տուկուլ,
- Չարէ, չըմբէ,
- Հաւթէ կոճակ,
- Մէ պողոճակ.
- Դանակ սրի,
- Սև խաւի վիզը կտրի:

Ե.

Կարբի գիւղում Բայազէթի գաղթականների մէջ:

- Ակիէ, դուկիէ Օմրզա,
- Մախտէ կոճակ կոկոզա,
- Լուսու մտաւ քարվազա,
- Ճուկ պողոճակ ճանին ճուկ:

Զ.

Նոյն խաղը Երևանում:

Ատատէ, բատատէ Զամշուկակին
Զամամ շուլ, Մի դամբուլ:

Է.

Նոյն խաղը Ալեքսանդրապոլում.

Ա.

Հատիկ, հատիկ, հարուատիկ, Կուտ ուտեմ, կուտման ուտեմ,
Չալ խնձորիկ, փշատիք, Աւագ դռան պահիկ անեմ. (պարկեմ):

Բ.

Ալըմ, ա'լըմ, աֆանայ Արը գեազար կորխընդայ
Գեալդը, չըխտը քեափանայ Ալըմ, սալըմ սալա բուռնի
Սուլէյմանըն սուչինայ, Չա'ք շուռնի:
Բինդմ հալա բոյնընդայ

2.

Թ Ի Զ Մ Ա Թ Ի Զ

Ա.

Գարալագեազի Նոր հայերի մէջ աղջկունք բաժանում են երկերկու ընկեր և ապա երկու ընկեր իրար դէմ նստած, լայնացնում են մատերը և չորս ձեռքը իրար վերայ տնկում: Ապա միւս աղջկունք թռնում են այդ ձեռքերի վրայից այնպէս զգոյշ, որ չգիպչի ոչ ոտերը, ոչ էլ շորի ծայրը: Եթէ գիպչի, գիպչողն իւր ընկերով փոխարինում է նստողներին: Առաջին թռչողն ասում է հետեւեալ երգից մի-մի խօսք և միւսները իւրեանց թռչելու ժամանակ կրկնում են առաջինի ասածը:

Ըսմըլէ, հայ ըսմըլէ, Գեօթն խիար իւստիւնա,
Ըսմըլէ բաբէ տայա, Աթայ մաթայ դայմասըն,
Բաբէ տատը խաւէլա, Թաուը դոյան տիւշմասն,
Խաւէլա խըզմաթ էլա, Այ հաւալայ հաւալայ,
Խզմաթի բաշ իւստիւնա, Բեօրքն գեօթը, դաւալա:
Բաշն դուար իւստիւնա,

Յ. Ա Ր Թ Ո Ւ Ր Մ Ա

Ալեքսանդրապոլում տղայ երեխայք արթուրմա խաղալիս մինը կռանում է, միւսները նորա վրայից թռնում են: Առաջինն ասում է հետեւեալ երգի մի մի տողը և միւսները թռուցելիս կրկնում են:

Կտի կտի մաստանայ, Թաուլի կոչին դիւշըմազ,
Կտիկմ գեալդի բոստանայ, Աւլն էլաւ սարը,
Բոստանչի դէօյդի, դէօյդի, Քար կերաւ, քացալս խմեց,
Դէօյդի, կըչը կըռըլդի, Արիւն շոեց, պանիր թափեց,
Թանուլ ապուր թէչրանի, Կօզմ կօրէկ էի ցաներ,
Կարպետը ծակ ջէչրանի, Հաւքերն էին կերեր
Գնացի մի մարագ, Գնացի բերդի դուռը,
Գտայ կճուճ մի կարագ, Գտայ մի նուռը.
Ջարկի պատին կոտրեցի, Կէսը հոտած էր, կէսն անուշ,
Կանթը էրդիկ թաբլեցի, Ջապղայ դնել թռնել հէչրանի,
Աթակ մաթակ հէչ բակմազ, Ջապղայ տանել հէչրանի:

Բ.

Նոյն խաղը Մշու գաղթականներու մէջ:

Մամուլա, ջան մամուլա, Բաբաս եկաւ ճնկլ մնկլ
Մամուլա կու բաւէ տա Արտմը կօրէկ եմ ցանել
Կուբաւէտա տոմահոլէ, Զիֆրի հաւերն իկերան,
Տղմահոլէ ճանճէ մնճէ, Աթակ մաթակ հէչ դազման
Ճանճէ մնճէ, կոնճէ, Տիրուն սիրուն նախսորուր:

Գ.

Նոյնը Ղազախի Ուզունթալա գիւղում:

Ըսմըլէկ, ջան ըսմըլէկ, Կըսմաթմ բաշիւստիւնայ,
Ըսմըլէկէ բաւէ կալէ, Բաշմ դուար իւստիւնայ
Բաւէ կալէ չար հաւալ է Տիվիս տիվիս կաւանօ,
Չար հաւալ կըսմաթ էլա. Ա դըռճօ զըճօ ըկվանօ:

4. Ա Լ Ի Ս — Պ Ա Լ Ի Ս

Ա.

Գարալագեազի Էրզափին գիւղում երկու, երեք չորս կամ անելի աղջկունք միասին խաղալիս, մինը նորանցից ձեռքի բըռնում թագցնում է, որ և է մի առարկայ (մատնոց, թել, մրգեղէն և այլն) և բոլորն էլ բուռները սեղմած դնում են միասին: Մինը, որ կանխապէս հեռացած է, մօտենում է և և իւր ձեռքը կարգով դնելով ընկերների ձեռքի վերայ, ասում է մի մի խօսք ոտանաւորից, որի վերջին խօսքը եթէ վերջանայ առարկան պահող ձեռքի վերայ, այն ժամանակ զտնողը իւրեան կվերցնի առարկան, իսկ եթէ չգտնի, ինքը կտայ այդպիսի մի առարկայ:

Ալիս, պալիս
Քելի, եարի,

Ժամտան
Դուռը բաց:

Բ.

Նոյն խաղը Գալարագեազի Այնագուր գիւղում:
Ըստում Ընդում, Վեր տամ ըստում
Քարէ տնդում, Գտնեմ ըստում:

5. Ո Տ Խ Փ Ո Ւ Կ

Ա.

Գալարագեազի Արփա գիւղում մի քանի տղայք բոլոր ի շուրջ նստում են և ոտները ձգում շրջանի կէդրոնը: Մինը հետևեալ ոտանաւորից մի մի տող իւրաքանչիւր ոտի վերայ արտասանում է և վերջին տողը որի ոտին վերջացաւ, նա պէտք է դուրս գայ շրջանից: Այդպէս մէկ մէկ հանելով մնում է վերջինը, որին կանգնեցնելով մէջ տեղ հարհրում են ոտերով:

Մօթալ մօթալ,
Թարսի մօթալ,
Դին աթար,
Դամար զաթար,
Հէյրան դուլի,

Քէյրան դուլի,
Նամարասի,
Լակոտ գցի,
Էս դուս գցի.

Բ.

Կամ այսպէս:
Հոպպան, գեօպպան,
Իաու, երթըլ.
Սու իչ, կուրթըլ,
Աղ գցեմ,

Բողոճ գցեմ,
Վեր նաղարայ,
Չըս կըրաղայ:

Գ.

Նոյն խաղը Ղաղախի Ուզունթալայ գիւղում:
Բիրան բիրան,
Իքեան իքեան,
Արվաղը խան,
Հէօքմազ,
Դեօքմազ,
Ղարայ դըր,
Գեօմիւր,
Գեօթըր:

6. Թ Ը Ռ Ա Ն Ա Ղ Ի Կ

Ա.

Գարալագեազի Էրզափին, Քարաղուխ և այլ գրացի գիւղերում փոքրիկ աղջկունք, բռնելով իրար ձեռքերի մօրթը, բարձրացնում են միմեանց ձեռքերը և երգում:

Ճիւ, ճիւ,
Աղուճիւ,
Աղուան գնաց Երուսաղէմ,
Բուրդ բիրից,

Բամբակ չիբրից,
Չալ արաց,
Չալուար չարաց,
Թը... ճնճղիկ:

Վերջին խօսքի վերայ բարձրացնում են ձեռքերը և ով լաւ չէ ասում, նորան տալիս են «լոպուղ» այսինքն ձեռքով կամաց զարկում են ուռցրած երեսին:

Բ.

Նոյն խաղը Ալէքսանդրապօլում, առանց ծեծի:

1.

Միօ միօ
Փիշօ, փիշօ,
Ո՛ւմ կատուն ես,
—Ալաբազի.
Ի՛նչ կուպես,

—Չիր ու չամիչ,
Ո՛ւմ կտանես,
—Իմ ձագերուն,
Փիշտան կորի:

2.

Ճիւ, ճիւ ճիտոնա,	Հեճնեմ էրթամ Հնդստան,
Հարսին տարան բատոնա,	Քեզի բերեմ մատնստան,
Ես պարոնին տղան եմ,	Մատդ դնես փոկստան
Թագաւորին փեսան եմ,	Բու դազարը հաբ (բոլորը)
Պարոն աղբար դուրս արի,	բոստան:
Ձիդ ու ջորիդ ինձի տուր.	

7. Պ Ո Ւ Տ (Կ Ա Կ Ա 2)

Ջարուրի Աւլիա Նորաշէն գիւղում երկու աղջիկ մէջք մէջքի տուած բռնում են միմեանց ձեռք և երրորդ աղջիկը կանգնելով նորանց ձեռքերի վերայ ծափ է տալի և երգում է.

Պուտ ձեր էքին,	Էքի ջրեմ,
Պուտ մեր էքին,	Էքի քաղեմ.
Պուտ ձեր էքին,	Կակուճ (վարսակապ) կարեմ,
Պուտ մեր էքին,	Օրոճ (ապակէ կոճակ) շարեմ:

Երգողին ձեռքերի վերայ պտտցնում են: Եթէ նա սխալուեց, այն ժամանակ ձեռք կբռնի երկու աղջիկներից նորա Հետ նա, որի ընտուլիւնը որոշուում է քարէ վիճակով, այսինքն քարի մի կողմը թաց, միւս կողմը չոր, քարը ձգում են վերև, որ ընտրած կողմը վերի կողմը լինի, ընտրողը կբռնի ձեռքը:

8.

Ալէքսանդրապոլում երկու աղջիկ, մէջք մէջքի տուած, միմեանց փոփոխակի բարձրացնում են և տակինը հարցնում է ու պատասխան ստանում:

—Տակդ ինչ կայ.	—Վրէդ ինչ կայ
«Յօրդան դօշակ.	«Աստղ ու լուսնեակ:

9. Զ Ա Ն Գ Ա Կ

Ջարուրի Աւլիա Նորաշէն գիւղում երկու տղայ կամ երկու աղջիկ, մէջք մէջքի տուած, երեք անգամ փոփոխակի իրար բարձրացնում են մէջքի վերայ և տակինը հարցնում է

«զայցանգ», վրայինը պատասխանում է «պամբեաք»: Իւրաքանչիւրը երեք անգամ բարձրացնելով և ասելով, վերջապէս տակինը հարցնում է և ստանում է պատասխան.

—Էդ վեճու ի ելէ տնիսը,	«Չամիչ, փշատ.
«Ես եմ,	—Իմ պեաժինը կպախէս.
—Ի՞նչ ես ուզելի.	«Կպախեմ.
«Քար քշերք:	—Իէ ար տար:
—Ի՞նչ ես քշուելի.	

Այդ բոլոր խօսքերի ժամանակ Հեճածը մնում է անշարժ և միայն վերջին խօսքից յետոյ իջնում է և մի ըուպէից յետոյ նորից Հեճնում է և տակինից հարց ստանալով ինքը պատասխանում է:

—Էդ վեճու ի ելէ տնիսը,	—Իմ պեաժին փշատը պէրի՞ր.
«Ես եմ, քար քշերք եմ պէրէ,	«Կատուն տարաւ:
առ տար.	

Այս խօսքի վերայ՝ տակինը վրայինին կատու ընդունելով, սկսում են միմեանց զգգղել:

10. Մ Ա Լ Ե Ա Ք Ս Ի Մ Ա

Ալէքսանդրապոլում աղջկունք երկու բաժին լինելով, միմեանց ձեռք բռնած, բաժինը բաժնի դէմ կանդնում է և իրար հարց ու պատասխաններ են տալի:

—Մալեճքսիմա,	—Վեարա վեարա քիմ երիշայ
«Մեալքի դուգայ	«Հոռոմսիմայ (տալով մինի անունը)
—Փերոճշայ.	գեալդի բու դաթլար:
«Փերդին դիւշայ.	

Յիշած անունը սըընթաց վազելով՝ եթէ դէմի բաժնի շղթան կարողացաւ կտրել, իւր ցանկացածին տանում է իւր բաժինը, ապա եթէ չկտրեց, ինքը մնում է միւս բաժնում:

11. Զ Ը Խ Կ Ը Բ

Ալէքսանդրապոլում խաղացողները երկու խմբի են բաժանում և իւրաքանչիւրի պարազուխները իրար հարց ու պատասխաններ են տալի:

—Խնամի Խորան.
 «Ի՞նչ է:
 —Հաւերս կորան, ձեր տունն է.
 «Մեր տունն է:
 —Քշէ, քշէ գայ.
 «Քշեմ, քշեմ, չի գայ:
 Տաք տաք ապուռ վրէն լից գայ.
 «Լընեմ, լընեմ չի գայ:
 Մախաթ կոխէ թող գայ.
 «Կոխեմ, կոխեմ չի գայ:
 —Հաւերս քանի՛ հակիրթ են ածէ,

«Մաղ ու կէս:
 —Քա, ան օր ես ձեր դռնէն ան-
 ցայ, ան ի՞նչ պարակ մուխ կել-
 լէր ձեր չերդիկէն.
 «Հարսս պարկեր էր՝ տղայ էր պե-
 րէ, ձուածեղ էփեր էի:
 —Ի՞նչ է պերէ:
 Մանչ.
 —Անունը ի՞նչ դրիւք.
 «Ստեփան:

Այս անուան վերայ երկու բաժինն էլ խառնուելով իրար թռչկոտում են և ծափահարում և մի քանի անգամ ասում են «չըխկըր, չըխկըր, Ստեփան»:

12. ԱՂՈՐԹԻ, ԿԱՄ ԾՕՃ

Առաստաղից, ծառից կամ այլ չարմար տեղից թոկ կա-
 խելով մէջը նստում են և ճօճում: Խաղը կոչում է Ղաղախում
 և Երևանի կողմերում *Ճլորթի*, Բասենում *ձօձը*, Գարալագեազի
 նոր հայերի մէջ *չամշիպ* կամ *քըշկօ*, իսկ հին հայերի մէջ
քիւվանջի:

Ճլորթի ընկնելու համար խմբում են աղջիկունք կամ
 տղայք կամ երկուսն էլ խառն: Երբեմն ճօճողի ոտերին զար-
 կելով պահանջում են, որ նա իր սրտի ընտրածի անունն
 ասի: Ճլորթի ժամանակ երգում են:

Ա.

Երևանի կողմերում:
 Չու, չու, չուանդի,
 Իմ աղբերը Գեանջայ ա,
 Գեանջի խանի դռանն ա,
 Սամուր քիւրքը կռանն ա,
 Փետէ փետէ մարդիկը,
 Երկաթէ կնանիքը,
 Փունջ մանիշակ աղջկերքը

Վարդ ու խնձոր տղէրքը:
 Բ.

Հին Նախիջևանում:
 Քիւ, քիւ, քիւվանջայ,
 Իմ աղբերը Գեանջայ,
 Գեանջու խանի դռանը,
 Կանանչ կապէն կռանը:

Գ.

Ղաղախի Աւզունթալայ գիւղում:
 Չիր, չիր, չիջանջայ,
 Իմ աղբերս Գեանջայ,
 Գեանջու զալի դռանն ա,
 Թաւայ քաշեմ ձիանն ա,
 Կտլի կտալը կեցին, (հազած)
 Ոկալ քցի ծալքին,
 Ծալքը դումշով լիքը,
 Տիււր թուխ կեօմշով լիքը
 Փուղաու փուղաու (կարճ,
 անշնորհ) մարդիկը,
 Ոսկէ քեաքիւլ տղէրքը.
 Փունջ մանիշակ աղջկերքը:
 Գ.
 Ալորթի բաղի,
 Չիմշիրի թաղի,
 Չիմշիրը փուլ կեայ
 Տակովը ճիւր կեայ:

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

Ա.

Ղաղախի Աւզունթալայ գիւղում:
 Ծիծեռնակ
 Սև սա տանայ
 Բարձր տանն ա:
 —
 Մ ո Ր Ի
 Ես լալագարն եմ,
 Խոտ խոտի խառնեմ,
 Գիտես թէ զառն եմ,
 Կարմիրն խիար եմ:
 —
 Արեգակ եւ լուսին
 Սար ու լար,
 Էրգեան ու լար,
 Երկու կաքաւ գնալ ու գալի:
 —
 Ս ա Ղ Բ
 Ալալա, վալալա,
 Տար խաղ արա՛,
 Պիր կախ արա՛:
 —
 Պղինձը եւ կաակարիներ
 Սրաքը չոքեց,
 Ասլանը նի ըլաւ:
 —
 Մ ա Տ Ա Ե Ր
 Իմ հօրանց տասը եզը,
 Տասն էլ զաշղայ:
 —
 Մ կ Ր ա Տ Ը
 Մի կով իմ հօրանք,
 Մատերս կոխեմ քամակը,
 Արուճ (որոճ) է անում:
 —
 Ոսայնահորի ոսասախսակները
 Մի ձորում երկու աղուէս
 Ճուկը են դնում:

Հրացան եւ գնդակ,
Կովը պառանչեց
Հորթը փախաւ:

—
Կամնը

Փէտէ կիւշ
Քարէ բրդիւշ:

—
Դրգալ

Սլ կընկղիկ,
Չալ կընկղիկ,
Քանի բեռնեմ,
Տար, կընկղիկ:

—
Ածելի

Ասլանը նի ըլաւ,
Անհամբարքը վեր բերեց:

—
Երկիցն ու ասղեր

Գոմշի կաշին չի ծալուիլ,
Աւազը չի համբրուիլ:

—
Գլխարկ

Վեր առնես՝ կղարտակուի,
Վեր զնես՝ կցուի:

—
Ասեղն ու բելը

Լըպրստեմ՝ ծակը նիտամ:

—
Կաչաղակ

Խոջան եկաւ,
Գաղը ետքին:

Ծիածան

Ըստի չոքեմ,
Դաղստան ճիւր խմեմ:

—
Միսք

Ըստիանց քէ նի թողեմ:

—
Ոսերը եւ ոսնամանները
Կոթաւորը մաշուում է,
Ձուածեղը չի մաշուում:

—
Հրացան

Երկաթ է մեռել,
Փետէ գերեզման:

—
Գինի (եռացող)

Տափի տակին բուղան գոռում ա:

—
Ոջիլ

Սարից ընկնի, չի ջարդուիլ,
Ըղունկներից կջարդուի:

—
Նուռը

Փստի թորոն,
Չեղջով լիքը:

—
Վիլա եւ վիկից

Ինքը կզնայ վագէ վագ,
Գօտիկ ունի հարիւր գագ:

—
Մեղու

Պզնայ, կզնայ, իզ չունի,
Մեր ունի ու հէր չունի:

Ճրագի լոյս

Բռնեմ բռնովս մին,
Բաց թողնեմ տանովս մին:

—
Ա չ ք

Սև սալայ, սիպտակ սալայ,
Խաթունը միջին կճլվլայ:

—
Չիու ոսերի հեք

Ըստեղից Երևան,
Մանր քրեղան:

—
Արեւի շողը

Էստեղ պուպուզ,
Էնդեղ պուպուզ,
Կտրովը դուս:

—
Անկողին

Յերեկն աղայ,
Գիշերը նեօքար:

—
Օ ձ ր

Մսէ շամփուր տափի տակը:

—
Ոս եւ գուլպա

Կոկիլիս բրգբրգոտդ:

—
Մասուր

Սև սիրէգ, կարմիր պուլիկ:

—
Հաւկիթ

Դուրսը արծաթ
Մէջը ոսկի:

Խնոցի

Իմ հօրանց մի եղը,
Պորտը քամակին:

—
Մուկը

Հողէ լուլայ,
Մսէ գիւլլայ:

—
Մոս

Կանանչ հինեմ,
Կարմիր թել տամ,
Սև կտրեմ:

—
Սաջ 1)

Եզը չուլեմ,
Չուլն ուտեմ:

—
Իլիկ եւ ոս

Չունը մոռաց,
Դունչը ուռաւ:
Ջրաղացի փռաւ

—
Մի ոտ,
Երեսուն թև:

—
Ջրաղացի քար

Երկու սար,
Կրճում են իրար:

—
Բահով վար

Յետ յետ գնաս,
Առաջը սևանայ:

—
Ջրաղաց

Տրտինգ կանի եամաճ եամաճ,

1) Բոզ, որի վրայ սարուժը հաց են թխում:

Աշխարհ կուտի կամաց կամաց: Էն թեխը դար,
 — Մէջ տեղը անդադար:
 Մրջիւնի բուն —
 Մի գոմ ունեմ մի խորում —
 խոտ չի տանիլ.
 Տրեխ
 Տի քիթ ունի, քառսուն աչք:
 —
 Տարան
 Տմառը կպաղի, ձմեռը կբացուի:
 —
 Մորքե գսակ
 Տիւնքը մի թիւղ, մրուսը խաղար:
 —
 Անուն
 Քեզի գրիմ, կսլաւ:
 —
 Թոնդիր եւ ծուխ
 Կարմիր ծովը նետը կբռնայ,
 Սև կովը դուռը:
 —
 Գուլպա
 Քուրը կապեն տակը կկատորի:
 Սև կովը դուռը:
 —
 Քրաղաց
 Քուրը կապեն տակը կկատորի:
 Սև կովը դուռը:
 —
 Գեսն իւր ջրով, ամբրով
 Էս թեխը դար,

Թ Ա Փ Մ Ա Ջ Ա

Երեխայքը ազատ ժամանակ, գլխաւորապէս տօն օր կամ երեկոյեան խմբում են և առաջարկում միմեանց յանգով վերջացած հարց ու պատասխաններ, շատ անգամ սրամիտ բովանդակութեամբ: Հարցերին կամ ուղղակի անպատրաստից պատասխանում են կամ հարցը կրկնում են և հարց առաջարկողը պատասխանում է: Գարալագեազի նոր հայերի բարբառով կոչում է թափմաջա այսինքն դտնելիք և դա շատ յաճախ հեղինակում է իսկոյն, առանց նախապատրաստութեան, հակառակ հանելուկների, որոնք մի անգամ ընդ միշտ հեղինակուած են:

Ա.

Ջարուրի Ուլիա Նորաշէն գիւղում:
 —Ասը՝ ճաղչի ակնատը լինքը ճան. — Հայ՝ ասիր քսան.
 «Մկները պերնիդ մրմնջան. «Դայա բաբաղ փսփսան:
 —
 —Հայ՝ ասիր Ենգիջայ, (գիւղ —Հայ՝ ասիր ջուայ, (կարաս).
 Ջարուրում) «Էշու պէս բըռայ:
 «Ուտես մի դուռտ (բորոտ) ջիւջա: —
 —
 —Հայ, ասիր գետին, —Հայ՝ ասիր ետինջա.
 «Ուտես վարդպետին խետին: «Ուտես շան փաջա:
 —
 —Հայ՝ ասիր նարդիվան. —Հայ՝ ասիր երթանք լւր.
 «Քոզի ուտես կաջնես դիվան: «Քէ տանեմ մի կեխտոտ խուր:
 —
 —Հայ՝ ասիր էրդիս, —Հայ՝ ասիր երթանք ցախի,
 «Ուտիս հաւի միս: «Սս կոլոնեմ, տիւ խլի փախի:
 —

Բ.

Ուղու նիթայայ գիւղում, ուր չէ կոչում թափմաջա:
 —Ասա՝ իմ հօրանց տան եղը. —Ասա՝ պատի տակին սուր կացին,
 «Մեզ պահապան Սրուէղը (վանք «Փորիդ կտամ էս քացին:
 գիւղի մօտ): —Ասա՝ ապի.
 —
 —Ասա՝ մին, երկու, չորս, «Ջին սարում կապի, յետնէն
 «Թուանքդ առ՝ գնա չորս: տապտապի:
 —
 —Ասա՝ մեծ գէլ, փտիկ աղուէս. «Սս վրայ պրճնեմ, դու կորի:
 «Մեղը ու կարագ մէջը թաղուէս: —
 —
 —Ասա՝ տանուհինդ. —Ասա՝ կիւթան
 «Աչքդ գնեմ երկաթէ լինդ: «Սս եղ ուտեմ դու թան:
 —
 —Ասա՝ յերինջ. —
 —Ասա՝ մեր տան մէջը մի թո- «Սս հաց ուտեմ դու քերինջ
 րոն (թոնդիր) —
 «Թորնի մէջը մի մերոն (ճնի խոզ.) — Ասա՝ մարդ.

«Մարդը բռնեց մի չարթ (կա- չաղակ):

—Ասա՛ մորի.

Արի գլուխս քորի:

—Ասա՛ մարագ.

«Ես սեր ուտեմ, դու կարագ:

—Ասա՛ տասր.

«Ուտես թանով սպասը.

—Ասա՛ քսան.

Պապդ գնաց Խորասան:

—Ասա՛ իրեք.

«Երեսիդ քաշեմ սիրէգ:

—Ասա՛ խոզ.

«Ճակատիդ դնեմ իձի պոզ:

—Ասա՛ դուռը.

«Դու շոր կեր, ես նուռը:

Ասա՛ սապուն.

«Ես քեզ դնեմ հաւաբուն:

—Ասա՛ ձեռքինս դանակ ա.

«Ինչ որ ասեմ հանաք ա:

—Ասա՛ չիւթն ու կիւթան ճաւումն ա.

«Հարսն ու աղջիկ Ուզուլթան-լումն ա:

ԱՐԱԳԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ա.

Ուզուլթալայ.

1

Ուլն ըլաւ ուռի ծառը,
Ուլ պոչոյր ուռ յորրեց.
Ուռի պէս յորրած ուռով
Ուլ ձեռովը դիւռ յորրեց:

2

Ծաի ճուտի նիտը ծուռ:

3

Ըստեղ նօթատուճ,
Ընտեղ ձիթատուճ,
Չալ ծաին չալ ծտաճուտ:

4

Սեռն ի վեր գնամ, սերն ուտեմ,
Յենն ի վեր գնամ, սէրն ուտեմ:

5

Փոկակապ Ակոփ ապի,
Ինձ համար մի փոկ կապի,
Ես քէ ասեմ փոկակապ Ակոփ ապի:

6

Եղդի սախկալ թափան չափիչ:

Բ.

Էրդափին (Գարալաղեաղ).

1

Էրկըթէ էրդսկալ:

2

Ձուկը մուկը մէկ տապակ,
Ձուկը ուտեմ մուկը թալեմ:

Գ.

Ուլիա Նորաշէն (Չարուր).
Տանձ գլղեօրեմ, տանձ ուտեմ,
Բողկ գլղեօրեմ տանձ ուտեմ:

Դ.

Չամախի.
Ճորին էնա ճրին ձորում,
Հայ ճորատէր, հայ ջրատէր,
Ճորուն ճիւլը ճուռել ա:

Ե.

Ալէքսանդրապօլ.

1

Մեր դուռը կայ բանցր, բանցր,
Ծանդր ճանդր տանձի ճառ,
Ձեր դուռն էլ կայ բանցր, բանցր
Ծանդր ճանդր տանձի ճառ:

2

Բեռի, ալի (էլի, կրկին) առ աղ
ալըրէն:

3

Թըրբփ, թըրբփ, փէտի փեթակ
Իրմկի դանակ:

Ա Ղ Օ Թ Ք Ն Ե Ր

Ա.

Վախ բռնելու աղօթք Էրդափինում (Գարալաղեաղ).
Կուսը չերին

Որդի դաբալաբգի,
Հէր կիւսս, հէր կվախնաս.
Ասաց, կլամ, կվախնամ,
Գիշերուայ գիշուլթենէն,
Յերեկուայ փորձուլթենէն:
Ասաց, մի լա, մի վախնա,
Չէ դու խովիւ ես Քրիստոսին,
Գնա եկեղեցին, զիրեն
Ձինջիլ դիր վիզնը գողուն,
Կապա ձեռնը դուռն,
Անօրէն ետե պատին
Թամք գօձուն՝

Չուր գայ բարի լուս Քրիստոսին:
Քրիստոսի գալուս,
Չար խափանոս,
Էկեղեցի պախպանեցի,
Որ պախեցիր տէրնը խաչին,

Գերեզմանը Քրիստոսին,
Մեռած մարմինը մուլթը գիշերին,
Դուռը բացինք անմահութենին,
Մեր Տէրն էրէւէցաւ,
Ձէն սուեց չորս կողմը ցաւ,
Չորս կողմը աշխարհ թնդաց.
Որն արգար էր՝ գա խնդաց,
Որ մեղաւոր, քզուռ (քանդ ուռ)
դողաց.
Մարիամ չոքաւ վըր ուր ճնկան,
Արցունքով գուր ճունկ լուաց,
Ասաց, Տէր, մի տանիր մեղաւորս
մեղաց,
Քու յաւազան ա մկրտած,
Քու խաչին ա դիպուցած:

Բ.

Դարալագեազի Ազատակ զիւզում պառաւ կինը իւր զըլ-
խածածկի (լաչակ) մի ծայրը տալիս է վախեցած երեխայի
ձեռքը, միւսն ինքը բռնած՝ երեք անգամ մօտեցնում է երե-
խայի սրտին և Հետեւալ աղօթքներէց մինն արտասանում:
Կամ բամբակից պատրոյկ է ոլորում երկարութեամբ երեխայի
գօտիկից մինչև նորա քիթը և աղօթելուց յետոյ այրում է նորան:

1

Սուրբ Գանիէլ, մեղաց քեզ,
Բան որ մտաւ նեղ տապան,
Կապեց ինձ. առիւծ,
Գէլը կճաւոր,
Օձը թունաւոր,
Կարիճը խիթաւոր,
Ձին ձիա որ,
Ութը մատով,
Երկու բոթով,
Սողմոնի ձիան ծարով,

Աստուածազնի բաղրիկ կաթով
Կալած կենաս ընդ գալուստ Քր-
րիստոսի:

2

Թագաց հացի հոտ եկաւ,
Քելէք տեսէք դոր էկաւ,
Հետ էկաւ իրեք ձիաւոր,
Մէկն ի կանանչ կապաւոր,
Մէկն Յիսուս, մէկն ի Քրիստոս,
Մէկն ընձանոց Ասուարածին,
Էլաւ սարով, իջաւ ձորով,
Էդ դոր կըթաք խաղար բարով.
Կէթան գուռն ի չերին,
Մարիամ նստեց զէմ խաչաքարին.
Աստուած տուեց Յիսուսի որդին,
Էլ չվախենայ սիրտն ի փորին.

Քինջիլ թալի բոլոր պատին:

3

Մեր տէրը մէ խուր,
Տեղիկը մսուր,
Հացիկը գարի,
Թանիկը թթու,
Քթելը պոչատ,
Մարդիկը պարի,
Կնիկը չարի,
Յիսուս Քրիստոս Աստուած:

4

Յոյս ունիմ յուսիս.
Ասուած ունիմ մտիս.
Աճամէր զէմ երեսիս.
Գաբբէլ խրեշտակ վըր աչ թևիս
Ոչ վախենամ, ոչ զարգնդիմ,
Ունչու գալուստն Քրիստոսի:

5

Ուսին ուսին
Ջսուրբ կուսին,
Ընկոյ էկաւ Քրիստոս որդին.
Խրեղէն խաչը վըր թևին.
Երեք բևեռ կար վըր խաչին:
Մէկը սիրտն ի սատանային,
Մէկն ամէն չար խախանի,
Մէկը չվախենայ սիրտն ի փորին:

Գ.

Ալէքսանդրապօլում նորածնունդ մանկան փաթեթելուց
յետոյ տատմայրն առնում է նորան իւր գիրկը և թուրը կամ
թաթակիշը ձեռքն առած, կամ երեխայի վերայ մի հաց-լա-
ւաշ սփռած, տանում է դուրս և զէմքը զէպի արևելք՝
տատմայրը եօթն անգամ տեսառնակնքում է իւր երեսը և յե-
տոյ արտասանում է այս աղօթքը:

1

Երկիր աշխարին խաղաղութէն, Կապելոց արձակութէն,
Թագաւորաց հաշտութէն, Ամենան փափագ լիութէն,
Քրիստոնէից ապատութէն, Մենձերուն արքայութէն,
Ծախորթութան մարդկանց աջո- Ջահլիներուն արևշատութէն:
ղութէն,
Սորան կրկնում է տուն մտնելիս և ապա երրորդ անգամ
մանկամօր առաջ կանգնած:

2

Վերոյիշեալ աղօթքից անմիջապէս յետոյ տատմայրը ասում
է Հետեւալը:
Պօղոս Պետրոս, ուր կերթաս, Տէր մեր Յիսուս Քրիստոս:
Դուռը կերթամ հիւնդի, Էս տունը տուն է,
Էրդիկ կերթամ ճնրդկանի, Քրիստոս մէջը քուն է,
Ոչ վախենայ սիրտը փորին. Կաւազանը դռան փաղիչ,
Օսկուր տեղը չթնգայ, Սուռչալը էրդեց ճածկոց,
Իսն էկաւ Խուս որդին, Տէր մեր Խուս Քրիստոս,
Սուռչալեցին Քրիստոսին. Աստրճոյ աչը, Քրիստոսայ խաչը.
Հէրն աչեց, որդին խաչեց, Վրէն եղնի, ամէն:

3

Ընդունելով որ իբրև թէ Հրեշտակները մանուկ Քրիստո-
սին բերել տուել են սուրբ կոյս Մարիամին և ասել են ստորև
յիշեալ խօսքերը, Ալէքսանդրապօլում տատմայրը այդ խօսքերը
հարց ու պատասխանով երեք անգամ կրկնում է և իւրաքան-
չիւր կրկնութեան ժամանակ մանկանը զիպցնում է մօր ծնկներին:
— Մարիամ, ես եմ ծանգր թէ դու. հարցնում է տատմայրը.
«Տու ծանգր, ես թեթև. պատասխանում է մայրը:

4

Անդրանիկ ծննդի ժամանակ նոր ազատուած կնոջ փորի ցաւը կտրելու համար՝ տատմայրը թուրը աջ ձեռքով եօթն անգամ մանգաղի նման անց է կացնում իւր ձախ ձեռքի տակով՝ կնոջ փորի վերայ և ամէն մի անցկացնելու ժամանակ հարց և պատասխանով ասում է հետևեալը:

— Ահան, ես կքաղեմ.

«Ի՞նչ կքաղես.

— Հեղինէի (ազատուածի անունը) սանջուն կքաղեմ:

Դ.

Ա Ղ Օ Թ Ք

Վախ չափելու համար:

Թաւրիզից գաղթած հայերի մէջ պառաւ կանայք երեկայի վախը չափելու ժամանակ, տէրունական աղօթքից յետոյ ասում են հետևեալը:

Եկաւ, եկաւ երեք ձիաւոր,
Մէկը Իսոս, մէկ Քրիստոս,
Մէկը մայր Աստուածածին,
Ելաւ սարով, էջաւ ձորով,
Ուր էս էթում,
Դուռը խիւանդին,
Մի վախացիր սերտը փորին,
Ժնջել (շղթայ) քցեմ բարձր բոլոր,
Տէր (մինչև) դատաստանը գալը.
Բարեխօս մայր Աստածածին,
Թաթոս առաքել,
Օհանէս Մկրիչ
Զօրաւոր սուրբ Գէորգ,

Զօրաւոր սուրբ Սարգիս,
Օգնական պախապան ըլէս,
Տասներկու առաքել,
Օգնական պախապան ըլէս.
Չարից, փորձանքից ազատես,
Աստած օղորմի Գրիգոր լուսաւորչաց ասկին,
Աստած օղորմի Կողանդայ թագաւորին,
Կուշտը խաչով,
Կուշտը մանիշակով,
Ամէն:

Ե.

Չ Ա Ր Ն Ի Ա Թ

Չարուրի Ուլիա Նորաշէն գիւղում հիւանդ կամ վեր թրուցող երեխային աղօթում են այսպէս: Փոքր ալիւրի խմոր քրտում են հիւանդի մարմնի զանազան մասերին և շինելով նո-

րանից եօթը գնդակ, որ կոչւում է *ԲՅՈՒՍ*, իւրաքանչիւրը մեծ առեղով եօթը տեղ ծակում են և ամէն մի ասեղ դարկելիս ասում են:

Չար աշկը չար փուշ,

Չար նիաթը չար փուշ:

Ապա բոլոր գնդակները ձգում են վառ թոնրի մէջ և եթէ նորանցից մէկն ու մէկը տրաքի, հիւանդի լաւանալու նշան է:

Զ.

«ԳԵՂԵԱՊ» ԱՂՕԹՔ

Ջիրակի չոռոմ գիւղում, որպէս զի դաշտում գիշերը մնացած անասունին գալը չվնասի, անասունի տէրը դիմում է *գէլկապ* անողի օգնութեան: Մաղից հիւսած թոկով աղօթարարը կապում է շէրեփը սիւնին գլուխի վայր և երեք անգամ իւր մտքում կրկնում է հետևեալը:

Պուրբ Սարգսի ձիու ձարով (վզի Գէլ, գէլ, մաղ,
Բերանդ ինչըդ կապեմ,
Ութ մատով, երկու բթով Մայրամ Աստածածնայ կլխու ճամով:

Է.

ԻՒՂՆ ԱՌԱՏԱՅՆԵԼՈՒ ՀԸՆԲ

Ուլիա Նորաշէն գիւղում, ով կամենում է որ իւր կովերի իւղն առատ լինի, Համբարձման նախընթաց երեկոյին, որ կոչւում է *կաթնաւի իրիկու*, նա մի պղուղ առած, լուռ և անձայն, հարցնողին առանց պատասխանելու, գնում է առու և պղուղի բերանը միշտ գէպի առուն բռնած: Պղուղը լցնում է ջրով առուից և գնում է ուղղակի թուրքի հանգըստարան, ուր երեք անգամ ասում է:

Մօլլիա ուհամթ, ինչըմ առ- «Յրանելի մօլլա, մեր տունը հիւր է
դայ դօնաղ գեալըբ.
Եաղըմըդ կուրթուլուբ,
Դուր, բըգայ բիր աղ եաղ վեր: Երանելի մօլլա, մեր տունը
Սյաինքն.

Ը.

ԱՆՁՐԵՒ ԲԵՐԵԼՈՒ ՀՆԱՐ

1


Սպառնալի գաղթականների մէջ երաշտ տարին անձրև
բերելու նպատակով խորտուխլակ են ման ածում, որ նորանցում
կոչում է «Թաքեամ» և դռնէ դուռ պտտցնելով երգում են:


Թաքեամ, Թաքեամ եկել ա,	Բրինձ տուէք փլաւ անենք,
Ձեր դռանը չոքել ա.	Ձու տուէք ձուածեղ անենք,
Եղ տուէք պորտը քսենք,	Ջուր տուէք լողացնենք:

2


Ղափանի գիւղերում անձրև բերելու նպատակով մի կին,
շէրեփը ձեռքում, Թարս նստացնում են իշու վերայ, իշու գը-
լուխը Թանով սպիտակացնում են: Ապա այդ իշու տիկինը ամ-
բոխի հետ շրջակայում է գիւղի մէջ, տնէ տուն և երգում է
հետևեալը:

Գեօղի, գեօղի գեօրդըմի,	Կազմալաղըմ չխարդտըմ,
Գեօղիա սալամ վերդըմի,	Գըզըլ կացսց զիբըննան
Գեօղի գեղաննան տոնդրայ	Գըզըլ գիւնը չխարդտըմ:
Գըզըլ գիւնի գեօրդննի,	





« Ազգային գրադարան



NL0239867

55.371

39

P-22